

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է  
ՀՀ Քաղաքաշինության նախարարի

2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263 - Ն հրամանով

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ  
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ  
ՀՀՇՆ 30-01-2014**

**Գործարկման թվականը**

**I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ**

1. «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը (այսուհետ՝ շինարարական նորմեր) սահմանում են քաղաքաշինական գործունեության հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեություն իրականացնող ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների համար:

2. Սույն շինարարական նորմերով սահմանված պահանջները տարածվում են նոր մշակվող, կամ փոփոխման ենթակա քաղաքաշինական փաստաթղթերի մշակման վրա և նպատակաուղղված են քաղաքաշինական միջոցներով բնակավայրերի անվտանգության ու կայուն զարգացման ապահովմանը, բնակչության առողջության պահպանմանը, բնական պաշարների և շրջակա միջավայրի նպատակահարմար օգտագործմանը, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանը, բնական և տեխնածին բնույթի անբարենպաստ ազդեցություններից տարածքների պաշտպանությանն ու բարեկարգմանը, ինչպես նաև բնակչությանը, այդ թվում նաև սակավաշարժուն խմբերին՝ սոցիալական, մշակութային և կենցաղային սպասարկման օբյեկտներով և ինժեներական ենթակառուցվածքներով ապահովմանը: Բնակավայրերի նախագծման ընթացքում անհրաժեշտ է նախատեսել քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ՝ համաձայն համապատասխան ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջների:

**II. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐ**

3. Սույն շինարարական նորմերում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

- 1) ՀՀՇՆ II-6.01-96 (ՄՍՆ 2-03-01-95) Վտանգավոր բնական ազդեցությունների երկրաֆիզիկա,
- 2) ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր,
- 3) ՀՀՇՆ II-7.01-2011 Շինարարական կլիմայաբանություն,
- 4) ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՍՆ 2.04-05-95) Արհեստական և բնական լուսավորում,
- 5) ՀՀՇՆ II-8.04.02-2005 Շենքերի և կառուցվածքների հրդեհային ավտոմատիկա,
- 6) ՀՀՇՆ III-9.02.02-2003 Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր,
- 7) ՀՀՇՆ IV-11.03.02-2004 (ՄՍՆ 3.02.02-02) Պահեստային շենքեր,
- 8) ՀՀՇՆ IV-11.03.03-2002 (ՄՍՆ 2.02.05-2000) Ավտոկայանատեղեր,
- 9) ՀՀՇՆ IV-11.05.02-99 Ավտոմոբիլային ճանապարհներ,
- 10) ՀՀՇՆ IV-11.05.03-96 (ՄՍՆ 3.03.03-95) Թոփչքարաններ,
- 11) ՀՀՇՆ IV-11.05.04-97 (ՄՍՆ 3.03.07-97) Թունելներ երկաթուղային և ավտոճանապարհային,

- 12) ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02.05-2003) Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար,
- 13) ՀՀՇՆ IV-12.02.01-2004 Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում,
- 14) ՀՀՇՆ IV-12.03.01-2004 Գազաբաշխիչ համակարգեր,
- 15) ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն,
- 16) ՀՀՇՆ 22-04-2014 Պաշտպանություն աղմուկից,
- 17) ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր,
- 18) ՀՀՇՆ 40-01-01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում,
- 19) ՍՆԻՊ 2.01.15-90 Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ,
- 20) ՍՆԻՊ 2.04.02-84\* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ,
- 21) ՍՆԻՊ 2.04.03-85 Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ,
- 22) ՍՆԻՊ 2.04.07-86 Ջերմային ցանցեր,
- 23) ՍՆԻՊ 2.05.03-84\* Կամուրջներ և խողովակներ,
- 24) ՍՆԻՊ 2.05.13-90 Քաղաքների և այլ բնակավայրերի տարածքներով անցկացվող նավթամթերքաուղիներ,
- 25) ՍՆԻՊ 2.06.15-85 Տարածքների ինժեներական պաշտպանությունը ողողումներից և հեղեղներից
- 26) ՍՆԻՊ 2.08.02-89 Հասարակական շենքեր և կառուցվածքներ,
- 27) ՍՆԻՊ 2.10.02-84 Շենքեր և սենքեր գյուղատնտեսական արտադրանքի պահպանման և վերամշակման համար,
- 28) ՍՆԻՊ 2.10.03-84 Շենքեր և սենքեր անասնաբուծական, թռչնաբուծական, գազանաբուծական,
- 29) ՍՆԻՊ 2.10.04-85 Ջերմոցներ,
- 30) ՍՆԻՊ 2.10.05-85 Ձեռնարկություններ, շենքեր և կառուցվածքներ հացահատիկի պահպանման և վերամշակման,
- 31) ՍՆԻՊ 2.11.02-87 Սառնարաններ,
- 32) ՍՆԻՊ 2.11.06-91 Փայտանյութերի պահեստներ. Նախագծման հակահրդեհային նորմեր,
- 33) ՍՆԻՊ 3.05.06-85 Էլեկտրատեխնիկական սարքավորանքներ,
- 34) ՍՆԻՊ II-40-80 Մետրոպոլիտեններ,
- 35) ՍՆԻՊ II-97-76 Գլխավոր հատակագծեր գյուղատնտեսական ձեռնարկությունների,
- 36) ՍՆԻՊ II-106-79 Պահեստներ նավթի և նավթամթերքի. Հակահրդեհային նորմեր,
- 37) ՇՆՁ IV-12.101-2004 Գազաբաշխման համակարգերի նախագծում և շինարարություն,
- 38) ՍՆ 245-71 Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր,
- 39) ՍՆ 452-73 Նորմեր հողահատկացման մայրուղային խողովակաշարերի համար,
- 40) ՍՆ 456-73 Նորմեր հողահատկացման մայրուղային ջրմուղների համար,
- 41) ՍՆ 457-74 Նորմեր հողահատկացման օդանավակայանների համար,
- 42) ՍՆ 461-74 Նորմեր հողահատկացման կապի գծերի համար,
- 43) ՍՆ 465-74 Նորմեր հողահատկացման 0.4-500kB լարման էլեկտրական ցանցերի կառուցվածքների համար,
- 44) ՍՆ 496-77. Հրահանգ մակերեսային ջրերի մաքրման կառուցվածքների նախագծման,
- 45) ՎՍՆ 01-89 Ավտոմոբիլների սպասարկման ձեռնարկություններ,
- 46) ՎՍՆ 62-91\* Հաշմանդամների և ազգաբնակչության սակավաշարժուն խմբերի պահանջմունքների համաձայն կենսագործունեության միջավայրի նախագծում,
- 47) ԳՕՍՍ 20444-85 Աղմուկ. Տրանսպորտային հոսքեր. Աղմկային բնութագրի որոշման մեթոդներ,
- 48) Ռ2-III-U2-1 Սանիտարական կանոններ և նորմեր «Իսմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն», հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 25.12.2002թ. N 876 հրամանով,
- 49) Ռ 2-III-U2-2 Սանիտարական կանոններ և նորմեր «Իսմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ. N803 հրամանով,
- 50) Ռ 2.III.4.2 Սանիտարական կանոններ «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 11.02.2002 թ. N 82 հրամանով,
- 51) Ռ 2.III.1 Սանիտարական նորմեր և կանոններ «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002 թ. N857 հրամանով,
- 52) Ռ 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր. «Ավտոբենզալցակայանների և

ավտոգազալիցքավորման ճնշակայաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» հաստատված ՀՀ Առողջապահության նախարարի 01.10.2010. N21-Ն հրամանով,

53) **N 2-III-11.3** Սանիտարական նորմեր «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002 թ. N138 հրամանով,

54) **N 2.1.7.003-10** Սանիտարական կանոններ և նորմեր «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ», հաստատված ՀՀ Առողջապահության նախարարի 25.01.2010թ. N01-Ն հրամանով,

55) **N2.1.8-010-06** Սանիտարական կանոններ և նորմեր «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (Ռ-ՀԷՄՃ) », հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 16.08.2006թ. N 933-Ն հրամանով,

56) **N 2.1.7.002-09** Սանիտարական կանոններ և նորմեր «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասագերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ», հաստատված ՀՀ Առողջապահության նախարարի 22.12.2009թ. N25-Ն հրամանով,

57) **N 2.2.4-009-06** Հիգիենիկ նորմեր «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի)», հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006 թ. N533-Ն հրամանով,

58) **N 1219-Ն** «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» 18.08.2006 ՀՀ կառավարության որոշումը,

59) **ԳՕՍՍ 23961-80** Մետրոպոլիտեններ. Շինությունների, սարքավորանքի և շարժակազմի մերձակայության եզրաչափքեր,

60) ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ԽՍՀ ջրամբարների ջրապահպան գոտիների (շերտերի) կանոնադրությունը հաստատելու մասին» N 648 որոշումը,

61) ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշումը,

62) ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 21-ի ««Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշումը,

63) ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 1318-Ն որոշումը:

### III. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

4.Սույն շինարարական նորմերում օգտագործված են հետևյալ հասկացությունները՝ դրանց համապատասխան սահմանումներով.

1) **այգի (պարտեզ)**՝ վայրի և մշակովի մրգատու ու հատապտղային ծառերով, թփերով, ծաղիկներով և այլ բույսերով ծածկված տարածք, որն ստեղծվում է բույսերի տարբեր համակցումներից: Կարող է ստեղծվել նաև որպես գեղագիտական արժեք ներկայացնող ինքնուրույն արհեստական լանդշաֆտ և ունենալ ռեկրեացիոն նշանակություն,

2) **անհատական կառուցապատման գոտի՝** տարածք, որը զբաղեցված է տնամերձ հողամասեր ունեցող առավելագույն սակավահարկ մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի տներով և տնտեսական կառույցներով,

3) **ավտոկայանատեղեր (ավտոկանգառատեղեր)**՝ ավտոմոբիլների կայանման կամ պահպանման համար նախատեսված բաց հարթակներ, շենքեր և շինություններ, որոնք չունեն ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման սարքավորումներ, բացառությամբ պարզագույնների՝ ավտոլվացում, դիտահորեր, էստակադներ (ուղեկամուրջներ),

4) **ավտոտնակներ՝** ավտոմոբիլների երկարատև պահպանման, կայանման համար նախատեսված

շենքեր կամ ոչ հիմնական շինություններ,

5) **բաժանիչ գոտի՝** բազմաշերտ ճանապարհների՝ հանդիպակաց ուղղությամբ երթևեկելի մասերն առաձնացնող գոտի,

6) **բաց տարածք՝** կենսամիջավայրի բարենպաստ պայմանների ապահովմանը միտված, կառուցապատումից ազատ տարածքներ (հրապարակներ, զբոսայգիներ, պուրակներ, բնական ջրային մակերեսներ և այլն),

7) **բլոկավորված (կցաշար) բնակելի շենքեր՝** երեք հարկից ոչ ավելի հարկայնությամբ բնակելի տներ, որոնք բաղկացած են մի քանի տներից, որոնց քանակը չի գերազանցում 10-ը և որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է մեկ ընտանիքի բնակության համար, ունի առանց բացվածքների ընդհանուր պատեր հարևան տների հետ, տեղակայված է առանձին հողամասի վրա և ունի ելք դեպի ընդհանուր օգտագործման տարածք,

8) **բնակելի կառուցապատում՝** հորինվածքով միավորված բնակելի շենքերի խումբ՝ մեկ ընդհանուր տարածքի վրա, որտեղ տեղադրված են նաև ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ և սպասարկման օբյեկտներ,

9) **բնակչության խտություն՝** ցուցանիշ, որն արտահայտում է բնակիչների թվաքանակը մեկ միավոր տարածքի վրա, մարդ /հա,

10) **գործառնական գոտի՝** քաղաքաշինական համակարգի տարածքային տարր, որը բնութագրվում է դրա վրա տեղադրված նույնատիպ քաղաքաշինական կամ բնական բաղադրիչներով,

11) **գործառնական գոտիավորում՝** բնակելի, հասարակական, արտադրական շենքերով և համալիրներով, ընդհանուր օգտագործման տարածքներով ու բացօթյա հանգստավայրերով, տրանսպորտային և ինժեներական շինություններով կառուցապատված բնակավայրի տարածքի մասերի առանձնացում ըստ դրանց գործառնական գերիշող հատկանիշների,

12) **դենդրոլոգիական (ծառագիտական) պարկեր՝** բուսաբանական այգիների սահմաններում կազմավորված, գիտական, ուսումնական, մշակութայնության և մշակութային նշանակություն ունեցող, աշխարհագրական, էկոլոգիական, դեկորատիվ կամ այլ նշանակությամբ համակարգված, կենսաբազմազանության պահպանման և տեսականու հարստացման նպատակով բաց գրունտի վրա ծառաթփային (ծառեր, թփեր, բաղեղավորներ) բուսատեսակների հավաքածուների ստեղծման համար հատկացված տարածքի հատված, որը նախատեսված է նաև հասարակության սահմանափակ հաճախումների համար,

13) **երթևեկության անցուղարձ (ինտենսիվություն)՝** միավոր ժամանակահատվածում (օր, ժամ) ճանապարհի որևէ կտրվածքում հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը,

14) **զբոսայգի (պարկ)՝** կանաչապատ տարածք՝ ռեկերացիոն գործունեության տեսակների սահմանափակ կազմով, նախատեսված առավելապես զբոսանքի և բնակչության ամենօրյա խաղաղ հանգստի համար (վերակառուցման պայմաններում՝ ըստ գոյություն ունեցող քաղաքաշինական իրավիճակի),

15) **կանաչապատման համակարգ՝** քաղաքային և գյուղական բնակավայրերում կանաչ տարածքների կազմակերպված տեղաբաշխումը, որը նախատեսվում է համայնքի գլխավոր հատակագծով, հաշվի առնելով բնակավայրի հատակագծային կառուցվածքը և բնակչության մշակութային ցաղային սպասարկման պայմանները,

16) **կարմիր գիծ՝** շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանում է նաև փողոցների, ներառյալ մայրերի լայնությունը,

17) **հետիոտն գոտի՝** հետիոտների տեղաշարժման համար նախատեսված տարածք, որտեղ արգելվում է տրանսպորտի շարժումը՝ բացառությամբ այդ տարածքները սպասարկող հատուկ սպասարկող տրանսպորտի,

18) **հողմհակառակ՝** գերակշիռ քամիների ուղղությանը հակառակ ուղղությամբ,

19) **ճարտարապետական նշանակության արժեքավոր տարածք՝** բնական պայմանների և ճարտարապետական ձևերի համակցություն, որը նախապայման է ստեղծում մարդու տնտեսական ու կենցաղային գործունեության համար և ազդում է մարդու վրա՝ որպես հանրակենսաբանական էակի,

20) **ճեմելիք (բուվար, լայն ծառուղի)՝** կանաչ գոտի մարդաշատ և հետիոտն մեծ շարժում ունեցող լայնաձիգ փողոցներում, որը կարող է կազմակերպվել երթևեկելի մասի միջնամասում, երթևեկելի մասի և մայրի միջև, իսկ լայնահուն փողոցներում՝ երթևեկելի մասի երկու կողմերից, որը նախատեսվում է հետիոտն շարժման և մարդկանց կարճատև հանգստի համար,

21) **մայրուղային ճանապարհ (փողոց)՝** քաղաքային տրանսպորտի հիմնական ուղիներ,

22) **մատչելիության շառավիղ՝** հեռավորություն ու ժամանակ բնորոշող ցուցանիշ, որի

սահմաններում բնակչությանը մատչելի է այս կամ այն օբյեկտը՝ արտահայտված համապատասխանաբար մետրերով և կիլոմետրերով կամ րոպեներով և ժամերով,

23) **միկրոկլիմա՝** ընդարձակ կլիմայական գոտու տարածքում ոչ մեծ տարածքի կլիմա՝ որն ունենալով կլիմայական գոտու հիմնական բնութագրերը, տարբերվում է միայն իրեն բնորոշ հատկություններով, պայմանավորված տեղանքի առանձնահատկություններով (ռելիեֆ, անտառներ, ջրավազաններ, ճահիճներ, քամուց պաշտպանված լեռնալանջեր և այլն): Քաղաքային տարածքներում միկրոկլիմա կառող է ստեղծվել նաև քաղաքաշինական միջոցներով՝ շենքերի դասավորվածության, կանաչ զանգվածների, քամուց պաշտպանող ծառաշերտերի, արհեստական ջրավազանների, շատրվանների և այլնի միջոցով,

24) **պատմական կառուցապատման ձևակերպ (մորֆոտիպ)՝** պատմականորեն ձևավորված միասնական քաղաքաշինական միջավայր, որն առանձնանում է տարածքի կազմակերպման, հարկայնության, ոճայնության, գունային և այլ ընդհանրականությամբ,

25) **պատմական կառուցապատման գոտի (միջավայր)՝** բնակավայրի պատմամշակութային արժեք հանդիսացող կառուցապատման ամբողջական տարածք, որը ձևավորվել է պատմական որոշակի ժամանակաշրջանում և առանձնանում է հորինվածքային ու գործառական իր ուրույն չափորոշիչներով ու մշակութային արժեհամակարգով,

26) **պարագծային կառուցապատում՝** քաղաքային կառուցապատման տեսակ, որը բնորոշվում է փողոցների կարմիր գծերի երկայնքով դասավորված թաղամասը պարփակող բնակելի տներով,

27) **պուրակ (զբոսապուրակ)՝** փոքր չափերի հասարակական զբոսայգի կամ այգի, որը տեղադրվում է քաղաքի հրապարակներին կամ փողոցներին կից՝ մինչև 2 հա մակերեսով կոմպակտ, բարեկարգված կանաչապատ տարածք՝ նախատեսված բնակչության ամենօրյա կարճատև հանգստի և միջանցիկ շարժման համար:

28) **վերակառուցում՝** շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր, ուղղված՝ շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը, փողոցների, հրապարակների, քաղաքի հատակագծային կառուցվածքի վերափոխմանը, նորացմանը, որոնցով պահպանվում են պատմականորեն կազմավորված տարրերը, շենքերի կերպարը, քաղաքային միջավայրի բնույթը,

29) **Ֆոնային կառուցապատում՝** կառուցապատում, որի ճարտարապետական լուծումները և բարձրությունը չեզոք են տվյալ տարածքում առկա մշակութային ժառանգության օբյեկտների ու դոմինանտների նկատմամբ և որն ապահովում է դրանց ընկալման բարենպաստ պայմանները:

30) **Սույն շինարարական նորմերով օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են**

«Քաղաքաշինության մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և իրավական ակտերի իմաստով:

#### **IV. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ**

5. Բնակավայրերի նախագծման և կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ նորմատիվ-իրավական ակտերով՝ հիմք ընդունելով գործող տարածական պլանավորման փաստաթղթերի հիմնադրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված քաղաքաշինության և տարածական պլանավորման բնագավառում տարածքների կայուն զարգացման միջազգային սկզբունքները:

6. Համայնքի տարածական զարգացման հեռանկարը և օգտագործման արդյունավետ հաջորդականությունը նախատեսվում են համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծով, ընդ որում, համայնքի զարգացման հեռանկարները պետք է կանխորոշվեն ինչպես հաշվարկային ժամկետի համար, այնպես էլ դրանից հետո: Գլխավոր հատակագիծը մշակվում է 15 տարվա հեռանկարով, իսկ քաղաքաշինական կանխատեսումը կարող է ընդգրկել 20-30 տարի: Գլխավոր հատակագծերի դրույթները հաշվարկային ժամկետում մանրամասնվում և իրականացվում են բնակավայրերի տարածքների քաղաքաշինական գոտիավորման նախագծերով:

7. Բնակավայրերը՝ կախված զարգացման հեռանկարային ժամկետում բնակչության նախագծային հաշվարկային թվից, դասակարգվում են խմբերի՝ համաձայն սույն շինարարական նորմերի 1-ին աղյուսակի:

Աղյուսակ 1

Հ/Հ	Բնակավայրերի խմբերը	Բնակչությունը, հազար մարդ	
		Քաղաքային բնակավայրեր	Գյուղական բնակավայրեր
1.	Խոշորագույն	500 - ից ավելի	5-ից ավելի
2.	Խոշոր	250 - 500	3- 5
3.	Մեծ	100 - 250	1-3
4.	Միջին	50 - 100	0,2- 1
5.	Փոքր	20 - 50 10 - 20	0,05-0,2 մինչև 0,05

8. Բնակավայրերի բնակչության հաշվարկային քանակն անհրաժեշտ է որոշել տարաբնակեցման համակարգում բնակավայրի հեռանկարային զարգացման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, հաշվի առնելով՝ տարածքային հնարավորությունները, ժողովրդագրական կանխատեսումները և հանրապետության զարգացման ընդհանուր միտումները:

9. Բնակավայրերի հեռանկարային զարգացումը պետք է նախատեսվի գլխավոր հատակագծի նախագծերում, մարզերի տարածքային հատակագծման ուրվագծերի և նախագծերի հիման վրա (առկայության դեպքում), հաշվի առնելով՝ տարածաշրջանային առանձնահատկությունները, բնական ռեսուրսները, ինժեներատրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման և զարգացման հնարավորությունները:

10. Բնակավայրերի զարգացման համար տարածքն անհրաժեշտ է ընտրել, հաշվի առնելով դրա արդյունավետ գործառական օգտագործման հնարավորությունը, հիմնվելով տարածական պլանավորման լուծումների տարբերակների և դրանց հետ կապված տեխնիկատնտեսական ցուցանիշների ու սանիտարական նորմերի և կանոնների, ջրային, տարածքային ռեսուրսների (պաշարների), շրջակա միջավայրի առկա վիճակի և առանձնահատկությունների վրա, հաշվի առնելով նաև բնական կամ այլ պայմանների հեռանկարային փոփոխությունների կանխատեսումները: Ընդ որում, հարկ է հաշվի առնել շրջակա բնական միջավայրի վրա սահմանային թույլատրելի բեռնվածությունը՝ բնակչության համար առավել բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման, բնական էկոհամակարգերի կայունության խախտումը կամ շրջակա միջավայրում այլ անդառնալի փոփոխությունների առաջացումը բացառելու նպատակով:

11. Համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերում հեռանկարային զարգացման տարածքներն ընտրելիս պետք է հաշվի առնել գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողերի պահպանման անհրաժեշտությունը, բնապահպանական սահմանափակումները, միաժամանակ ապահովելով՝ տարածքների օգտագործման անվտանգությունն ու արդյունավետության բարձրացումը, համայնքների, սեփականատերերի, և այլ հողօգտագործողների իրավունքների ու շահերի փոխադարձ համադրումն ու համաձայնեցումը:

**V. ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

12. Համայնքի վարչական սահմաններում ՀՀ հողային օրենսդրությամբ սահմանված հողային ֆոնդի կազմում առկա բոլոր հողատեսքերը գոտիավորվում և քաղաքաշինական նպատակներով օգտագործվում են համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերով, բնակավայրերի տարածքների

գոտիավորման նախագծերով և այլ քաղաքաշինական և հողաշինարարական փաստաթղթերով սահմանված նպատակներին և հերթականությանը համապատասխան: Հիմնական և օժանդակ գոտիները, տարածքներում կառուցապատման չափորոշիչները, թույլատրելի օգտագործումների ձևերը և սահմանափակումներն ամրագրվում են գոտիավորման նախագծերում՝ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

13. Գոտիների սահմանները որոշվում են հաշվի առնելով՝

- 1) բնակավայրի հատակագծային կառուցվածքը և բնական արգելքները,
- 2) առկա հողօգտագործումները և տարածքի հեռանկարային զարգացման խնդիրները,
- 3) համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված հողերի նպատակային նշանակությունները:

14. Գոտիներում տարածքների թույլատրելի օգտագործման տեսակները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել առկա քաղաքաշինական, պատմամշակութային, բնապահպանական, սանիտարական, բնական և տեխնածին վտանգներից այդ տարածքների պաշտպանությամբ պայմանավորված, ինչպես նաև այլ բնույթի սահմանափակումները, մասնավորապես՝ քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների, օգտակար հանածոների տեղաբաշխման (երևակումների) գոտիների, պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնության հատուկ պահպանվող, բնական և տեխնածին բնույթի անբարենպաստ ազդեցություններով տարածքների առկայությամբ, ինչպես նաև տարբեր օբյեկտների սանիտարապաշտպանիչ, անվտանգության, օտարման, պահպանական գոտիների առանձնացմամբ:

15. Քաղաքաշինական, պատմամշակութային, բնապահպանական, սանիտարական, բնական և տեխնածին վտանգներից տարածքների պաշտպանության, ինչպես նաև այլ սահմանափակումների հաշվառմամբ սահմանվող հատուկ գոտիների սահմանները կարող են չհամընկնել գործառական գոտիների սահմանների հետ:

16. Բնակավայրերի հատակագծային կառուցվածքը պետք է ձևավորել, ապահովելով.

- 1) տարածքների կառուցվածքային տարանջատումը՝ պահպանելով հասարակական կենտրոնների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների փոխկապակցվածությունը,
- 2) գոտիների կոմպակտ տեղաբաշխումն ու փոխկապակցվածությունը՝ հաշվի առնելով դրանց թույլատրելի համատեղելիությունը, կառուցապատման թույլատրելի խտությունը, հողամասերի չափերը,
- 3) տարածքների արդյունավետ օգտագործումը, ճարտարապետական ու քաղաքաշինական ավանդույթների, բնակլիմայական, պատմամշակութային, ազգագրական և այլ տեղական առանձնահատկությունների համալիրը,
- 4) կենսագործունեության համակարգերի արդյունավետ զարգացումը, վառելիքաէներգետիկ և ջրային պաշարների տնտեսումը (խնայումը),
- 5) շրջակա միջավայրի, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը,
- 6) ընդերքի պահպանությունը և բնական պաշարների արդյունավետ օգտագործումը,
- 7) սոցիալական, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար անարգել մատչելիության պայմանները՝ համաձայն համապատասխան նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների:

17. Պատմամշակութային հուշարձանների, պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի, շինությունների, թաղամասերի առկայության դեպքում, որպես անհրաժեշտ պայման, պետք է առանձնացվեն պատմական կառուցապատման գոտիները, սահմանվեն դրանց պահպանմանն ուղղված հատուկ ռեժիմները:

18. Բնակավայրի տարածքի կազմակերպումն անհրաժեշտ է նախատեսել համայնքների կամ համայնքային միավորումների (խմբերի) միասնական հատակագծային և գործառական կապերի կազմակերպման հետ փոխկապակցված՝ հաշվի առնելով առանձին համայնքների շահերը:

19. Քաղաքային բնակավայրերում՝ տարածքների խնայողության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է նախատեսել ստորգետնյա տարածքների համալիր օգտագործում՝ տրանսպորտի կառուցվածքների, առևտրի, հասարակական սննդի, կոմունալ-կենցաղային սպասարկման հաստատությունների և այլ կառուցվածքների, ինժեներատեխնիկական սարքավորումների, տարբեր նշանակության արտադրական և կոմունալ-պահեստային օբյեկտների տեղակայման համար՝

ապահովելով նման տիպի կառույցներին ներկայացվող սանիտարական, բնապահապանական, հակահրդեհային պահանջները: Ըստ գոտիների թույլատրված օգտագործումների (կառուցապատումների) ստորգետնյա տարածքներ կարող են նախատեսվել բոլոր գոտիներում՝ ելնելով հնժեներաերկրաբանական պայմանների հնարավորություններից:

20. Կախված քաղաքի մեծությունից, պատմականորեն ձևավորված և հեռանկարային կառուցապատման բնույթից, քաղաքի տարբեր հատվածներում ցերեկային ժամերին բնակչության խտությունից, ավտոմոբիլացման հաշվարկային մակարդակից, բնակլիմայական, հնժեներաերկրաբանական և այլ պայմաններից, գլխավոր հատակագծում և գոտիավորման նախագծերում առանձնացվում են ստորգետնյա տարածքների օգտագործման տարբեր աստիճանի իրականացման հաջորդականության գոտիներ:

21. Բնակավայրերում կարող են նախատեսվել պահուստավորման տարածքներ, որոնց օգտագործման նպատակը գլխավոր հատակագծի գործողության ժամկետում որոշված չէ, և որոնք կարող են օգտագործվել հնժեներատրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման, արտակարգ իրավիճակներում՝ հրատապ միջոցառումների իրականացման, վառելիքաէներգետիկ պաշարների պահուստավորման համար:

22. Գերեզմանոցների, կոմունալ և արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիների, գծային օբյեկտների անվտանգության, ջրային կամ պաշտպանական (պահպանական) այլ գոտիների, ինչպես նաև հնժեներաերկրաբանական բարդ պայմաններով և սեյսմիկ վտանգի բարձր մակարդակով տարածքներն արտացոլվում են գլխավոր հատակագծի կազմում մշակվող ռիսկերի և սահմանափակումների քարտեզի վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Գոտիավորման նախագծով սահմանված թույլատրելի օգտագործմանը (կառուցապատմանը) չհամապատասխանող տարածքներում քաղաքաշինական գործունեությունը կարող է իրականացվել միայն այդ անհամապատասխանությունը նվազեցնելու կամ վերացնելու պայմանով:

23. Ինժեներաերկրաբանական բարդ պայմաններով և սեյսմիկ վտանգի բարձր մակարդակով բնակավայրերում անհրաժեշտ է նախատեսել հրդեհապայթածությունից և բնակչության մեծ կուտակումներով օբյեկտների տարանջատված տեղաբաշխում, կենսապահովման, էներգամատակարարման և արտաքին ենթակառուցվածքների օբյեկտների պահուստավորում և կրկնակում՝ հնարավորինս պահպանելով առանձին տարածքների և գոտիների ինքնաբավությունը և միմյանց հետ փոխկապվածությունը:

24. Բնակավայրերի գոտիավորումը և հատակագծային կազմակերպումը պետք է կատարել հնժեներաերկրաբանական հետազոտությունների և սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզի տվյալների հիման վրա, հաշվի առնելով սեյսմիկ ռիսկի առավելագույն նվազեցումը և քաղաքաշինական համակարգերի կայունության ապահովումը՝ ՀՀՇՆ II-6.02 շինարարական նորմերի պահանջների համաձայն: Սեյսմիկ ռիսկի բարձր մակարդակ ունեցող գոտիներում գերազանցապես պետք է տեղակայվեն զբոսայգիներ, այգիներ, բաց մարզահրապարակներ, կառուցապատումից ազատ տարրեր, իսկ կառուցապատումը նախատեսել հնժեներական նախապատրաստման, շենքերի և շինությունների կառուցման և շահագործման համար նվազագույն ծախսեր պահանջող, գրունտի հորիզոնական նվազագույն արագացմամբ, տարածքներում: Այն շրջաններում, որոնք ենթակա են բնական և տեխնածին վտանգավոր գործոնների ազդեցությանը տարածքների գոտիավորման ժամանակ պետք է զերծ մնալ մարդկանց մեծաքանակ և երկարատև կուտակումներով շենքերի ու շինությունների տեղակայումից: Արդյունաբերական և այլ օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիների օգտագործման ռեժիմը սահմանվում է սույն շինարարական նորմերի, սանիտարական նորմերի և կանոնների և այլ իրավական ակտերի պահանջների համաձայն:

25. Բնակավայրերի ռադիոակտիվ աղտոտման ենթարկված շրջանների տարածքներում գոտիավորման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել այդ տարածքների օգտագործման ռեժիմի աստիճանական, փուլային փոփոխումը՝ հողածածկույթի և անշարժ գույքի օբյեկտների ապաստարանական անհրաժեշտ միջոցառումների անցկացումից հետո:

26. Գլխավոր հատակագծերի նախագծերում բնակավայրերին հարող տարածքներում պետք է նախատեսել քաղաքի ազդեցության (մերձքաղաքային) գոտի՝ որպես պահուստ քաղաքի տնտեսական սպասարկման օբյեկտների տեղակայման համար (ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման համար), որտեղ կազմակերպվում են համայնքի հիմնական փոխադարձ գործառական, հնժեներական, տրանսպորտային և հատակագծային կապերը շրջապատի հետ: Նշված գոտիները կարող են ընդգրկել բնակչության հանգստի կազմակերպման, միկրոկլիմայի, սանիտարարական պայմանների, մթնոլորտի վիճակի բարելավման համար առանձնացված կանաչ



տարածքները:

27. Տարաբնակեցման խմբային համակարգերի կազմում ընդգրկված քաղաքների համար պետք է նախատեսել ընդհանուր մերձքաղաքային գոտի:

28. Ամառանոցային գոտիների տարածքները պետք է տեղաբաշխվեն հաշվի առնելով քաղաքային և գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացումը, անհատական բնակելի կառուցապատման համար պահուստավորված տարածքների սահմաններից դուրս, բնակության հիմնական վայրերից տրանսպորտային բարենպաստ մատչելիության գոտում:

29. Սահմանային գոտու և սահմանամերձ տարածաշրջանների տարածքային կազմակերպման ծրագրերում, համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերում առաջնահերթության կարգով պետք է ապահովվեն.

1) տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կրկնակված ցանցերի ստեղծումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջբնակավայրային կապերի ամրապնդմանը և տարհանման ելքերի նախատեսմանը,

2) սահմանային շերտի բնակավայրերի զարգացման համար տեղական նշանակության ճանապարհների ցանցի նպատակահարմար և անվտանգ տեղաբաշխումը,

3) տեղանքի բնական պաշտպանական առանձնահատկությունների առավելագույն օգտագործումը,

4) պաշտպանական նպատակներով կանաչապատ տարածքների օգտագործումը և նորերի ստեղծումը,

5) կառուցապատման հատուկ ձևերի կիրառումը՝ կառույցների հուսալիության ցուցանիշների բարձրացմամբ:

**VI. ԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾՔ**

30. Բնակեցման (բնակվելու) տարածքը նախատեսվում է բնակչության համար հարմարավետ, առողջ և անվտանգ կենսամիջավայր ձևավորելու նպատակով, բնակելի և հասարակական նշանակության շենքերի, ներքաղաքային հաղորդակցուղիների, փողոցների, բաց տարածքների (հրապարակներ, զբոսայգիներ, այգիներ, պուրակներ և այլն), ամառանոցային և այլ տարածքների օբյեկտների համար: Վերը նշված օբյեկտների տարածքները, ըստ գործառական նշանակության դասակարգվում են՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման և այլ հողերի:

31. Բնակեցման տարածքի չափերի նախնական հաշվարկների համար պետք է հիմք ընդունվեն սույն շինարարական նորմերի 2-րդ աղյուսակում ներկայացված խոշորացված ցուցանիշները:

Աղյուսակ 2

Հ/Հ	Հարկայնությունը	Տարածքը՝ 1000 մարդու հաշվարկով ոչ պակաս, հա
1.	Մինչև 3 հարկ միջին հարկայնությամբ առանց տնամերձ և բնակարանամերձ հողամասերի բնակելի կառուցապատում	10
2.	Մինչև 3 հարկ միջին հարկայնությամբ տնամերձ և բնակարանամերձ հողամասերով բնակելի կառուցապատում	20
3.	4-8 հարկ	8
4.	9 և ավելի հարկայնությամբ	7
5.	Գյուղական բնակավայրերում առավելապես անհատական բնակելի տներով կառուցապատում	40

32. Բնակեցման տարածքի հատակագծային կառուցվածքը պետք է ձևավորել կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան՝ ապահովելով բնակելի կառուցապատման, հասարակական նշանակության շենքերի և շինությունների, ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների, մարդատար ավտոմեքենաների ավտոտնակների և ավտոկայանատեղերի, պաշտամունքային օբյեկտների, ճանապարհափողոցային ցանցի փոխկապակցված դասավորվածությունը:

33. Բնակեցման գոտիները չպետք է հատվեն միջպետական և հանրապետական նշանակության, ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների երթևեկության համար նախատեսված ճանապարհներով: Նշված դրույթի անհնարինության դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել սույն շինարարական նորմերի

271, 273 և 274-րդ կետերի պահանջներով:

34. Գյուղական բնակավայրերի բնակեցման տարածքների հատակագծային կազմակերպումը պետք է ապահովվի արտադրական օբյեկտների տեղաբաշխման հետ փոխկապակցված՝ պահպանելով փոխադարձ համատեղելիության պահանջները:

35. Գյուղական բնակավայրերում հարկավոր է նախատեսել գլխավորապես տնամերձ հողամասերով անհատական բնակելի տներ, թույլատրվում է նաև բազմաբնակարան սակավահարկ, բլոկավորված տնամերձ կամ բնակարանամերձ հողամասերով բնակելի շենքեր:

36. Գյուղական բնակավայրերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների ընտանի կենդանիների և թռչունների համար նախատեսված տնտեսական կառույցներն առանձնացվում և տեղակայվում են բնակելի գոտուց դուրս:

37. Անհատական կառուցապատման գոտիներում պետք է նախատեսել ընդհանուր օգտագործման բարեկարգվող ու կանաչապատվող տարածքներ, սոցիալական, տրանսպորտային, ինժեներական սարքավորումների և ամենօրյա սպասարկման օբյեկտներ:

38. Համայնքի սահմաններում տեղակայված ամառանոցային կառուցապատման տարածքները դասվում են բնակեցման տարածքի անհատական կառուցապատման գոտիների թվին:

**VII. ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ**

39. Բնակելի կառուցապատման գոտիների նախագծման ժամանակ առանձնացվում են բնակեցման տարածքի կառուցվածքային կազմակերպման հետևյալ հիմնական մակարդակները.

1) Բնակելի շրջան՝ բնակեցման տարածքի 250 հա-ից ոչ ավելի մակերեսով ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմնական տարր, որը ձևավորվում է որպես տարածահատակագծային և հորինվածքային միասնություն՝

ա. բնակելի շրջանների տարածքներն միմյանցից առանձնանում են մայրուղիներով, բնական և արհեստական (գետեր, ջրանցքներ, ջրամբարներ, կանաչապատ զանգվածներ, երկաթուղիներ) սահմանազատումներով: Բնակելի շրջանի սահմաններում տեղակայված հաստատությունների սպասարկման շառավիղները չպետք է գերազանցեն 1500 մետրը,

բ. գոյություն ունեցող կառուցապատման սահմաններում (վերակառուցման պայմաններում) ստեղծվող բնակելի շրջանների սահմանները որոշվում են հաշվի առնելով տարածքի քաղաքաշինական բնութագրերը,

գ. բնակելի շրջանի տարածքի բնակչության հաշվարկային խտությունը, մարդ/հա, պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 3-րդ աղյուսակում տրված ցուցանիշից ոչ պակաս: Տարածքի քաղաքաշինական տարբեր աստիճանի արժեքավորության գոտիների քանակը և դրանց սահմանները որոշվում են հաշվի առնելով հողի արժեքի գնահատականները, ինժեներական և տրանսպորտային մայրուղային ցանցերի խտությունը, հասարակական նշանակության օբյեկտներով հագեցվածությունը, տարածքի ինժեներական նախապատրաստումը, ներդրումային գրավչությունը: Քաղաքների կառուցապատման պատմականորեն ձևավորված կենտրոնական հատվածներում, կառուցապատման վերակառուցման պայմաններում կազմավորված, ինչպես նաև պատմաշմակոթային և ճարտարապետական շահույթային արժեքների առկայությամբ այլ հատվածներում բնակչության խտությունը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

Աղյուսակ 3

Հ/Հ	Տարածքների տարբեր քաղաքաշինական արժեքավորության գոտիներ	Բնակելի շրջանի տարածքի բնակչության խտությունը*, բնակչության հետևյալ թվաքանակով բնակավայրերի խմբի համար, հազար մարդ						
		Մինչև 20	21-50	51-100	101-250	251-500	501-1000	1001-ից ավելի
1.	Բարձր	130	165	185	200	210	215	220
2.	Միջին	-	-	-	180	185	200	210
3.	Ցածր	70	115	160	165	170	180	190
4.	* Անհատական առանձնատնային շինարարության շրջաններում և բնակավայրերում, որտեղ չեն նախատեսվում կենտրոնացված ինժեներական համակարգեր, թույլատրվում է բնակչության խտությունը պակասեցնել, սակայն 40 մարդ / հա-ից ոչ պակաս:							

2) միկրոշրջան՝ բնակելի շրջանի հիմնական կառուցվածքային և հաշվարկային տարր, որը 5-60 հա մակերեսով մայրուղային փողոցներով և ճանապարհներով չմասնատված տարածք է, որտեղ տեղակայված են բնակելի շենքերը, դրանց խմբերը և 500 մ շառավղով տեղաբաշխվող անհրաժեշտ առաջնային սպասարկման օբյեկտները (բացառությամբ նախադպրոցական և ուսումնական հաստատությունների, որոնց շառավիղը սահմանվում է սույն շինարարական նորմերի 4-րդ աղյուսակում)

ա. միկրոշրջանի տարածքի հաշվարկային սահմանագծերը պետք է որոշվեն մայրուղային և բնակելի փողոցների կարմիր գծերով, հետիոտն ուղիների կամ անցումների առանցքներով, բնական սահմաններով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սահմանվեն կառուցապատման գծից 3 մետր հեռավորության վրա,

բ. միկրոշրջանի հաշվարկային տարածքից պետք է հանել համաքաղաքային նշանակության, պատմամշակութային և ճարտարապետական դրամատիկ արժեք ունեցող, ինչպես նաև մատչելիության նորմավորված շառավղում գտնվող (սպասարկվող բնակչության թվին համապատասխան) հարակից բնակելի շրջանների բնակչության սպասարկման համար հաշվարկված ամենօրյա սպասարկման օբյեկտների հողամասերի մակերեսները: Միկրոշրջանի հաշվարկային տարածքում պետք է ընդգրկել հաշվարկային բնակչությանը սպասարկող ամենօրյա օգտագործման բոլոր օբյեկտների, ինչպես նաև հարակից տարածքների և ստորգետնյա տարածություններում տեղադրված օբյեկտների մակերեսները,

գ. պատմականորեն կազմավորված գոտիներում բնակեցման տարածքի կազմակերպման կառուցվածքային տարրեր են հանդիսանում թաղամասերը, պարագծային կառուցապատման թաղամասերի խմբերը, փողոցների և հրապարկների համակառուցվածքները,

դ. կազմավորված կառուցապատման վերակառուցման պայմաններում բնակելի միկրոշրջանի հաշվարկային տարածքի կազմում պետք է ընդգրկել թաղամասերն անջատող, միկրոշրջանի ներսում պահպանված փողոցների և շենքերի մոտեցումների տարածքները,

40. 100 հազար և ավելի բնակչությամբ քաղաքների գլխավոր հատակագծերում բնակելի շրջանները կարող են միավորվել որպես հատակագծային գոտիներ, իսկ տարաբնակեցման խմբային համակարգերում՝ մտնել միջբնակավայրային հատակագծային գոտիների կազմի մեջ:

41. Փոքր քաղաքներում և գյուղական բնակավայրերում, բնակեցման գոտիներում անհրաժեշտ է հնարավորինս ապահովել տարածքների պարփակ (կոմպակտ) հատակագծային կառուցվածք: Այս բնակավայրերում բնակեցման ամբողջ տարածքը կարող է դիտվել որպես միասնական բնակելի շրջան, որտեղ անհրաժեշտության դեպքում կարող են առանձնացվել միկրոշրջաններ՝ հաշվի առնելով սույն շինարարական նորմերի պահանջները:

42. Բնակելի շրջանում սպասարկման օբյեկտների, ինչպես նաև սոցիալ-մշակութային ոլորտի զարգացման հեռանկարը, յուրաքանչյուր դեպքում, որոշվում է նախագծային առաջադրանքի մշակման ընթացքում: Ստանդարտ տիպի սպասարկման հաստատությունների և կազմակերպությունների (սպասարկման բոլոր տիպերը, բացի բացառիկ, մասնագիտացված և եզակի տիպերից) տեղադրման ժամանակ անհրաժեշտ է 15 րոպե տրանսպորտային և հետիոտն մատչելիության շրջանակներում բնակելի շրջանի բնակչության գերակշիռ մեծամասնության համար ապահովել ծառայությունների լրիվ ծավալը: Ընդ որում, միկրոշրջանի որոշակի տարածքը զբաղեցնող առանձին հատվածի հատակագծման փաստաթղթերի մշակման պարագայում անհրաժեշտ է ապահովել տեղակայվող օբյեկտների համատեղելիությունը շրջակա կառուցապատման հետ և ապահովել սոցիալական և մշակութային ցանցային սպասարկման պահանջվող մակարդակ միկրոշրջանի ընդհանուր բնակչության համար:

43. Բնակելի շրջանի բնակչության խտությունը սահմանվում է, հաշվի առնելով տարածքների քաղաքաշինական արժեքավորությունը՝ համաձայն սույն շինարարական նորմերի 1-ին հավելվածի:

44. Միկրոշրջանի տարածքի հաշվարկային խտությունը (մարդ/հա) պետք է ընդունել՝ կախված տարածքի քաղաքաշինական արժեքից (ցածր, միջին, բարձր), բայց 300 մարդ/հա-ից ոչ ավելի: Խոշորացված ցուցանիշները տրվում են 18 մ<sup>2</sup>/մարդ միջին հաշվարկային բնակարանային ապահովվածության համար: Այլ բնակելի ապահովվածության դեպքում նորմատիվ խտությունը պետք է հաշվարկվել հետևյալ բանաձևով

$$P = P_{18} \times 18 / H \quad (1)$$

որտեղ՝

$P_{18}$  - միկրոշրջանի բնակեցման խտության ցուցանիշը 18 մ<sup>2</sup>/մարդ ապահովվածության դեպքում,

H - հաշվարկային բնակարանային ապահովվածությունն է, մ<sup>2</sup>:

45. Միկրոշրջանների բնակչության հաշվարկային խտությունը բարձր քաղաքաշինական արժեք ունեցող գոտում թույլատրվում է նվազեցնել՝ բայց ընդունելով 250 մարդ/հա-ից ոչ պակաս:

46. Վերակառուցման պայմաններում, սեյսմիկ նորմերի պահպանմամբ բարձրահարկ շինարարության դեպքերում, միկրոշրջանների բնակչության հաշվարկային խտությունը թույլատրվում է մեծացնել, բայց 10 %-ից ոչ ավելի:

47. Գյուղական բնակավայրերի բնակեցման տարածքների բնակչության խտության ցուցանիշները տրված են սույն շինարարական նորմերի 1-ին հավելվածում:

48. Բնակելի կառուցապատման տարածքի առաջնային միջավայրատեղծ քաղաքաշինական միավորը բնակելի տունն է: Բնակելի շենքերը և դրանց համալիրները պետք է տեղադրվեն բնակելի կառուցապատման կամ խառը կառուցապատման գոտիներում, միջմայրուղային տարածքներում՝ խմբավորված ընդհանուր տարածությունների կամ բակերի շուրջ: Բնակելի շենքերի խմբերի զբաղեցրած տարածքը չպետք է գերազանցի 5 հա:

49. Միկրոշրջանում՝ համաձայն բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի կարող են առանձնացվել առանձին տների կամ բնակելի շենքերի խմբերի համար բնակելի կառուցապատման հողամասեր, որոնք ընդհանուր պարագծով հաշված որոշակի սահմաններով, քաղաքաշինական փաստաթղթերով ամրագրված կառուցապատված կամ որոշակի ռեժիմով զարգացման ենթակա տարածքներ են, որտեղ տեղադրվում է բնակելի շենքը կամ բնակելի շենքերի խումբը՝ հարակից գործառույթների իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ տնամերձ (բնակարանամերձ) տարածքով:

50. Բազմաբնակարան բնակելի շենքերի և դրանց խմբերի համար հողամասի տարածքն ընգրկում է բնակելի շենքի մոտեցումները, անցատեղիները և անցումները, կայանատեղերը, կանաչ ծածկույթը, տնտեսական (օժանդակ) կառուցվածքները, հանգստի և խաղերի համար նախատեսված հարթակները:

51. Սակավահարկ բնակելի շենքերի տնամերձ հողամասի առավելագույն թույլատրելի չափը սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ ելնելով տեղական առանձնահատկություններից: Դրանց վերջնական սահմանները, չափերն ու օգտագործման ռեժիմները որոշվում են հաստատված քաղաքաշինական փաստաթղթերով:

52. Բազմաբնակարան շենքերի բնակիչների ընդհանուր սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերին կից հողամասերի սահմանները և օգտագործման ռեժիմը սահմանվում են կառուցապատման նախագծերով՝ սույն շինարարական նորմերի և գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան:

53. Բնակելի և հասարակական շենքերն անհրաժեշտ է տեղադրել բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերում նախատեսված տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպմանը, կառուցապատման խտությանը, անջրանցիկ և կանաչապատ տարածությունների հարաբերությանը, հարկայնությանը և կառուցապատման այլ չափորոշիչներին ներկայացվող պահանջներին համապատասխան:

54. Առաջին հարկերում պատուհաններ ունեցող բնակարաններով բնակելի շենքերը տեղադրվում են փողոցի կարմիր գծից հետո: Այն բնակելի շենքերը, որոնց առաջին հարկերը զբաղեցված են հասարակական գործառույթներով, կարող են տեղակայվել փողոցի կարմիր գծով:

55. Բնակելի կառուցապատման առանձնացված գոտիներում և թաղամասերում կառուցապատման տոկոսը չպետք է գերազանցի 40%: Վերակառուցման պայմաններում այս ցուցանիշը կարելի է ավելացնել մինչև 60 %:

### **VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԽԱՌՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ**

56. Հասարակական կառուցապատման գոտիները և կենտրոնները կազմավորվում են որպես գործարարական, ֆինանսական և հասարակական ակտիվության կենտրոնացման վայրեր՝ մայրուղային փողոցներին, հասարակական-տրանսպորտային հանգույցներին և այլ զանգվածային այցելության օբյեկտներին հարող տարածքներում: Ընդ որում, այդ տարածքների ցանկացած կետից մինչև մոտակա հասարակական տրանսպորտի կանգառը և ժամանակավոր ավտոկայանման հարթակը չպետք է գերազանցի 500 մ-ը, իսկ հասարակական սանհանգույցները պետք է տեղակայվեն միմյանցից 150 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ:

57. Ըստ կառուցապատման տեսակի և տեղակայվող օբյեկտների կազմի քաղաքների հասարակական կառուցապատման գոտիները կարող են ստորաբաժանվել և կազմակերպվել որպես բազմագործառույթ և մասնագիտացված տարբեր նշանակության (համաքաղաքային և շրջանային) հասարակական կենտրոնների համակարգ:

58. Հասարակական կառուցապատման տարածքները, որոնք կազմավորվում են մեկ գերակշռող գործառույթով ձևավորվում են որպես հանրապետական և համաքաղաքային նշանակության մասնագիտացված գոտիներ՝ վարչական, բուժական, գիտական, ուսումնական, առևտրական (այդ թվում տոնավաճառներ, շուկաներ), ցուցահանդեսային, սպորտային և այլն: Նշված գոտիների տեղաբաշխման ժամանակ հարկ է հաշվի առնել դրանց գործառման առանձնահատկությունները, տարածքային պահանջները, մեծ տարողունակությամբ ավտոկայանատեղերի կազմակերպման, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքի զարգացած ցանցի ձևավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի և հարակից կառուցապատման վրա ազդեցության աստիճանը:

59. Համաքաղաքային կենտրոնի կազմում (կենտրոնի նախագծային սահմաններում) կարող են առանձնացվել՝ պատմականորեն կազմավորված կենտրոնի տարածքները, այդ թվում՝ քաղաքի կենտրոնի պատմական միջուկը, կառուցվածքահատակագծային առանձին հանգույցներ և կառուցապատման ընթացքում կազմավորված առանձնահատուկ ձևակերպերը, որոնցում գործելու ռեժիմները և տարբեր սահմանափակումները որոշվում են ՀՀ օրենսդրության և սույն շինարարական նորմերի պահանջներին համապատասխան մշակված գոտիավորման նախագծերով և կառուցապատման հատուկ նորմերով:

## **IX. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

60. Բնակավայրերի տարածքներում սպասարկման հաստատություններն անհրաժեշտ է տեղաբաշխել՝ դրանք առավելագույնս մոտեցնելով բնակության և աշխատանքի վայրերին, ապահովելով փոխկապակցվածությունը հասարակական մարդատար տրանսպորտային ցանցի հետ :

61. Սպասարկման հիմնարկների հողամասերի չափերը, տարողությունը և տեղաբաշխումը անհրաժեշտ է ընդունել ըստ նախագծման առաջադրանքի՝ հիմք ընդունելով սույն նորմերի պահանջները: Կողմնորոշիչ հաշվարկների համար սպասարկման հիմնարկների թիվը և դրանց հողամասերի չափերը կարող են ընդունվել համաձայն սույն շինարարական նորմերի 7-րդ հավելվածի:

62. Տարաբնակեցման համակարգերի քաղաք-կենտրոններում սպասարկման հաստատությունների թվի, կազմի և տարողության որոշման ժամանակ անհրաժեշտ է լրացուցիչ հաշվի առնել տեղափոխումների համապատասխան ժամային մատչելիության գոտում (մեծ և խոշոր քաղաք-կենտրոնները՝ 1.5 ժամից ոչ ավելի, իսկ միջին և փոքր քաղաք-կենտրոնները կամ բնակելի համակարգի ենթակենտրոնները՝ 1 ժամից ոչ ավելի) տեղակայված այլ գյուղական և քաղաքային բնակավայրերից ժամանող բնակչությունը, պատմականորեն ձևավորված կառուցապատման հատվածներում՝ նաև զբոսաշրջիկներին:

63. Գյուղական բնակավայրերում բնակչության առաջին անհրաժեշտության ծառայությունների սպասարկման հաստատությունները տեղաբաշխելիս անհրաժեշտ է առաջնորդվել 30 րոպեից ոչ ավելի հետիոտնային հասանելիության սահմաններում:

64. Պարբերական և առավել բարձր մակարդակի սպասարկման օբյեկտների տեղաբաշխումը պետք է նախատեսել գյուղական բնակավայրերի խմբի համար:

65. Սպասարկման կազմակերպման համար անհրաժեշտ է հիմնական շենքերի հետ մեկտեղ նախատեսել համապատասխան տարածքներ և հրապարակներ՝ շարժական միջոցների և շինությունների օգտագործմամբ սեզոնային առևտորի և սպասարկման գործառույթների կազմակերպման համար:

66. Բնակելի կառուցապատման մեջ տեղակայվող հաստատությունների և կազմակերպությունների սպասարկման շառավիղը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 4-րդ աղյուսակում նշվածից ոչ ավելի:

Աղյուսակ 4

Հ/Հ	Սպասարկման հաստատություններ	Սպասարկման (հետիոտն հասանելիության գոտու) շառավիղը, մ
1.	Մանկական նախադպրոցական հիմնարկներ*. Քաղաքներում՝ գյուղական բնակավայրերում և փոքր քաղաքներում մեկ և երկհարկանի կառուցապատման դեպքում՝	300 500
2.	Հանրակրթական դպրոցներ* տարրական դասարանների համար	700 500
3.	Մարզական առողջարարական պարապմունքների համար սրահներ	500
4.	Քաղաքային շրջանների մարզական-սպորտային կենտրոններ	1500
5.	Պոլիկլինիկաներ և դրանց մասնաճյուղեր քաղաքներում**	1000
6.	Կաթնային խոհանոցի բաշխիչ կետեր	500
7.	Նույնը մեկ և երկհարկանի կառուցապատման դեպքում	800
8.	Դեղատներ քաղաքներում նույնը մեկ և երկհարկանի կառուցապատման դեպքում	500 800
9.	Տեղական նշանակության կենցաղ-սպասարկման, հասարակական սննդի և առևտրի հաստատություններ՝ քաղաքային բազմահարկ կառուցապատման դեպքում՝ քաղաքային սակավահարկ (1-2 հարկ) կառուցապատման դեպքում, գյուղական վայրերում	500 800 2000
10.	Կապի բաժանմունք և բանկի մասնաճյուղ	500
11.	* Սպասարկման նշված շառավիղը չի տարածվում մասնագիտացված և առողջարարական մանկական նախադպրոցական հաստատությունների, ինչպես նաև հատուկ տեսակի մասնագիտացված մսուր-մանկապարտեզների և հանրակրթական դպրոցների (լեզվական, մաթեմատիկական, մարզական և այլն): Գյուղական բնակավայրերում հանրակրթական դպրոցների սպասարկման շառավիղները թույլատրվում է մեծացնել ըստ նախագծման առաջադրանքի, եթե դա չի հակասում ՀՀ իրավական ակտերի պահանջներին: Հանրակրթական դպրոցների աղյուսակում նշված սպասարկման շառավիղները բարդ ռելիեֆի պայմաններում կարող են փոքրացվել, բայց 30 %-ից ոչ ավելի: Աշակերտների մոտեցման ուղիները դեպի տարրական դասարաններ ունեցող հանրակրթական դպրոցներ չպետք է հաստեն մայրուղային փողոցների երթևեկելի մասերը նույն մակարդակում:	
12.	** Գյուղական վայրերում պոլիկլինիկաների, բուժարանների, բուժակային-մանկաբարձական կետերի և դեղատների հասանելիությունն ընդունվում է 30 րոպեի սահմաններում (տրանսպորտային միջոցների օգտագործմամբ):	

67. Տրանսպորտային հասանելիության առավելագույն ժամանակի հաշվարկով հանրակրթական դպրոցների տեղաբաշխումը թույլատրվում է՝ տարրական դասարանների (տարրական դպրոց) համար՝ 10-15 րոպե, միջին դասարանների (միջին դպրոց) համար՝ 30 րոպե, ավագ դասարանների (ավագ դպրոց) համար՝ 45 րոպե: Մինչև տրանսպորտային միջոցների կանգառ աշակերտների հետիոտն հասանելիության հեռավորությունը պետք է լինի 500 մետրից ոչ ավելի:

68. Սպասարկման հիմնարկների շենքերի հողամասերի սահմանների հեռավորությունները պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 5-րդ աղյուսակում տրված ցուցանիշերից ոչ պակաս:

Աղյուսակ 5

Հ/Հ	Սպասարկման հաստատությունների շենքեր (հողամասեր)	Հեռավորությունը սպասարկման հիմնարկների շենքերից (հողամասի սահմաններից), մ			
		Մինչև կարմիր գիծ		Մինչև բնակելի տների պատերը	Մինչև հանրակրթական դպրոցների, մանկական նախադպրոցական և բուժական շենքերի պատերը
		քաղաքներում	գյուղական բնակավայրերում		
1.	Մանկական նախադպրոցական հիմնարկներ և հանրակրթական դպրոցներ (շենքերի պատեր)*	25	10	Ըստ հակահրդեհային, ինտյացիայի և լուսավորվածության նորմերի	
2.	Երկրորդական հումքի ընդունման կետեր**	-	-	20 ***	50
3.	Հրշեջ կայաններ	10	10	-	-
4.	Դիակիզարաններ և ավանդական հողարկավորության գերեզմանոցներ****	6	6	300	300
5.	Դիակիզումից հետո թաղման համար գերեզմանոցներ	6	6	100	100
6.	* Մանկական նախադպրոցական հիմնարկների, նոր տեղադրվող հիվանդանոցների հողամասերը պետք է տեղակայվեն մայրուղային փողոցների կարմիր գծերից ներս:				
7.	Հիվանդանոցների հողամասում անհրաժեշտ է նախատեսել առանձնացված մոտեցումներ դեպի տնտեսական, բուժական՝ վարակիչ և ոչ վարակիչ հիվանդների համար (առանձին) և պաթոլոգոանատոմիական մասնաշենքերի գոտիներ:				
8.	** Երկրորդական հումքի ընդունման կետերը անհրաժեշտ է մեկուսացնել կանաչապատման շերտով՝ նախատեսելով ավտոմոբիլային տրանսպորտի համար մոտեցման ուղիներ:				
9.	*** Մուտքերով և լուսամուտներով:				
10.	**** Վերակառուցման պայմաններում, գործող գերեզմանատների համար պետք է պահպանվեն գերեզմանատների շահագործման վերաբերյալ գործող ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 21-ի 1910-Ն որոշման պահանջները:				

**X. ԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐ**

69. Բնակելի, հասարակական, խառը կառուցապատման գոտիների խտությունը կարգավորվում է բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերում ամրագրված կառուցապատման չափորոշիչներով, հաշվի առնելով տարածքի քաղաքաշինական արժեքը, շրջակա միջավայրի վիճակը, սեյսմիկ ռիսկը և այլ տեղական պայմանները: Կառուցապատման խտության գործակիցը՝  $P_{կ1}$ -ը, ցույց է տալիս շենքերի և կառույցների բոլոր վերգետնյա հարկերի գումարային մակերեսի և հողամասի մակերեսի հարաբերությունը, իսկ կառուցապատման տոկոսը՝  $P_{կ2}$ -ը, ցույց է տալիս շենքերի և կառույցների զբաղեցրած մակերեսի և ամբողջ հողամասի մակերեսի հարաբերությունը: Դրանք պետք է հաշվարկվեն հետևյալ բանաձևերով՝

$$P_{կ1} = H/S \quad (2)$$

որտեղ՝

H- շենքերի և կառույցների բոլոր վերգետնյա հարկերի գումարային մակերեսն է (որոշվում է դրանց արտաքին չափերով),

S- հողամասի մակերեսն է:

$$P_{i2}=(M/S)\times 100$$

(3)

որտեղ՝

M- շենքերի և կառույցների զբաղեցրած մակերեսն է,

S- հողամասի մակերեսը:

70. Կառուցապատման խտության գործակցի և կառուցապատման տոկոսի առավելագույն սահմանային ցուցանիշները, հասարակական բազմագործառույթ և մասնագիտացված կառուցապատման գոտիների համար տրված են սույն շինարարական նորմերի 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Հ/Հ	Գոտիներ	Կառուցապատման խտության գործակից* P <sub>i1</sub>	Կառուցապատման տոկոս P <sub>i2</sub> %
1	Բնակելի միջին հարկայնության/բազմահարկ բազմաբնակարան կառուցապատման թաղամասերում	0.8/1.2	40
2	Բնակելի բազմահարկ բազմաբնակարան կառուցապատման վերակառուցվող թաղամասերում	1.6	60
3	Բլոկացված բնակելի տներով, բնակարանամերձ հողամասերով կառուցապատման թաղամասերում**	0.6	30
4	Անհատական բնակելի տներով, տնամերձ հողամասերով կառուցապատման թաղամասերում***	0.4	20
5	Խառը կառուցապատման թաղամասերում	1.2	40
6	Խառը կառուցապատման վերակառուցվող թաղամասերում	1.6	60
7	Հասարակական բազմագործառույթ կառուցապատման	3.0	100
8	Հասարակական մասնագիտացված կառուցապատման	2.4	80
9	Կանաչապատ	-	7
10	* Կառուցապատման խտության գործակիցը և տոկոսը կիրառվում են ինչպես ամբողջ թաղամասի (միկրոշրջանի), այնպես էլ առանձին հողամասերի համար:		
11	**Անջրանցիկ տարածքը (կառույցի մակերեսը ներառյալ) չպետք է գերազանցի 40 %-ը:		
12	***Տնտեսական կառույցների առկայության դեպքում ընդհանուր կառուցապատման տոկոսը չպետք է գերազանցի 40 %-ը:		

71. Շենքերի և կառույցների առավելագույն հարկայնությունը որոշվում է, հաշվի առնելով բնակչության խտությունը, կառուցապատման խտության գործակիցը և տոկոսը՝ ապահովելով ՀՀՇՆ II-6.02 շինարարական նորմերի պահանջները:

72. Բնակելի միկրոշրջաններում անհրաժեշտ է նախատեսել տարաբնույթ նշանակության ընդհանուր օգտագործման հարթակներ, հաշվի առնելով բնակչության ժողովրդագրական կազմը, կառուցապատման տեսակը, բնակլիմայական և այլ տեղական պայմանները: Հարթակների կազմը և դրանց տարածքների չափերը պետք է որոշվեն սույն շինարարական նորմերով և կառուցապատման կանոններով, ընդ որում՝ երեխաների խաղահրապարակների, մեծահասակ բնակչության հանգստի և մարզահրապարակների ընդհանուր մակերեսը պետք է լինի միկրոշրջանի բնակեցման տարածքի ընդհանուր մակերեսի 10 %-ից ոչ պակաս: Հրապարակները անհրաժեշտ է տեղակայել բնակելի և հասարակական շենքերի պատուհաններից սույն շինարարական նորմերի 7-րդ աղյուսակում ներկայացվող հեռավորություններից ոչ պակաս հեռավորության վրա:



Աղյուսակ 7

Հ/Հ	Հրապարակների տեսակը	Հեռավորությունը, մ
1.	Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների խաղահրապարակներ	12
2.	մեծահասակ բնակչության հանգստի համար	10
3.	նախատեսված	
4.	մարզահրապարակներ (կախված աղմուկի բնութագրերից՝ առավելագույն մեծությունն ընդունել ֆուտբոլի և հոկեյի խաղահրապարակների, նվազագույնը՝ սեղանի թենիսի խաղահրապարակների համար)	10-40
5.	տնտեսական նպատակների համար նախատեսված	20
6.	շների զբոսանքի համար	40
7.	ավտոմեքենաների կայանման համար նախատեսված	ըստ սույն շինարարական նորմերի 29-րդ աղյուսակի:

73. Ավտոմոբիլային մուտքերը դեպի միկրոշրջանի և թաղամասի տարածք, ինչպես նաև շենքերում միջանցիկ անցումները պետք է նախատեսել մեկը մյուսից առավելագույնը 300 մ հեռավորությամբ, վերակառուցվող թաղամասերում՝ 180 մ-ից ոչ ավելի: Կարգավորվող շարժմամբ մայրուղային ճանապարհների երթևեկային մասերին մոտեցումների միացումը թույլատրվում է խաչմերուկներից նվազագույնը 50 մ հեռավորության վրա: Ընդ որում, մինչև հասարակական տրանսպորտի կանգառը պետք է լինի 20 մետրից ոչ պակաս: Բնակելի շենքերի խմբին, սպասարկման, առևտրի խոշոր կենտրոններին մոտեցումը պետք է նախատեսվի հիմնական մոտեցումներով, իսկ առանձին կանգնած շենքերին՝ երկրորդական մոտեցումներով: Հինգ (5) և ավելի հարկայնությամբ միկրոշրջանները սպասարկվում են երկշերտ, իսկ մինչև 5 հարկանի կառուցապատմամբ միկրոշրջանները՝ միաշերտ մոտեցումներով: Միաշերտ մոտեցումների համար նախատեսվում են 6 մ լայնությամբ և 15 մ երկարությամբ, միմյանցից 75 մ-ից ոչ հեռու տեղակայված շրջադարձի հարթակներ: Փակուղային մոտեցումների երկարությունը պետք է լինի 150 մ-ից ոչ ավելի և ավարտվի շրջադարձային հարթակով՝ ապահովելու աղբատար և հրշեջ մեքենաների շրջադարձը:

74. Միկրոշրջաններում բնակելի տների խմբերի կամ խմբի համար արգելվում է ընդհանուր ներքին տարածության (բակի) միջով տարանցիկ անցումների իրականացումը:

75. Տնտեսական հարթակներից հեռավորությունը չի նորմավորվում, աղբակուտակման հարթակներից մինչև մարզահրապարակներ, երեխաների խաղերի և մեծահասակների հանգստի հարթակներ, ինչպես նաև մանկական նախադպրոցական հաստատություններ, բուժական և սննդի հաստատություններ հարկավոր է ընդունել 20 մ-ից ոչ պակաս, իսկ տնտեսական նպատակների համար նախատեսված հարթակներից մինչև բնակելի շենքի առավել հեռավոր մուտքը՝ 100 մ-ից ոչ ավելի:

76. Հասարակական և խառը կառուցապատման գոտիներին կից տեղակայված արտադրական օբյեկտների հողամասերի սահմանից հեռավորությունը մինչև բնակելի և հասարակական շենքերը, ինչպես նաև հանրակրթական դպրոցների և նախադպրոցական, առողջապահական և հանգստի հաստատությունների հողամասերի սահմանները պետք է ընդունել 50 մետրից ոչ պակաս: Նշված հեռավորությունն ընդունվում է ՍՆ 245-71 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

77. Հատվածային նախագծման դեպքում կամ երբ նախագծվող տարածքներում բնակելի շրջաններ դեռ չեն ձևավորվել, միկրոշրջանի ընդհանուր օգտագործման կանաչապատված տարածքների մակերեսը պետք է ընդունել մեկ մարդու հաշվով 6 մ<sup>2</sup>-ից ոչ պակաս (առանց հաշվի առնելու դպրոցների և նախադպրոցական հիմնարկությունների տարածքները): Միկրոշրջանի կանաչապատված տարածքների առանձին հողամասերի մակերեսների մեջ կարող են ներառվել նաև հանգստի հարթակների, մանկական խաղահրապարակների, ճեմուղիների, ուղիների և հետիոտն այլ ուղիների մակերեսները, եթե դրանք զբաղեցնում են հողամասի 30 %-ից ոչ ավելի հատվածը:

78. Բնակելի շենքերի, բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև հեռավորությունները հարկավոր է ընդունել ինտյացիայի և լուսավորվածության հաշվարկների հիման

վրա, համաձայն սույն շինարարական նորմերի 23-րդ բաժնում տրված պահանջների, ինչպես նաև ՀՀՇՆ II-8.03 շինարարական նորմերի և ՍՆ 245-71 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

79. Շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունները (կենցաղային խզումներ) հարկավոր է ընդունել 2-3 հարկանի շենքերի համար՝ 18 մ, 4 հարկի՝ 24 մ-ից ոչ պակաս, իսկ շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 10 մետրից ոչ պակաս: Երկու և ավելի սեկցիայով բնակելի տների երկար կողմերի միջև հեռավորությունը պետք է լինի առավել բարձր շենքի բարձրության կրկնակի չափից ոչ պակաս: Վերակառուցման և այլ բարդ քաղաքաշինական պայմաններում նշված հեռավորությունները կարող են կրճատվել՝ սեյսմակայուն շինարարության և սեյսմիկ ռիսկի նվազեցման, ինսուլացիայի, լուսավորվածության, հակահրդեհային պահանջների պահպանման պայմանով, ինչպես նաև բացառելով բնակելի սենքերի և խոհանոցի լուսամուտից լուսամուտ դիտելիությունը (լուսամուտների՝ դեմհանդիման չգտնվելու պայմանով): Նշված հեռավորությունները կարող են փոխվել, հաշվի առնելով քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, որոնք պետք է իրականացվեն՝ համաձայն համապատասխան ոլորտի նորմատիվ փաստաթղթերի պահանջների:

80. Տնամերձ հողամասերով կառուցապատման շրջաններում շենքերի և շինությունների կառուցման կամ վերակառուցման ժամանակ բնակելի սենքերի (սենյակներ խոհանոց, պատշգամբ) լուսամուտներից մինչև հարևան հողամասերում տեղակայված շենքի և տնտեսական շինությունների (խորդանոց, ավտոտնակ, բաղնիք) պատերի միջև հեռավորությունը պետք է լինի 6 մ-ից ոչ պակաս (նույնը վերակառուցման պայմաններում), իսկ մինչև ընտանի կենդանիների կամ թռչունների համար նախատեսված շինությունները՝ ՀՀ օրենսդրության և սույն շինարարական նորմերի 82-րդ կետի պահանջներին համապատասխան:

81. Հողամասի սահմանագծից հեռավորությունը պետք է լինի սույն շինարարական նորմերի 8-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 8

Հ/Հ	Անվանումը	Հեռավորությունը, մ
1.	մինչև բնակելի տան պատը	3
2.	մինչև տնտեսական կառույցները	1

Թույլատրվում է հարևան (հարակից) տնամերձ հողամասերի բնակելի տների, ինչպես նաև տնտեսական կառույցների բլոկավորված տեղակայումը՝ սեփականատերերի փոխադարձ համաձայնության և սույն շինարարական նորմերի 26-րդ բաժնում տրված հակահրդեհային պահանջների ապահովման պայմանով: Նշված նորմերը կիրառվում են նաև գոյություն ունեցող բնակելի շենքերին կցակառուցվող տնտեսական կառույցների դեպքում:

82. Գյուղական բնակավայրերում և քաղաքների բնակելի գոտու սահմանագծում տեղակայված տնամերձ հողամասերով կառուցապատման շրջաններում ընտանի կենդանիների և թռչունների համար նախատեսված ցախանոցների, խորդանոցների, անասնագոմերի շինությունները հարկավոր է նախատեսել բնակելի շենքերի լուսամուտներից հետևյալ հեռավորությունների ապահովմամբ. մեկ-երկու շինության դեպքում՝ 8 մ-ից ոչ պակաս, 8 կառույցի դեպքում՝ 25 մ-ից ոչ պակաս, 8-30-ի դեպքում՝ 50 մ-ից ոչ պակաս: Բլոկավորված խորդանոցների կառուցապատման մակերեսը չպետք է գերազանցի 800 մ<sup>2</sup>: Խորդանոցների խմբերի միջև հեռավորությունը հարկավոր է ընդունել սույն շինարարական նորմերի 26-րդ բաժնին համապատասխան: Ընտանի կենդանիների և թռչունների համար նախատեսված շինություններից մինչև խորքային ջրհորների եզրը ընկած հեռավորությունը պետք է գերազանցի 20 մետրը: Թույլատրվում է տնտեսական կառույցի (այդ թվում՝ կենդանիների և թռչունների համար նախատեսված), ավտոտնակի, բաղնիքի, ջերմոցի կցակառուցում տնամերձ հողամասի առանձնատանը՝ պահպանելով սանիտարական և հակահրդեհային նորմերը: Խորդանոցների, ցախանոցների, անասնագոմերի շինությունների խմբերից յուրաքանչյուրը պետք է պարունակի 30 կառուցահատվածից ոչ ավելի:

83. Կենտրոնացված ջրահեռացման բացակայության պայմաններում սանհանգույցից մինչև հարևան տան պատը հեռավորությունն անհրաժեշտ է ընդունել 12 մ-ից ոչ պակաս, մինչև ջրամատակարարման աղբյուրը՝ 25 մ-ից ոչ պակաս:

**XI. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

84. Բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծերի մշակման ժամանակ պետք է առաջնորդվել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի լիարժեք կենսագործունեության համար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ՝ ապահովելով սույն շինարարական նորմերի և ՀՀՇՆ IV-11.07.01, ՎՍՆ 62 շինարարական նորմերի պահանջները:

85. Բնակավայրերի բնակելի շրջանների և դրանց ճանապարհափողոցային ցանցի նախագծումը պետք է իրականացնել՝ ապահովելով հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար հասարակական տրանսպորտ նստելու տեղերին և հարթակներին մոտենալու համար մատչելի ուղիներ:

86. Նոր շինարարության շրջաններում հենասայլակներով հաշմանդամների համար բնակարաններով բնակելի շենքերը պետք է տեղակայել այնպես, որ ամենօրյա պահանջարկ ունեցող ապրանքների և կենցաղային սպասարկման հաստատությունների համալիր կետերից սպասարկման շառավիղը չգերազանցի 300 մ-ը:

87. Մասնագիտացված բնակելի շենքերը և մասնագիտացված մանկական հիմնարկներն անհրաժեշտ է տեղաբաշխել հրշեջ կայաններից 3000 մ-ից ոչ ավելի հեռավորության վրա:

88. Մասնագիտացված մանկական հիմնարկները պետք է տեղադրել կանաչապատված շրջաններում, արդյունաբերական կազմակերպություններից, տրանսպորտային ինտենսիվ շարժումով փողոցներից ու ճանապարհներից, երկաթուղուց, ինչպես նաև բարձր աղմուկի, օդի և ընդերքի աղտոտման այլ աղբյուրներից 3000 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

89. Խախտված լսողությամբ և տեսողությամբ երեխաների համար մասնագիտացված գիշերօթիկ դպրոցները ռադիոկայաններից, ռադիոռելեային տեղակայանքներից և կառավարակետերից անհրաժեշտ է տեղադրել 1500 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

90. Ծերերի և հաշմանդամների համար տուն-ինտերնատների, սոցիալական սպասարկման տարածքային կենտրոնների, մասնագիտացված մանկական հիմնարկների հողամասերի հաշվարկային մակերեսն անհրաժեշտ է ընդունել համաձայն սույն շինարարական նորմերի 9-րդ և 10-րդ աղյուսակների:

91. Մասնագիտացված նախադպրոցական հիմնարկների հողամասի մակերեսի հաշվարկային ցուցանիշը պետք է ընդունել 1 տեղի համար 60 մ<sup>2</sup>-ից ոչ պակաս:

92. Մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների հողամասերի մակերեսի հաշվարկային ցուցանիշը անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 11-րդ աղյուսակին համապատասխան:

Աղյուսակ 9

Հ/Հ	Շենքերի տիպերը	Տարողությունը, տեղ	Հողամասի մակերեսը, մ <sup>2</sup> ոչ պակաս 1 տեղի համար
1.	Տուն-ինտերնատներ (գիշերօթիկներ) ծերերի և հաշմանդամների համար*	մինչև 50 51-100 101-200 201-300	200 175 125 100
2.	Սոցիալական սպասարկման տարածքային կենտրոններ	մինչև 50 51-75 76-100	150 125 100
3.	* -Մերձքաղաքային գոտում տեղադրված կամ պուրակներին ու անտառապուրակներին մոտ գտնվող, ինչպես նաև կազմավորված կառուցապատման պայմաններում տուն-ինտերնատների հողամասերի մակերեսները թույլատրվում է պակասեցնել, բայց 20 %-ից ոչ ավել:		

Աղյուսակ 10

Հ/Հ	Չուզահեռ դասարանների քանակը	Հողամասի մակերեսը մանկական մասնագիտացված գիշերօթիկ դպրոցներում 1 սանի հաշվարկով ոչ պակաս, մ <sup>2</sup>			
		լսողության խախտումներով	տեսողության խախտումներով	խոսակցական խախտումներով	պոլիոմելիտի և ցերեբրալ կաթվածների ծանր հետևանքներով
1.	1	200	205	225	180
2.	2	160	160	180	140

Աղյուսակ 11

Հ/Հ	Հողամասի մակերեսը* 1 սանի համար ոչ պակաս, մ <sup>2</sup>			
	Ուսուցանող երեխաների համար, որոնք ընդունակ են ինքնուրույն տեղաշարժվել		Չուսուցանող երեխաների համար, որոնք ընդունակ են ինքնուրույն տեղաշարժվել	
	ընդունակ են ինքնուրույն տեղաշարժվել	ընդունակ չեն ինքնուրույն տեղաշարժվել	ընդունակ են ինքնուրույն տեղաշարժվել	ընդունակ չեն ինքնուրույն տեղաշարժվել
1.	100	120	80	50
2.	*Մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների հողամասերի սահմանված մակերեսների նորմերը թույլատրվում է պակասեցնել, բայց 15 %-ից ոչ ավելի:			

93. Մասնագիտացված մանկական հիմնարկների, ծերերի ու հաշմանդամների համար տուն-ինտերնատների հողամասերը պետք է ունենան 1,6 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ, իսկ մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների և հոգեկայրդաբանական ինտերնատների՝ հողամասերը՝ 2,0 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ:

94. Հենասայլակի զբաղեցրած տարածությունը պետք է ունենա 0,9 մ-ից ոչ պակաս լայնություն և 1,5 մ-ից ոչ պակաս երկարություն:

95. Միակողմ երթևեկության դեպքում անցումի լայնությունը պետք է լինի 1,5 մ-ից ոչ պակաս, երկկողմ երթևեկության դեպքում՝ 1.8 մ-ից ոչ պակաս:

96. Անցումի բարձրությունը մինչև ելուստային կոնստրուկցիաների ներքևի մասը պետք է լինի 2,7 մ-ից ոչ պակաս:

97. Հաշմանդամի թիկնաթոռ-սայլակով 90 -180 աստիճանով ինքնուրույն շրջադարձի գոտու տրամագիծը պետք է ընդունել ոչ պակաս 1.4 մ:

98. Սարքավորումների ու կահույքի մոտեցումները պետք է ունենան 0,9 մ-ից ոչ պակաս լայնություն, իսկ հենասայլակը 90 աստիճանով շրջադարձի անհրաժեշտության դեպքում՝ 1,2 մ-ից ոչ պակաս:

99. Շենքերի, շինությունների վրա տեղադրվող սարքերը (փոստարկղեր, տաքսոֆոններ, տեղեկատվական վահանակներ և այլն), ինչպես նաև շենքերի ու շինությունների ելուստային մասերը չպետք է փոքրացնեն հենասայլակների երթևեկության ու մանևրելու համար անհրաժեշտ տարածությունը:

100. Հենասայլակավոր հաշմանդամների և տարեցների համար նախատեսված մայթերի ու արահետների երկայնական թեքությունները չպետք է գերազանցեն 50%-ը, լայնականը՝ 10% -ը:

101. Այն դեպքերում, երբ ռելեֆի պայմաններից ելնելով անհնար է ապահովել նշված սահմանները, թույլատրվում է երկայնական թեքությունը մեծացնել 10%-ով, 12 մ-ից ոչ ավելի երկարությամբ ուղիով, ապահովելով հորիզոնական միջանկյալ հարթակներ վայրէջքի երկարությամբ:

102. Փողոցի երթևեկելի մասի անցման տեղերում անվտանգության կղզյակով անցնող հետիոտնային ուղու լայնությունը պետք է լինի 3,0 մ ոչ պակաս կղզյակի սահմաններում, երկարությունը՝ 2,0 մ ոչ պակաս:

103. Բնակելի շրջաններում և միկրոշրջաններում հաշմանդամների տեղաշարժման համար նախատեսված հետիոտնային արահետների և մայթերի երկայնքով ամեն 300 մ-ի վրա անհրաժեշտ է նախատեսել նստարաններով կահավորված հանգստի տեղեր:

**XII. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՏԻՆԵՐ**

104. Համայնքների տարածքներում արտադրական, էներգետիկայի, կապի, տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտները (այսուհետ՝ ԱԷԿՏԿ) պետք է տեղաբաշխվեն համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով նախատեսված գոտիներում: Արտադրական մեծ հզորություններով օժտված խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքներում արդյունաբերական համալիրները կարող են խմբավորվել՝ կազմելով արդյունաբերական հանգույցներ կամ շրջաններ:

105. ԱԷԿՏԿ տարածքներում կազմակերպությունները խմբավորվում են, կազմելով տարբեր մեծության արդյունաբերական համալիրներ, որտեղ տեղակայվում են արտադրական և էներգետիկ նշանակության կազմակերպություններ, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի կազմակերպություններ, պահեստարաններ, բազաներ և օբյեկտներ, օժանդակ արտադրական, էներգետիկ, ինժեներական, տրանսպորտային և կոմունալ տնտեսություններ, համալիրում ներգրավված արտադրաարդյունաբերական անձնակազմի սպասարկման համար նախատեսվող օբյեկտներ, որոնք նպաստում են հիմնական կազմակերպությունների աշխատանքին և կարող են համատեղ բավարարել բնակավայրի կարիքները: Վթարի դեպքում հարակից շրջանների բնակչության վտանգավոր ազդեցությունից պաշտպանության և մյուս կազմակերպությունների անվտանգ գործունեության ապահովման համար տարածքում տեղակայվում են հրշեջ և վթարային-փրկարարական ծառայություններ:

106. ԱԷԿՏԿ և բնակեցման տարածքների միջև պետք է նախատեսվի սանիտարապաշտպանական գոտի՝ ըստ ՄՆ 245 սանիտարական նորմերի պահանջների: Սանիտարապաշտպանիչ գոտու լայնության բավարար լինելը պետք է հաստատել մթնոլորտային օդում արդյունաբերական կազմակերպությունների արտանետումներում պարունակվող վնասակար նյութերի ցրման հաշվարկներով, հաշվի առնելով սույն շինարարական նորմերի 23-րդ բաժնի պահանջները:

107. Պահպանական, սանիտարական գոտիների հողերի օգտագործման ու հողամասերի սահմանափակումների հատուկ իրավական ռեժիմը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և տրամադրվում են այն հիմնարկներին, որոնց գործունեությունը պահանջում է սանիտարական գոտիների սահմանման անհրաժեշտություն:

108. Սանիտարական, պահպանական գոտիները ենթակա են կանաչապատման՝ բնակելի և հասարակական կառուցապատմանը հարող մասում: Տարբեր չափերի սանիտարական գոտիների ծառապատման շերտի նվազագույն լայնությունն ընդունվում է սույն շինարարական նորմերի 12-րդ աղյուսակի պահանջներին համապատասխան:

Աղյուսակ 12

Հ/Հ	Սանիտարական գոտու չափը, մ	Ծառապատվող շերտի նվազագույն լայնությունը, մ
1.	500-1000	100
2.	100-300	50
3.	մինչև 100	20
4.	50	10

109. Սանիտարական և պահպանական գոտիների տարածքներում սանիտարական, հիգիենիկ, կառուցապատման, բարեկարգման և արդյունաբերական կազմակերպությանը հարող աղտոտված տարածքների շրջակա միջավայրի հետ կապված միջոցառումներն իրականացվում են վնասակար արտանետումների ունեցող կազմակերպության միջոցների հաշվին:

110. ԱԷԿՏԿ տարածքների տեղակայման և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիների սահմանման գործընթացում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ օրենքներով, սույն նորմատիվ փաստաթղթով, ինչպես նաև շինարարական, սանիտարական (ՄՆ 245) և անվտանգության այլ նորմերի պահանջներով:

111. Ըստ պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտիների չափի, տրանսպորտային կապերի, բնակելի թաղամասերի, մանկական, նախադպրոցական, ուսումնակրթական կառուցապատման, ինչպես նաև հանգստի կազմակերպման, առողջարարական, բնության և պատմամշակութային հուշարձանների պահպանման տարածքների նկատմամբ կազմակերպությունների տեղաբաշխմանը ներկայացվող պահանջների, ԱԷԿՏԿ տարածքների քաղաքաշինական դասակարգումը ներառում է՝

1) **խումբ Ա.** Մեծածավալ վնասակար արտանետումների աղբյուր հանդիսացող, 500-ից 1000 մ լայնությամբ սանիտարապաշտպանիչ գոտիներ և խոշոր բեռնաշրջանառությամբ երկաթուղագծեր պահանջող օբյեկտներով կառուցապատված տարածքներ,

2) **խումբ Բ.** Վնասակար արտանետումների աղբյուր հանդիսացող, 50-ից 300 մ լայնությամբ սանիտարապաշտպանիչ գոտիներ և երկաթուղագծեր պահանջող օբյեկտներով կառուցապատված տարածքներ,

3) **խումբ Գ.** Վնասակարության ցածրաստիճան արտանետումների աղբյուր հանդիսացող կամ վնասակար արտանետումներ չունեցող, բնակավայրերի սահմաններում կամ հարակից տարածքներում տեղադրվող արտադրություններ:

112. Արդյունաբերական, այլ արտադրական կազմակերպությունների, դրանց սպասարկման հաստատությունների զբաղեցրած տարածքը պետք է կազմի արդյունաբերական գոտու 60 %-ից ոչ պակաս մասը:

113. ԱԷԿՏԿ տարածքների ընտրությունը կատարվում է գյուղատնտեսության համար ոչ պիտանի կամ ցածր արժեք ունեցող և բնապահպանական տեսանկյունից արժեք չներկայացնող հողերի հաշվին՝ հողային, բնության հատուկ պահպանվող տարածքների, ընդերքի վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

114. ԱԷԿՏԿ տարածքների տեղակայում չի թույլատրվում.

1) հանքանյութերի և հանքահորերի կամ լեռնահարստացուցիչ կոմբինատների թափոնակույտերի վտանգավոր գոտիներում, պահպանելով ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջները,

2) անբարենպաստ երկրաբանական պայմաններով ու երևույթներով բնորոշվող (սողանքներ, կարստ, հեղեղներ, ձնահյուսեր և այլն) տարածքներում, որոնք կարող են սպառնալ կառույցների կայունությանը և կազմակերպությունների բնականոն գործունեությանը,

3) միջուկային և ռադիոակտիվ կայանների, ռադիոակտիվ նյութերի պահեստարանների և դրանց սանիտարական և պահպանական գոտիներում, արտադրական և սպառման ռադիոակտիվ թափոններով աղտոտված տեղամասերում,

4) ամբարտակների վնասման հետևանքով աղետային իրավիճակների առաջարման հնարավոր տեղամասերում,

5) առողջարանների սանիտարական պաշտպանության առաջին գոտում, եթե կազմակերպությունը չի օգտագործում առողջավայրի բնական բուժիչ միջոցները՝ ըստ ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջների:

115. Մթնոլորտային օդն աղտոտող կազմակերպությունների տեղակայումը կատարվում է բավարարելով մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները:

116. Մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր հանդիսացող կազմակերպությունների տեղաբաշխումը բնակելի կառուցապատման նկատմամբ կատարվում է՝ հաշվի առնելով քամիների գերակշռող ուղղությունը և չի նախատեսվում այն վայրերում, որտեղ գերակշռող քամիների արագությունը չի գերազանցում 1 մ/վրկ, կամ բնորոշ են հաճախակի անհողմություններ, քամու ռեժիմի կարգափոխություններ, ինչպես նաև մառախուղների կրկնությունը տարվա ընթացքում գերազանցում է օրերի 30%-ը, իսկ ձմռան ամիսներին՝ օրերի 50%-ը: Բնակչության առողջության և բնակության պայմանների վրա ազդող, ինչպես նաև վտանգավորության առաջին և երկրորդ դասին պատկանող կազմակերպությունների տեղաբաշխումը կատարվում է, բավարարելով բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները: Մթնոլորտային օդի հատուկ մաքրություն պահանջող արտադրությունները, որոնց սանիտարական և պահպանական գոտու չափը չի գերազանցում 100 մետրը, այդ թվում նաև սննդարդյունաբերական, դեղագործական, բժշկական սարքավորումների, միկրոէլեկտրոնիկայի և այլ

նման կազմակերպությունները, վնասակար արտանետումների աղբյուր հանդիսացող կազմակերպությունների հետ նույն ԱԷԿՏԿ տարածքներում կամ դրանց սանիտարական և պահպանական գոտիներում չեն տեղակայվում: ԱԷԿՏԿ տարածքը նախատեսվում է նման արտադրությունների նկատմամբ գերակշռող քամիների հողմհակառակ ուղղությամբ:

117. Արտադրական, էներգետիկ, կապի և տրանսպորտային կազմակերպությունները, ինժեներական կառուցվածքները և կոմունալ տնտեսությունները, կարող են տեղակայվել ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան: Բնակչության ամենօրյա անմիջական սպասարկման հետ չկապված պահեստարանների համալիրներն անհրաժեշտ է ձևավորել խոշորագույն և խոշոր բնակավայրերից դուրս՝ մոտեցնելով արտաքին տրանսպորտի հանգույցներին, լոգիստիկ համալիրներին:

118. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել միջոցառումներ՝ առավելագույնս պաշտպանելու բնակելի և հասարակական գոտիներն այդ համալիրների բացասական ազդեցություններից, ինչպես նաև այդ արտադրությունները՝ եթե դրանք կապված են սննդի արտադրության, այլ վնասակար արտադրությունների, տրանսպորտային արտանետումների բացասական ազդեցության հետ: Գյուղական բնակավայրերի արդյունաբերական գոտիների ձևավորման ժամանակ հեռավորությունը գյուղատնտեսական կազմակերպությունների, շենքերի և շինությունների միջև հարկավոր է նախատեսել՝ ելնելով սանիտարական, անասնաբուժական, հակահրդեհային և տեխնոլոգիական պահանջներից, ինչպես նաև ապահովելով ՍՆԻՊ II-97, ՍՆԻՊ 2.10.03, ՍՆԻՊ 2.10.04, ՍՆԻՊ 2.10.05, ՍՆԻՊ 2.11.02, և ՀՀՇՆ 21-01 շինարարական նորմերի պահանջները:

119. Անասնապահական համալիրների տարածքներում և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիներում չի թույլատրվում տեղակայել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպություններ, սննդի և դրանց հավասարեցված օբյեկտներ:

120. Բարձր լարման էլեկտրահաղորդման գծերը, տեղական նշանակության այլ գծային օբյեկտների կառուցվածքները հարկավոր է տեղակայել ցանքաշրջանառության դաշտերի, անտառաշերտերի, գոյություն ունեցող գծային կառուցվածքների եզրագծերով՝ ապահովելով անարգել մատչելիությունը գյուղատնտեսական հանդակներով չզբաղեցված տարածքներից դեպի ինժեներական հաղորդակցուղիներ:

121. Գյուղական բնակավայրերի արտադրական տարածքները չպետք է մասնատված լինեն առանձին հատվածների հիմնական երկաթուղային կամ ավտոմոբիլային ճանապարհներով:

122. Էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուր հանդիսացող կազմակերպությունների, օբյեկտների և սարքվածքների տեղաբաշխումն այլ արդյունաբերական օբյեկտների և բնակելի տարածքների նկատմամբ իրականացվում է ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

123. Ջրերի վիճակի վրա ազդող, գետերի, ջրամբարների ավիամերձ գոտիներում կազմակերպությունների տեղակայումը կատարվում է պահպանելով՝ ՀՀ քաղաքաշինական, ջրային օրենսդրությամբ և ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերով սահմանված պահանջները:

124. Կենդանիների բնակության և բազմացման պայմանների վրա ազդող կազմակերպությունների տեղաբաշխումը պետք է բավարարի կենդանական աշխարհի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

125. Բուսական աշխարհի տեսակների պահպանման, դրանց համատեղելիության, այլազանության, բույսերի աճի և բնապահպանական համակարգերի հավասարակշռության վրա ազդող կազմակերպությունների տեղաբաշխումը պետք է բավարարի բուսական աշխարհի վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին:

126. Քաղաքային և գյուղական բնակավայրերի նախագծման ժամանակ հարկավոր է նախատեսել տրանսպորտի միասնական համակարգ՝ բնակավայրի հատակագծային կառուցվածքի և դրան հարող տարածքների միջև՝ անվտանգ, ապահով և արագընթաց կապեր ապահովելով տարաբնակեցման համակարգի բոլոր բնակավայրերի, մերձքաղաքային գոտում տեղակայված օբյեկտների, արտաքին տրանսպորտի օբյեկտների միջև:

127. Ուղևորային կայարաններն ու կայանները (երկաթուղային, ավտոմոբիլային և օդանավային) հարկավոր է տեղաբաշխել այնպես, որ ապահովվեն տրանսպորտային հարմարավետ կապեր քաղաքի կենտրոնի, արդյունաբերական և բնակելի շրջանների, ինչպես նաև կայարանների միջև:

128. Երկաթուղային ընդհանուր ցանցի բեռների տեսակավորման նոր կայարաններն անհրաժեշտ է տեղաբաշխել քաղաքի սահմաններից դուրս, իսկ տեխնիկական ուղևորային կայարանները,

շարժակազմի պահեստային կայանատեղերը, երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի բեռնատար կայաններն ու կոնտեյներային հրապարակները՝ բնակեցման տարածքից դուրս: Քաղաքի բնակեցման տարածքի սահմաններում բեռների երկարաժամկետ պահպանման պահեստներն ու հրապարակները պետք է տեղակայվեն պահեստարանների գոտում:

129. Բոլոր տիպի պահեստարանների տեղաբաշխման դեպքում անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել ստորգետնյա տարածքները, համապատասխան հիմնավորումների և սանիտարահիգիենիկ պահանջների ապահովման պարագայում՝ նաև շահագործված հանքախորշերի տարածքները: Բնակչության սպասարկմանը ծառայող պահեստարանների հողատարածքների, շենքերի չափերը և պահեստների տարողունակությունը որոշվում են սույն շինարարական նորմերի 2-րդ հավելվածում տրված ցուցանիշների վրա հիմնված հաշվարկներով և ապահովելով ՀՀՇՆ IV-11.03.02, ՄՆԻՊ 2.10.02 շինարարական նորմերի պահանջները:

130. Պայթուցիկ նյութերի, դրանց հիման վրա պատրաստվող արտադրատեսակների արտադրության և պահուստավորման օբյեկտների, (կազմակերպությունների, զինանոցների, բազաների, պահեստարանների) համար պետք է նախատեսել արգելագոտիներ (վտանգավոր գոտիներ) և շրջաններ, որոնց չափերը որոշվում են պայթեցման աշխատանքների անվտանգության հատուկ նորմերով: Ուժեղ ներգործության թունավոր նյութերի պահեստարանների հարակից տարածքներում կազմակերպությունների տեղաբաշխումը կատարվում է ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

131. Կազմակերպությունների թափոնակուտակիչների, խարամակուտակիչների հանքամնացուկների պահեստարանների կազմակերպումը, ինչպես նաև մնացուկների պահեստավորումը թույլատրվում է միայն դրանց օգտահանման (ուտիլիզացիա) անհնարինության հիմնավորման և սանիտարական գոտու ապահովման դեպքում:

132. Ծանր մետաղներ, մկնդեղ, սնդիկ, ածուխ և այլ բունկվող ու թունավոր նյութեր պարունակող արտադրական թափոնակուտակիչները պետք է տարանջատվեն բնակելի և հասարակական շենքերից ու շինություններից սանիտարական գոտիներով:

133. Համահանգուցային նշանակության տեսակավորման և բեռնային կայարանների տեղաբաշխումն ու տարանցիկ գնացքների բացթողումը պետք է նախատեսել մերձքաղաքային շրջանցիկ ուղիների վրա:

134. Տարբեր մակարդակներում երկաթուղիների փոխհատում պետք է նախատեսել բնակեցման տարածքի սահմաններից դուրս: Բնակավայրի տարածքի սահմաններում երկաթուղիների փոխհատումը փողոցների, ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև հասարակական ուղևորատար էլեկտրատրանսպորտի գծերի հետ նախագծվում է ՀՀՇՆ IV-11.05.04, ՀՀՇՆ IV-11.05.02, ՄՆԻՊ 2.05.03 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

135. Երկաթուղային գծերից բնակելի կառուցապատումն անհրաժեշտ է տարանջատել 100 մ լայնությամբ սանիտարապաշտպանիչ գոտիով՝ հաշված եզրային երկաթուղու առանցքից: Համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորման դեպքում, հատուկ աղմկապաշտպան միջոցառումների իրականացման դեպքում նշված գոտու լայնությունը թույլատրվում է փոքրացնել, ընդունելով 50 մ-ից ոչ պակաս:

136. Տեսակավորման կայարանից մինչև բնակելի կառուցապատում հեռավորություններն ընդունվում են հաշվարկի հիման վրա, հաշվի առնելով բեռնաշրջանառության ծավալները, տեղափոխվող բեռների հրդեհա- և պայթյունավտանգությունը, ինչպես նաև աղմուկի և թրթռումների թույլատրելի մակարդակները՝ ՀՀՇՆ 22-04 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

137. Սանիտարական և պահպանական գոտում, երկաթուղու օտարման շերտից դուրս թույլատրվում է անցկացնել ավտոմոբիլային ճանապարհներ, տեղակայել ավտոմոբիլների կայանատեղեր և կանգառատեղեր, երկաթուղու և ավտոմոբիլային ճանապարհների գործառույթների հետ անմիջականորեն կապված պահեստարաններ: Սանիտարական գոտու մակերեսի կեսից ոչ պակաս մասը պետք է կանաչապատվի:

138. Շրջանցիկ ճանապարհների հողային պաստառի եզրից մինչև բնակելի և ամառանոցային կառուցապատումը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի համաձայն, ընդունելով՝ I, II և III կարգի ճանապարհների համար՝ 100 և 50 մ՝ և IV կարգի ճանապարհների համար 50 և 25 մ-ից ոչ պակաս: Ավտոմոբիլների աղմուկից և արտանետած գազերից կառուցապատումը պաշտպանելու համար ճանապարհի երկայնքով անհրաժեշտ է նախատեսել 10 մ-ից ոչ պակաս լայնությամբ անտառաշերտ:

139. Միջպետական նշանակության I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհները, պետք է նախագծել բնակավայրերի բնակեցման տարածքների շրջանցումով, բնակավայրի համար



նախատեսելով առանձին մուտքեր:

140. Բացառիկ դեպքերում, երբ տեխնիկատնտեսական կամ այլ նկատառումներով

անհրաժեշտություն է առաջանում հանրապետական նշանակության II և III կարգի ճանապարհներն անցկացնել բնակեցման գոտու միջով, պետք է նախատեսել տարանջատման հատուկ ինժեներական կառուցվածքներ՝ ուղեկամուրջներ, թունելներ, սրահներ, հանույթներ և այլն, ապահովելով համապատասխան սանիտարական և բնապահպանական նորմատիվ պահանջները:

141. Ճանապարհի երկայնքով ինժեներական հաղորդակցուղիների անցկացումը և դրանց փոխհատումը ճանապարհի հետ պետք է նախագծել ըստ ՀՀ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների: Ճանապարհի վերակառուցման ժամանակ ճանապարհի երկարությամբ օտարման շերտում գտնվող ինժեներական հաղորդակցուղիները պետք է վերափոխվեն կամ սահմանված չափով հեռացվեն ճանապարհից:

142. Այն դեպքերում, երբ ավտոմոբիլային ճանապարհի անցկացման ժամանակ մերձակա կառուցապատման տարածքում տրանսպորտային աղմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը, անհրաժեշտ է նախատեսել հատուկ աղմկապաշտպան միջոցառումներ (ճանապարհի անցկացումը հանույթով, աղմկապաշտպան հողաթմբերի, աղմկակլանիչ և այլ կառուցվածքների շինարարություն, ծառատունկ և այլն), որոնք կապահովեն աղմուկի մակարդակի իջեցումը մինչև ՀՀՇՆ 22-04 շինարարական նորմերով սահմանված ցուցանիշը:

143. Ընդհանուր օգտագործման կանաչ գոտիներում, առողջավայրերի, առողջարարական ճամբարների և նմանատիպ օբյեկտների տեղակայման շրջաններում ընդհանուր օգտագործման ճանապարհներն անցկացվում են սանիտարական գոտու սահմաններից դուրս, անհնարինության դեպքում՝ նախատեսելով պաշտպանական միջոցառումներ:

144. Օդանավակայաններն ու ուղղաթիռակայանները տեղակայվում են ըստ ՄՆ 457-, ՀՀՇՆ IV-11.05.03, ՀՀՇՆ IV-11.05.03 շինարարական նորմերի պահանջների, բնակեցման տարածքից ու բնակչության զանգվածային հանգստի գոտիներից թռիչքների անվտանգությունն ու օդազնացության աղմուկի թույլատրելի մակարդակը ապահովող հեռավորության վրա, հաշվի առնելով բնակավայրերի՝ սանիտարական նորմերով սահմանված աղմուկի և էլեկտրամագնիսական ճառագայթման թույլատրելի մակարդակները: Նշված պահանջները պետք է պահպանվեն նաև գործող օդանավակայանների շրջանում նոր բնակեցման տարածքներ և զանգվածային հանգստի գոտիներ հիմնելու դեպքում:

145. Դժվարամատչելի բարձրլեռնային բնակավայրերն անհրաժեշտ է ապահովել ուղղաթիռային հրապարակներով՝ միաժամանակ երկու ուղղաթիռ ընդունելու պայմանով:

146. Շենքերի և շինությունների տեղաբաշխումն օդանավակայանների նկատմամբ իրականացվում է ՀՀՇՆ IV-11.05.03 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

147. Օդանավակայանների շրջանում շենքերի, էլեկտրահաղորդման բարձր լարման գծերի, ռադիոտեխնիկական և այլ կառույցների տեղադրումը, որոնք կարող են սպառնալ օդանավերի թռիչքի անվտանգությանը կամ խանգարել նավավարման միջոցների անխափան աշխատանքին, պետք է համաձայնեցվեն Հայաստանի Հանրապետությունում ավիացիայի բնագավառի պետական կառավարում իրականացնող լիազորված մարմնի հետ: Այն կազմակերպությունների ու հիմնարկների ցանկը, որոնց հետ անհրաժեշտ է համաձայնություն ձեռք բերել, որոշում է ավիացիայի բնագավառի պետական կառավարում իրականացնող լիազորված մարմինը: Համաձայնեցման է ենթակա ստորև ներկայացվող օբյեկտների տեղադրումը.

1) օդանավակայանի օդային մուտքերի գոտիների սահմաններում բոլոր օբյեկտների, ինչպես նաև այդ գոտիների սահմաններից դուրս օդանավակայանի հսկիչ կետերից (ՕԿԿ) 10 կմ շառավղով տիրույթում,

2) ՕԿԿ-ից 30 կմ շառավղով տիրույթի օբյեկտների, որոնց բարձրությունը օդակայանի համեմատությամբ 50 մ և ավելի է,

3) անկախ տեղադրման վայրից.

ա. գետնի մակերևույթից 50 մ և ավելի բարձրությամբ օբյեկտների,

բ. կապի և էլեկտրահաղորդման գծերի, ինչպես նաև ռադիո- և էլեկտրամագնիսական ճառագայթում արձակող օբյեկտների, որոնք կարող են խոչնդոտել ռադիոտեխնիկական սարքերի նորմալ աշխատանքին,

գ. պայթուցիկ նավթային օբյեկտների,

դ. գազերի վթարային այրման համար ջահերի,

ե. արդյունաբերական և այլ կազմակերպությունների և շինությունների, որոնց գործունեությունը

օդանավակայանի սանիտարական և պաշտպանական գոտու տիրույթում կարող է առաջացնել տեսանելիության վատթարացում:

148. Արգելվում է ՕՀԿ-ից 15 կմ-ից պակաս հեռավորության վրա տեղադրել աղբակուտակման տեղերը, գազանաբուժական, անասնամորթի և այլ օբյեկտների շինարարությունը, որոնք կարող են գրավել թռչուններին և առաջացնել դրանց կուտակումներ:

149. Նավակայաններն ու նավամատուցները պետք է տեղադրել բնակեցման տարածքի սահմաններից դուրս, բնակելի կառուցապատումից 100 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

150. Նավակայանների տարածքում անհրաժեշտ է նախատեսել իջատեղեր՝ դեպի ջուրը և կոշտ ծածկույթով հարթակներ՝ հրշեջ մեքենաների ջրալցման համար:

151. Փոքր տարողության նավերի նավակայան տեղերն ու առափնյա կայանները, որոնք պատկանում են սպորտային ակումբներին կամ անհատ քաղաքացիներին, անհրաժեշտ է տեղակայել բնակեցման տարածքից ու բնակչության զանգվածային հանգստյան գոտիներից դուրս:

152. Նավերի միաշարք պահպանության դեպքում մեկ տեղամասի չափը պետք է ընդունել զբոսանավերի համար՝ 27 մ<sup>2</sup>, սպորտային նավերի համար՝ 75 մ<sup>2</sup>:

153. Ինժեներական ցանցերի ուղեգծերի ընտրության ժամանակ անհրաժեշտ է առավելությունը տալ ինժեներատեղակայման և սեյսմիկ ռիսկերից պաշտպանվածության առումով կայուն տեղամասերին, շրջանցելով խզվածքներով, խիստ տարբերվող հատկանիշներով գրունտների շերտավորումով, սողանքային լանջերով և ջրակալած տեղամասերը: Նշված պայմանների կատարման անհնարինության դեպքում անհրաժեշտ է նախատեսել ցանցերի անցկացման անբարենպաստ պայմանները փոխհատուցող միջոցառումներ՝ ապահովելով ՍՆ 452, ՍՆ 456, ՍՆ 461, ՍՆ 465 շինարարական նորմերի պահանջները:

154. Շինությունները, հնարավորության սահմաններում, անհրաժեշտ է տեղադրել ինժեներատեղակայման և սեյսմիկ ռիսկերից պաշտպանվածության տեսակետից բարենպաստ պայմաններով տեղամասերում, ինչը թույլ կտա բարձրացնել շենքերի և շինությունների սեյսմակայունությունը՝ շրջանի ընդհանուր սեյսմիկ պայմանների հետ համեմատած (ըստ միկրոշրջանացման քարտեզի): Այն դեպքում, երբ շինարարական տեղամասը հնարավոր չէ տեղափոխել թույլ կամ ջրհագեցած գրունտներով տարածքներից, անհրաժեշտ է կիրառել հատուկ միջոցառումներ հուսալի կառուցման համար, այդ թվում՝ ջրափջեցում, գրունտի արհեստական խտացում կամ ամրացում:

155. Գրունտային ջրերի բարձր մակարդակի դեպքում անհրաժեշտ է հողածածկել ինչպես ամբողջ շինարարական հրապարակը, այնպես էլ առանձին կառույցների տեղամասերը: Եթե նշված միջոցառումներն անհնարին է իրականացնել, կամ դրանք տնտեսապես նպատակահարմար չեն, ապա անհրաժեշտ է կատարել ջրափջեցում:

156. Ինժեներական ցանցերը առավելապես պետք է տեղաբաշխել փողոցների և ճանապարհների լայնական սահմաններում, մայրերի տակ կամ բաժանիչ գոտիներում՝ ջերմային ցանցեր կամ անցումային թունելներ, բաժանիչ գոտիներում՝ ջրնուղ, գազատար, տնտեսական-կենցաղային և հեղեղատար կոյուղի: Կարմիր գծի և կառուցապատման գծի միջև ընկած գոտում անհրաժեշտ է տեղադրել ցածր ճնշման գազի և մալուխային ցանցերը (ուժային, կապի, ազդանշանային և կարգավորիչ (դիսպետչերային)): Երթևեկային մասի 22 մ-ից ավելի լայնության դեպքում անհրաժեշտ է ջրնուղի ցանցի տեղադրումը նախատեսել փողոցի երկու կողմերում:

157. Փողոցների և ճանապարհների երթևեկային մասերի ծածկույթների հիմնական շինարարության կամ վերակառուցման ժամանակ դրանց տակ գտնվող ինժեներական ցանցերը անհրաժեշտ է տեղափոխել մայրերի կամ բաժանիչ գոտիների տակ:

158. Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է պահպանել գոյություն ունեցող ցանցերը փողոցների երթևեկային մասերի տակ, ինչպես նաև նոր ցանցեր անցկացնել անցուղիներով և թունելներով:

159. Տեխնիկական անհրաժեշտության դեպքում թույլատրվում է գազամուղի անցկացումը փողոցների երթևեկային մասերի տակով՝ ապահովելով անվտանգության կանոնները:

160. Փողոցի լայնական կտրվածքում տեղի պակասության (սուղ պայմաններում) դեպքում, 500-ից մինչև 900 մմ տրամագծով ջերմային ցանցերի, մինչև 500 մմ տրամագծով ջրատարի, 10-ից ավել կապի

մալուխների և մինչև 10 կՎ լարվածության 10 ուժային մալուխների միաժամանակյա տեղադրման անհրաժեշտության դեպքում, մայրուղիների և պատմամշակութային շրջանների վերակառուցման ժամանակ, ինչպես նաև մայրուղիների և երկաթուղային գծերի հետ հատման հատվածներում ստորգետնյա ինժեներական ցանցերը պետք է նախատեսել ընդհանուր խրամատում կամ թունելներում: Թունելներում թույլատրվում է նաև օդամուղների և այլ ինժեներական ցանցերի անցկացում: Դյուրավառ և այրվող հեղուկներ տեղափոխող խողովակաշարերի և գազամուղների համատեղ անցկացումը մալուխային գծերի հետ չի թույլատրվում:

161. Բարդ գրունտային պայմաններով (փխրահողային, նստվածքային) կառուցապատման տեղամասերում անհրաժեշտ է ինժեներական ցանցերը անցկացնել անցանելի թունելներով:

162. Ստորգետնյա ինժեներական ցանցերից մինչև մոտակա շենքերն ու շինությունները հորիզոնական (առույս) հեռավորությունները պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 5-րդ հավելվածի 1-ին աղյուսակի:

163. Թույլատրվում է նախատեսել ստորգետնյա ինժեներական ցանցերի տեղադրումը հենարանների և խողովակաշարերի էստակադների (ուղեկառուրջների) ու հպումային ցանցերի սահմաններում այնպիսի միջոցառումների իրագործման պայմանով, որոնք բացառում են ցանցերի վնասվածքի հնարավորությունը հիմքի նստվածքի դեպքում, ինչպես նաև հիմքերի վնասվածքը՝ այդ ցանցերում տեղի ունեցած վթարի դեպքում:

164. Շինարարական ստորգետնյա ջրաիջեցման եղանակի կիրառմամբ տեղակայվող ինժեներական ցանցերի հեռավորությունը մինչև շենքերն ու շինությունները պետք է գերազանցի վերջիններիս հիմնատակերի գրունտների ամրության հնարավոր խախտման գոտին:

165. 110-220 կՎ լարման ուժային մալուխների հեռավորությունը ցանկապատերի, էստակադների հիմքերից, հպումային ցանցի և կապի գծերի հենարաններից պետք է ընդունել 1,5 մ:

166. 20 մ-ից պակաս (կոնստրուկցիայի վերևից մինչև հողի մակերևույթը) խորության վրա գտնվող մետրոպոլիտենի թուջե տյուբինգներով (մետաղե ամրակաօղակ), ինչպես նաև երկաթբետոնե կամ բետոնե (սոսնձված ջրամեկուսիչով) ստորգետնյա կառույցներից հորիզոնական հեռավորությունները պետք է ընդունել. մինչև ջրմուղի, կոյուղու, ջերմային ցանցերը՝ 5 մ, մինչև 10 կՎ լարման մալուխները՝ 1 մ, իսկ 10 կՎ-ից բարձրը՝ 3 մ:

167. Առանց սոսնձված մեկուսիչի երեսարկումների կիրառման դեպքում հեռավորությունը նշված շինություններից պետք է ընդունել մինչև 8 մ, իսկ կոյուղու ցանցից՝ մինչև 6 մ:

168. Ոռոգելի շրջաններում ոչ նստվածքային գրունտների դեպքում ստորգետնյա ինժեներական ցանցերի հեռավորությունը մինչև ոռոգման ջրանցքները (առվակի եզրը) պետք է ընդունել՝ 1 մ - ցածր և միջին ճնշման գազամուղներից, ինչպես նաև ջրմուղուց, կոյուղուց, ջրհոսներից և այրվող հեղուկների խողովակաշարերից, 2 մ - մինչև 0,6 ՄՊա (6 կգո/ սմ<sup>2</sup>) բարձր ճնշման գազամուղներից, ջերմատարներից, տնտեսական-կենցաղային և անձրևային կոյուղուց, 1,5 մ - ուժային և կապի մալուխներից, փողոցային ցանցի ոռոգման ջրանցքներից հեռավորությունը մինչև շենքերի և կառույցների հիմքերը՝ 5 մ:

169. Ինժեներական ստորգետնյա հարևան ցանցերի հեռավորությունը միմյանցից դրանց զուգահեռ տեղադրման դեպքում պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 5-րդ հավելվածի 2-րդ աղյուսակի, իսկ գյուղական վայրերի շենքերում ինժեներական ցանցերի ներանցումներում՝ ոչ պակաս 0,5 մ-ից: Հարակից խողովակաշարերի տեղադրման 0,4 մ-ից ավելի խորության դեպքում սույն շինարարական նորմերի 5-րդ հավելվածի 2-րդ աղյուսակում բերված հեռավորությունները պետք է մեծացնել՝ հաշվի առնելով խրամատի շեպերի թեքությունների, բայց ընդունել խրամատի խորությունից մինչև լիրաթմբի հատակը և հանվածքի եզերքը հեռավորությունից ոչ պակաս:

170. Ինժեներական ցանցերը միմյանց հետ հատվելիս նրանց միջև ուղղաձիգ հեռավորությունը պետք է ընդունել համաձայն ՀՀՇՆ III-9.02.02 շինարարական նորմերի պահանջների:

171. Ինժեներական ցանցերի հատումը մետրոպոլիտենի կառույցների հետ պետք է նախատեսել 90 աստիճան անկյան տակ, վերակառուցման պայմաններում թույլատրվում է հատման անկյունը փոքրացնել մինչև 60 աստիճան: Չի թույլատրվում հատել ինժեներական ցանցերով մետրոպոլիտենի կայարանային կառույցները՝ ՄՆԻՊ II-40-80 շինարարական նորմերի պահանջների համապատասխան:

172. Հատման տեղամասերում խողովակաշարերը պետք է ունենան միակողմանի թեքություն և պարփակված լինեն պաշտպանիչ կառուցվածքներով (մետաղական պատյաններ, միաձույլ բետոնե և երկաթբետոնե անցուղիներ, կոլեկտորներ, թունելներ): Հեռավորությունը մետրոպոլիտենի կառույցների արտաքին մակերեսի երեսապատումից մինչև պաշտպանիչ կոնստրուկցիաների վերջը պետք է լինեն 10 մ-ից ոչ պակաս ամեն կողմից, իսկ ուղղաձիգ հեռավորությունը (առույս) երեսարկման կամ

երկաթգծի հիմքի (հատակի վերգետնյա գծերի դեպքում) և պաշտպանիչ կոնստրուկցիաների միջև՝ 1 մ-ից ոչ պակաս: Գազատարների անցկացում թունելների տակով չի թույլատրվում՝ համաձայն ՇՆՁ IV-12.101-2004 շինարարական նորմերին ձեռնարկի պահանջների:

173. Ինժեներական ցանցերի անցումները մետրոպոլիտենի վերգետնյա գծերի տակով անհրաժեշտ է նախատեսել համաձայն ԳՕՍՍ 23961- ստանդարտի: Ընդ որում, ցանցերը պետք է դուրս բերված լինեն մետրոպոլիտենի վերգետնյա տեղամասերի ցանկապատի սահմաններից դուրս՝ 3 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

174. Վերը շարադրված պահանջները մետրոպոլիտենի կառույցների ինժեներական ցանցերի հատումներին չեն ներկայացվում, պաշտպանիչ կոնստրուկցիաների կառուցում չեն պահանջվում, եթե մետրոպոլիտենի կառույցները տեղադրված են 20 մ և ավելի խորության վրա (կոնստրուկցիաների վերևից մինչև հողի մակերևույթը), ինչպես նաև, եթե ինժեներական ցանցերը տեղադրված են 6 մ-ից ոչ պակաս հզորության կավերում, չճաքճքված ժայռային կամ կիսաժայռային գրունտներում:

175. Մետրոպոլիտենի կառույցների հատման տեղերում ճնշումային խողովակաշարերը պետք է նախատեսել պողպատյա խողովակներից՝ կառուցելով հատման տեղամասի երկու կողմերում փակիչ արմատուրներով ջրթող հորեր:

176. Ստորգետնյա ինժեներական ցանցերի և հետիոտնային ստորգետնյա անցումների հատման դեպքում պետք է նախատեսել խողովակաշարերի անցկացում թունելի տակով կամ բետոնե հատակի շերտում, իսկ ուժային և կապի մալուխները՝ թունելի վերևով:

177. Արդյունաբերական կազմակերպությունների և պահեստների մատակարարման համար դյուրավառ և վառվող հեղուկներով, ինչպես նաև հեղուկացված գազերով խողովակաշարերի անցկացումը բնակելի տարածքով չի թույլատրվում:

178. Բազային կայանները ռադիոկապ են հաստատում բջջային հեռախոսների հետ, ինչի արդյունքում դրանք երկուսն էլ հանդիսանում են էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրներ դեցիմետրային (ՌԻՎՉ) միջակայքում:

179. Բջջային կայանների ալեհավաքները տեղադրվում են երկրի մակերևույթից 15-100 մ բարձրության վրա, արդեն գոյություն ունեցող կառույցների (հասարակական, ծառայողական, արտադրական և բնակելի շենքերի, արտադրական կազմակերպությունների ծխատար խողովակների) կամ հատուկ սարքավորված կայմերի վրա: Բազային կայանների տեղանքի նկատմամբ սանիտարահիգիենիկ սահմանափակումներն առնչվում են միայն էլեկտրամագնիսական ճառագայթման թույլատրելի մակարդակի ապահովմանը, որոնք սահմանված են ՈՒՎՊ-010 սանիտարական կանոններով և նորմերով:

180. Բջջային կապի ալեհավաքները տեղակայման ժամանակ պետք է հաշվի առնել, որ դրանք իրենց բնույթով իոնիզացնող ճառագայթում չեն և էլեկտրամագնիսական ճառագայթումը ալեհավաքից մարում է հեռավորության քառակուսուն համաչափ: Հնարավոր դիսկերից խուսափելու համար սահմանված են էլեկտրամագնիսական ճառագայթման հզորության հոսքի խտության նորմեր՝ 10 մկվատ 1 սմ<sup>2</sup>-ում: Բազային կայանների տեղակայումը մանկական հաստատությունների և բուժական հիմնարկների տարածքներում սահմանափակվում է:

181. Բազային կայանների հենարանների համար սահմանվում են դրանց բարձրությանը հավասար շառավղով պաշտպանիչ գոտի: Այդ գոտում արգելվում է որևէ տիպի կառուցապատումը, ճառատնկումները, հրդեհա և պայթյունավտանգ նյութերի տեղակայումը:

**XIII. ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ, ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ**

182. Բնակավայրերում անհրաժեշտ է նախատեսել չընդհատվող (անընդհատ) լանդշաֆտառեկրեացիոն տարածքների համակարգ, որը պետք է ձևավորվի որպես ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիների և բնական ռեկրեացիոն համալիրների հետ փոխկապակցված բաց տարածությունների ամբողջություն, որտեղ ներառվում են քաղաքային անտառապուրակների, զբոսայգիների, ճեմելիքների (բուվարների), պուրակների և դրանց սահմաններում գտնվող լճակների, ջրամբարների, լողափերով զբաղեցված տարածքները, բնակավայրերի անտառները, անտառապուրակները, անտառապաշտպան գոտիները, ջրամբարները, գյուղատնտեսական հողերը և այն հանդակները, ինչպես նաև տարածքները, որոնք օգտագործվում են հանգստի, զբոսաշրջության, ֆիզիկական դաստիարակությամբ և սպորտով զբաղվելու նպատակներով :

183. Տարբեր նշանակության կանաչապատ տարածքների տեսակարար կշիռը բնակավայրի ընդհանուր տարածքի նկատմամբ պետք է լինի 40 %-ից ոչ պակաս, իսկ բնակելի շրջանի տարածքի սահմաններում՝ 25 %-ից ոչ պակաս (միկրոշրջանի 1 կմ-ից ավելի կանաչապատ սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող կազմակերպություններ ունեցող քաղաքներում, կառուցապատման տարածքի կանաչապատման մակարդակը հարկավոր է ավելացնել առնվազն 15 %-ով)՝ ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի 1318-Ն որոշմամբ հաստատված բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի դրույթների համաձայն:

184. Բնակավայրերի տարածքներում տեղակայվող ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների՝ զբոսայգիներ, այգիներ, պուրակներ, ճեմելիքներ, մակերեսն ընդունվում է ըստ սույն շինարարական նորմերի 13-րդ աղյուսակի:

Աղյուսակ 13

Հ/Հ	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	Տարածքների կանաչապատման մակերես, մ <sup>2</sup> /մարդ			
		խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքների	միջին քաղաքների	փոքր քաղաքների	գյուղական բնակավայրերի
1.	Համաքաղաքային	10	6-8	8 (10)*	12
2.	Բնակելի շրջանների	6	6	-	-
3.	* Փակագծերում տրված է 20 հազար մարդուց պակաս բնակչությամբ փոքր քաղաքների կանաչապատ տարածքների չափերը:				
4.	Քաղաք-առողջավայրերի համար, համաքաղաքային նշանակության ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ներկայացված նորմերը հարկավոր է ավելացնել, սակայն 50 %-ից ոչ ավելի:				
5.	Անտառներով շրջապատված, խոշոր գետերի կամ ջրամբարների ափերին տեղակայված միջին, փոքր քաղաքներում և գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների մակերեսը թույլատրվում է նվազեցնել՝ սակայն 20 %-ից ոչ ավելի:				

185. Խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքներում՝ պահպանելով ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերի պահանջները, պետք է նախատեսել խոշոր քաղաքային անտառների գոյություն ունեցող զանգվածների՝ անտառապուրակների փոխակերպման հնարավորությունը, սակայն մեկ մարդու հաշվարկով 5 մ<sup>2</sup>-ից ոչ ավելի: Ընդ որում, հարկավոր է պահպանել և բարելավել ձևավորված լանդշաֆտները՝ ապահովելով դրանց տարածական փոխադարձ կապերը բնական էկոհամակարգերի հետ:

186. Հասարակական տրանսպորտի միջոցներով քաղաքային և շրջանային այգիների հասանելիության ժամանակահատվածը (առանց հաշվի առնելու տրանսպորտին սպասելու ժամանակը) պետք է լինի 20 րոպեից ոչ ավելի:

187. Հանգստի գոտիների կազմում հարկավոր է նախատեսել կենդանաբանական այգիների տեղակայումը:

188. Կենդանաբանական այգու սահմանագծից մինչև բնակելի և հասարակական կառուցապատումն ընկած հեռավորությունը սահմանվում է 50 մ-ից ոչ պակաս:

189. Զբոսայգիների տեղակայման ժամանակ հարկավոր է առավելագույնս պահպանել գոյություն ունեցող տնկարկներով և ջրավազաններով հատվածները:

190. Զբոսայգիների և պուրակների մակերեսները հարկավոր է ընդունել սույն շինարարական նորմերի 14-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 14

Հ/Հ	Անվանումը	Մակերեսը, հա
1.	Քաղաքային զբոսայգիներ	15
2.	Բնակելի շրջանների այգիներ	3
3.	Պուրակներ	0.5

191. Խոշորագույն, խոշոր և մեծ քաղաքներում, բացի քաղաքային և շրջանային նշանակության

զբոսայգիներից անհրաժեշտ է նախատեսել մասնագիտացված՝ մանկական, մարզական, ցուցահանդեսային, կենդանաբանական, բուսաբանական և այլ այգիներ, որոնց չափերը որոշվում են նախագծման առաջադրանքով: Մանկական այգիների մոտավոր չափերը թույլատրվում է ընդունել 5 մ<sup>2</sup>/մարդ հաշվարկով, մարզական այգիների նորմերը՝ 12 մ<sup>2</sup>/մարդ չափով՝ հրապարակների և սպորտային կառույցների չափերն ընդունելով ըստ սույն շինարարական նորմերի 7-րդ հավելվածի:

192. Պատմականորեն ձևավորված կառուցապատման վերակառուցման կամ վերականգնման պայմաններում նշված տարրերի մակերեսները թույլատրվում է նվազեցնել, բայց 20 %-ից ոչ ավելի:

193. Զբոսայգիների տարածքների ընդհանուր հաշվեկշռում կանաչածածկ տարածքների մակերեսը պետք է ընդունել 70 %-ից ոչ պակաս: Անջրանցիկ տարածքների 25-30 %-ը պետք է կազմեն արահետային ցանցը, հարթ կառույցները, սպորտային և խաղահրապարակների, ինչպես նաև հաճախորդների սպասարկման, ատրակցիոնների և զբոսայգու շահագործման համար նախատեսված կառույցները, որոնց մակերեսը չպետք է գերազանցի զբոսայգու տարածքի 7 %-ը:

194. Զբոսայգու (այգու) տարածքի առանձին տարրերի չափերը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 15-րդ և 16-րդ աղյուսակներում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 15

	Զբոսայգու տարածքի անվանումը	Տարածքի բաշխումը (տոկոս)	
		Քաղաքային զբոսայգի	Հանգստի գոտիների, առողջարանային, անտառապուրակների զբոսայգիներ
1.	Կանաչ տնկարկներ և ջրային մակերեսներ*	65-75	75-80
2.	Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ,	10-15	8-12
3.	Հարթակներ	8-12	4-8
4.	Կառույցներ	5-7	2-4
5.	*Ջրային մակերեսների չափերը սահմանվում են նախագծման առաջադրանքով, սակայն զբոսայգու տարածքի 2 %-ից ոչ ավելի:		

Աղյուսակ 16

Հ/Հ	Զբոսայգու տարածքի անվանումը	Հարաբերությունը ընդհանուր մակերեսի նկատմամբ, %
1.	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ*	65-70
2.	Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, Հարթակներ	28-25
3.	Կառույցներ	7-5
4.	*Ջրային մակերեսների չափերը սահմանվում են նախագծման առաջադրանքով, սակայն զբոսայգու տարածքի 2 %-ից ոչ ավելի:	

195. Զբոսայգու արդյունավետ օգտագործման նպատակով հարկավոր է շուրջտարյա գործող հաստատությունները տեղակայել հիմնական մուտքերի հարևանությամբ: Մուտքերի միջև հեռավորությունը հարկավոր է ընդունել 500 մ-ից ոչ ավելի:

196. Ճեմելիքի երկարության և լայնության հարաբերակցությունը պետք է լինի 1:3-ից ոչ պակաս: 25 մ-ից պակաս լայնությամբ ճեմելիքի դեպքում պետք է նախատեսել 3-6 մ լայնությամբ մեկ ճեմուղի, 25- մ-ից լայն ճեմելիքի դեպքում՝ հիմնական ճեմուղուց բացի պետք է նախատեսել 1.5-3.0 մ լրացուցիչ ուղիներ (արահետներ), 50 մ-ից լայն ճեմելիքների դեպքում թույլատրվում է մարզահրապարակների, տաղավարների, մանկական խաղահամալիրների, հեծանվային ուղիների տեղակայումը: Կառույցների բարձրությունը չպետք է գերազանցի 6 մ-ը:

197. Ճեմելիքի մուտքերը պետք է կազմակերպել 250 մ-ից ոչ ավելի ընդմիջումներով, ինտենսիվ

շարժմամբ փողոցներում՝ հետիոտն անցումների հետ փոխկապակցված: Տարածքի տարրերի հարաբերակցությունը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 17-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 17

Հ/Հ	Ճեմելիքի չափերը, մ	Անվանումը	Հարաբերությունը ընդհանուր մակերեսի նկատմամբ, %
1.	10-25	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ Կառույցներ	70-75 30-25 -
2.	26-50	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ Կառույցներ	75-80 23-17 2-3
3.	51 և ավելի լայնությամբ	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ Կառույցներ	65-75 30-25 5-ից ոչ ավելի

198. Մեկ երկայնական հետիոտն արահետով ճեմելիքի լայնությունը՝ տեղակայման հետևյալ տարբերակների համար հարկավոր է ընդունել սույն շինարարական նորմերի 18-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 18

Հ/Հ	Անվանումը	Լայնությունը, մ
1.	Փողոցի առանցքով	18
2.	Փողոցի մի կողմից՝ երթևեկելի մասի և կառուցապատման միջև	10

199. Շենքերից, շինություններից, ինչպես նաև ինժեներական կահավորման օբյեկտներից մինչև ծառերն ու թփուտներն ընկած հեռավորությունը հարկավոր է ընդունել սույն շինարարական նորմերի 19-րդ աղյուսակին համապատասխան:

Աղյուսակ 19

Հ/Հ	Շենք, շինություն, ինժեներական բարեկարգման օբյեկտ	Շենքից, շինությունից, օբյեկտից մինչև առանցքն ընկած հեռավորությունը, մ	
		ծառի բնի	թփուտի
1.	Շենքի և շինության արտաքին պատ	5.0	1.5
2.	Տրամվայի պաստառի եզրագիծ	5.0	3.0
3.	Մայթեզր և այգու արահետի եզր	0.7	0.5
4.	Փողոցի երթևեկային մասի եզրագիծ, ճանապարհի կողնակի ամրացված եզր կամ առվի եզր	2.0	1.0
5.	Լուսավորության ցանցի, տրամվայի կայմերի և հենարանների, սալարկուղու հենարան և ուղեկամուրջ	4.0	-
6.	Շեպույթայն, դարավանդի հիմնատակ	1.0	0.5
7.	Հենապատի հիմնատակ կամ ներքին եզրամաս	3.0	1.0

8.	Ստորգետնյա ցանցեր.		
	1) գազատարներ, կոյուղի	1.5	-
	2) ջերմային ցանց (կանալի, թունելի պատեր կամ թաղանթը՝ առանց կանալ տեղակայման պարագայում)	2.0	1.0
	3) ջրագիծ, ցամաքուրդ	2.0	-
	4) ուժային մալուխ և կապի մալուխ	2.0	0.7

200. Պուրակի տարածքում այցելուներին սպասարկող կառուցների (սրճարաններ, տաղավարներ, կրպակներ) բարձրությունը չպետք է գերազանցի 4 մետրը, իսկ կառուցապատման մակերեսը՝ պուրակի տարածքի 2 %-ը: Պուրակի տարածքի տարրերի հարաբերակցությունը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 20-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 20

Հ/Հ	Պուրակի տեղադիրքը	Անվանումը	Հարաբերությունը ընդհանուր մակերեսի նկատմամբ, %
1.	Բնակավայրի փողոցներում, հրապարակներում	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ	60-73
		Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ, փոքր ճարտարապետական ձևեր	38-25
		Կառույցներ	2
2.	Բնակելի շրջաններում, բնակելի փողոցներում, շենքերի միջև, առանձին շենքերի մոտ	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ	70-80
		Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ, փոքր ճարտարապետական ձևեր	30-20
		Կառույցներ	-
3.	Բնակավայրի փողոցներում, հրապարակներում	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ	60-73
		Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ, փոքր ճարտարապետական ձևեր	38-25
		Կառույցներ	2
4.	Բնակելի շրջաններում, բնակելի փողոցներում, շենքերի միջև առանձին շենքերի մոտ	Կանաչ ծածկույթ և ջրային մակերեսներ	70-80
		Ծառուղիներ, ճեմուղիներ, արահետներ, հարթակներ, փոքր ճարտարապետական ձևեր	30-20
		Կառույցներ	-

201. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կառուցվածքում 0.5 կմ-ից լայն խոշոր զբոսայգիներն ու անտառապուրակները պետք է կազմեն դրանց 10 %-ից ոչ պակաս մասը:

202. Քաղաքային զբոսայգիների հասանելիությունը չպետք է գերազանցի 20 րոպեն, իսկ հատակազծային շրջանների զբոսայգիներինը՝ 15 րոպեն:

203. Սեյսմիկ գոտիներում անհրաժեշտ է ապահովել ազատ մոտեցում դեպի պուրակներ, այգիներ և ընդհանուր օգտագործման այլ կանաչապատ տարածքներ՝ բացառելով բնակելի շրջանների կողմից ցանկապատերի կառուցումը:

204. Զբոսայգիների, այգիների, անտառապուրակների, անտառների, կանաչ գոտիների



տարածքների միաժամանակյա այցելուների հաշվարկային քանակը ընդունվում է սույն շինարարական նորմերի 21-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 21

Հ/Հ	Անվանումը	Այցելուների քանակը մարդ/հա
1.	Քաղաքային զբոսայգիներ	100
2.	Հանգստի գոտիների զբոսայգիներ	70
3.	Առողջավայրերի զբոսայգիներ	50
4.	Անտառապուրակներ/հիդրոպարկեր	10
5.	Անտառներ	1-3

205. Ողողահունների տարածքներում զբոսայգիների կառուցման դեպքում անհրաժեշտ է պահպանել սույն շինարարական նորմերի 22-րդ բաժնի և ՄՆիՊ 2.06.15 շինարարական նորմերի պահանջները:

206. Ճեմուղիները և հետիոտն արահետները հարկավոր է նախատեսել զանգվածային հետիոտն հոսքերի շարժման ուղղությամբ: Ճեմուղու տեղակայումը, ձգվածությունն ու լայնությունը, ինչպես նաև դրա տեղադիրքը փողոցի լայնական կտրվածքում հարկավոր է որոշել՝ հաշվի առնելով փողոցի և հարակից կառուցապատման ճարտարապետահատակագծային լուծումները: Ճեմուղիների և հետիոտն արահետների երկայնքով հարկավոր է նախատեսել կարճատև հանգստի հարթակներ:

207. Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները պետք է բարեկարգվեն և սարքավորվեն ճարտարապետական փոքր ձևերով. շատրվաններով և ջրավազաններով, աստիճաններով, թեքահարթակներով, հենապատերով, գրուցարաններով, լուսամփոփերով և այլն: Լուսամփոփների քանակը հարկավոր է որոշել ըստ տարածքի նորմատիվ լուսավորվածության պահանջների:

208. Լանդշաֆտային-ռեկրեացիոն գոտիների ճանապարհա-արահետային ցանցը (փողոցներ, արահետներ, ճեմուղիներ) հարկավոր է ծրագծել հետիոտների շարժման հիմնական ուղիների ուղղությամբ հնարավորինս նվազագույն թեքություններով և հաշվի առնելով հիմնական նպատակակետերին, խաղային և սպորտային հրապարակներին հասանելիության ամենակարճ հեռավորությունը: Արահետի լայնությունը պետք է լինի 0.75մ-ին պատիկ (մեկ մարդու շարժման շերտի լայնություն):

209. Քաղաքների կանաչ գոտիներում հարկավոր է նախատեսել ծառային և թփային բուսատեսակների տնկարաններ և ծաղկային ու ջերմոցային տնտեսություններ՝ հաշվի առնելով քաղաքային և գյուղական բնակավայրերի խմբերին տնկանյութով ապահովելու անհրաժեշտությունը:

210. Տնկարանների մակերեսը կարող է սահմանվել նաև 3-5 մ<sup>2</sup>/մարդ հաշվարկի հիման վրա՝ պայմանավորված ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներով բնակչության ապահովվածության մակարդակով, սանիտարապաշտպանիչ գոտիների չափերով, բնակլիմայական և այլ տեղական առանձնահատկություններով: Ծաղկանոցային-ջերմոցային տնտեսությունների ընդհանուր մակերեսը հարկավոր է ընդունել 0.5 մ<sup>2</sup>/մարդ հաշվարկով:

211. Առողջավայրերի տարածքների օգտագործման ռեժիմները պետք է նպատակաուղղված լինեն լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացների իրականացման խթանմանը՝ լանդշաֆտների «նույնացում (ի հայտ բերում)-գնահատում-լանդշաֆտի որակի նպատակի սահմանում» շղթային համաձայն:

212. Գեղագիտական և ճանաչողական բարձր արժեքով օժտված, բնական լանդշաֆտների ճարտարապետատարածական կազմակերպումը պետք է նպատակաուղղված լինի դրանց արժեքների առավել համակողմանի բացահայտմանն ու մատուցմանը՝ միևնույն ժամանակ խնայողական բնօգտագործման պահանջների ապահովմամբ:

213. Պարկերի տեղակայման ժամանակ պետք է առավելագույնս պահպանել գոյություն ունեցող

ծառատնկումներով և ջրային մակերեսներով հատվածները:

214. Ռեկրեացիոն նշանակության գոտիներում բնակչության զանգվածային կարճատև հանգստի օբյեկտների տեղաբաշխումը հարկավոր է նախատեսել՝ հաշվի առնելով այդ տարածքների 1.5 ժ-ից ոչ ավելի տրանսպորտային հասանելիությունը:

215. Հատուկ պահպանվող տարածքների գոտիների կազմում, բուժական հատկանիշներով, առավել բարենպաստ միկրոկլիմայական, լանդշաֆտային և սանիտարահիգիենիկ պայմաններով օժտված հողերի վրա, կարող են առանձնացվել բուժ-առողջարարական (առողջավայր) տեղամասեր: Առողջավայրերի տարածքներում առողջավայրային գոտիներ ձևավորելու նպատակով նախատեսվում են առողջարանա-առողջավայրային և առողջարարական, հանգստի և զբոսաշրջության հաստատություններ, բուժվողների և հանգստացողների սպասարկման հաստատություններ և կազմակերպություններ, առողջավայրային զբոսագիծեր և ընդհանուր օգտագործման կանաչապատ և այլ տարածքներ, լողափեր: Առողջավայրային գոտիների ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների չափերը հարկավոր է սահմանել սանիտարա-առողջավայրային և առողջարարական հաստատությունների մեկ տեղի համար՝ 100 մ<sup>2</sup> հաշվարկով: Տափաստանային շրջանների առողջավայրային գոտիներում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների տեղամասերը թույլատրվում է նվազեցնել, սակայն 50 %-ից ոչ ավելի:

216. Հանգստի և առողջարանա-առողջավայրային հաստատությունների տեղակայումը ափամերձ հանգստի և առողջավայրային գոտիներում անհրաժեշտ է նախատեսել՝ հաշվի առնելով սույն շինարարական նորմերի 13-րդ բաժնի պահանջները, սակայն գետերի ափերի և ջրամբարների պարագայում 50 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ, եթե դա չի հակասում ՀՀ ջրային օրենսդրության պահանջներին:

217. Առողջավայրային և հանգստի գոտիներում տեղակայված լողափերի տարածքների չափերը հարկավոր է ընդունել մեկ հաճախորդի (այցելուի) համար սույն շինարարական նորմերի 22-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 22

Հ/Հ	Անվանումը	Տարածքը (մեկ այցելուի հաշվով) մ <sup>2</sup>
1.	Գետերի և լճերի	8
2.	Գետերի և լճերի (երեխաների համար)	4
3.	Առողջավայրային գոտիներից դուրս գյուղատնտեսական օգտագործման համար պիտանի հողերի վրա տեղակայվող գետերի և լճերի լողափեր	5
4.	Հատուկ մասնագիտացված բուժական լողափեր սակավաշարժ բուժվողների համար	8-12

218. Նախագծվող առողջարանա-առողջավայրային և առողջարարական հաստատությունների սահմանագծից հեռավորությունը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 23-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 23

Հ/Հ	Անվանումը	Հեռավորությունը, մ
1.	մինչև բնակելի և հասարակական կառուցապատումը (որը չի առնչվում առողջավայրային և հանգստի գոտու սպասարկման հետ), կոմունալ տնտեսության և պահեստարանների օբյեկտները	500
2.	նույնը՝ վերակառուցման պայմաններում	100
3.	մինչև ընդհանուր երկաթուղային ցանցը	500
4.	մինչև ավտոմոբիլային ճանապարհներ՝	
1)	I, II, III կարգի	500
2)	IV կարգի	200
5.	մինչև ամառանոցային կառուցապատում	300

219. Հատուկ պահպանվող տարածքների օգտագործման ռեժիմը և չափերը սահմանվում են ՀՀ կառավարության կողմից՝ հաշվի առնելով նաև սույն շինարարական նորմերի 13-րդ բաժնի պահանջները: Միջազգային, հանրապետական, տեղական նշանակության հուշարձանների, բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման ռեժիմները սահմանվում են բնության հատուկ

պահպանվող տարածքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

220. Կարճատև զանգվածային հանգստի գոտիների տեղաբաշխումը պետք է նախատեսել՝ հասարակական տրանսպորտի միջոցներով 1.5 Ժ-ից ոչ ավելի հասանելիության սահմաններում:

221. Կարճատև զանգվածային հանգստի գոտիների տարածքների չափերը հարկավոր է ընդունել մեկ այցելուի համար 500մ<sup>2</sup>-ուց ոչ պակաս հաշվարկով, այդ թվում դրա ակտիվ հանգստի տեսակների համար ինտենսիվ օգտագործվող հատվածը պետք է կազմի մեկ այցելուի համար՝ 100 մ<sup>2</sup>: Կարճատև զանգվածային հանգստի տարածքի մակերեսը հարկավոր է ընդունել 50 հա-ից ոչ պակաս:

222. Հանգստի գոտիները հարկավոր է տեղակայել առողջարաններից, ճամբարներից, նախադպրոցական առողջարանային-առողջարարական հաստատություններից, ամառանոցային ընկերություններից, ընդհանուր ցանցի ավտոմոբիլային ճանապարհներից, երկաթուղագծերից 500 մ-ից ոչ պակաս, իսկ հանգստյան տներից՝ 300 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա :

223. Անտառապուրակների, հանգստի և առողջավայրերի գոտիների սահմանագծերին տեղակայվող ավտոմեքենաների ավտոկայնատեղերի չափերը հարկավոր է որոշել ըստ նախագծման առաջադրանքի, վերջինիս բացակայության դեպքում՝ սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածով:

224. Առողջավայրային գոտիներում նախատեսվում են.

1) երկարատև հանգստի առողջարանա-առողջավայրային հաստատությունների տեղակայում՝ աղմուկի թույլատրելի մակարդակ ունեցող տարածքների վրա,

2) մանկական առողջարանա-առողջավայրային և առողջարարական հաստատությունների տեղակայում՝ մեծահասակների համար նախատեսված հաստատություններից կանաչ տնկարկների 100 մ-ից ոչ պակաս բաժանարար շերտով մեկուսացված,

3) տրանսպորտային շարժման սահմանափակում և տարանցիկ տրանսպորտային հոսքերի բացառում:

225. Առողջավայրային գոտու սահմաններում տեղակայվող միատիպ կամ մոտ ուղղվածությամբ առողջարանա-առողջավայրային և առողջարարական հաստատությունները հարկավոր է միավորել որպես համալիրներ՝ ապահովելով բժշկական, առողջավայրային-կենցաղային և տնտեսական սպասարկման կենտրոնացում միասնական ճարտարապետատարածական լուծման մեջ:

226. Առողջավայրային գոտիների ընդհանուր օգտագործման տարածքների չափերը հարկավոր է սահմանել առողջարանա-առողջավայրային և առողջարարական հաստատությունների համար հետևյալ հաշվարկից, մեկ տեղի համար՝ համաառողջավայրային կենտրոններ՝ 10 մ<sup>2</sup>, կանաչապատ տարածքներ-100 մ<sup>2</sup>: Ձևավորված լեռնային առողջավայրերում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների չափերը թույլատրվում է նվազեցնել, սակայն 50 %-ից ոչ ավելի:

227. Գետափերի և լճափերի համար ափամերձ շերտի նվազագույն ձգվածությունը մեկ այցելուի համար հարկավոր է ընդունել 0.25 մ-ից ոչ պակաս:

228. Լողափերին միաժամանակյա այցելուների քանակը հարկավոր է հաշվարկել՝ հաշվի առնելով լողափի միաժամանակյա բեռնվածության գործակիցների սույն շինարարական նորմերի 24-րդ աղյուսակում տրված ցուցանիշները:

Աղյուսակ 24

Հ/Հ	Անվանումը	Բեռնվածության գործակից
1.	Առողջավայրեր	0.6-0.8
2.	Հանգստի և զբոսաշրջության հաստատություններ	0.7-0.9
3.	Մանկական ճամբարներ	0.5-1.0
4.	Տեղի բնակչության ընդհանուր օգտագործման համար	0.2
5.	Առանց ուղեգրերի հանգստացողների համար	0.5

#### XIV. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՓՈՂՈՑԱՅԻՆ ՑԱՆՑ

229. Բնակավայրերի նախագծման ժամանակ, ըստ դրանց հատակագծային կառուցվածքի և բնակավայրերի տարածքին անմիջականորեն հարող տարածքների հատակագծային կառուցվածքի, անհրաժեշտ է նախատեսել տրանսպորտի և ճանապարհափողոցային ցանցի միասնական փոխկապակցված համակարգ, որը կապահովի բնակավայրի գործառական գոտիների, մերձակայքում գտնվող օբյեկտների, տարաբնակեցման համակարգի այլ բնակավայրերի, արտաքին տրանսպորտի

օբյեկտների, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհների հետ հարմար, արագ և անվտանգ կապ:

230. 50 հազար և ավելի բնակչությամբ քաղաքների համար պետք է նախատեսել արտաքին տրանսպորտի հանգույցների ու գլխավոր մայրուղիների կրկնակում՝ շրջանցիկ ճանապարհների պարտադիր անցկացումով: Փոքր քաղաքների և բնակավայրերի համար հնարավորության սահմաններում հարկավոր է նախատեսել բնակավայրերի հարմարավետ մուտքերով շրջանցիկ ճանապարհներ:

231. Աշխատողների 90 %-ի համար բնակության վայրից մինչև աշխատավայր ժամանակի ծախսերը մեկ ուղղությամբ, կախված քաղաքի բնակչության թվից, չպետք է գերազանցեն սույն շինարարական նորմերի 25-րդ աղյուսակում տրված ցուցանիշները:

Աղյուսակ 25

Հ/Հ	Բնակչության թիվը	Ժամանակի ծախսումները, րոպե
1.	1 000 000-ից ավելի	40
2.	100 000-1 000 000	30
3.	100 000 և պակաս	25

232. Քաղաքային բնակչության հաշվարկային թվաքանակի միջանկյալ արժեքների համար ժամանակի ծախսերի նորմերը պետք է միջարկել:

233. Գյուղական բնակավայրերի բնակիչների աշխատանքային տեղափոխությունների վրա ծախսված ժամանակը (հետիոտն կամ տրանսպորտով) չպետք է գերազանցի 20 րոպեն:

234. Բնակավայրի ճանապարհափողոցային ցանցի և տրանսպորտային հանգույցների թողունակությունը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների սպասարկման տեղերի թիվը, անհրաժեշտ է որոշել ելնելով հաշվարկային ժամկետում բնակչության ավտոմոբիլացման մակարդակից, որի ցուցանիշը ընդունվում է 1000 բնակչի համար 400 միավոր, այդ թվում 80-85 %-ը՝ մարդատարներ և 15-20 %-ը՝ բեռնատարներ:

235. Տեղական պայմաններից ելնելով նշված ավտոմոբիլացման մակարդակը թույլատրվում է իջեցնել կամ բարձրացնել, բայց 20 %-ից ոչ ավելի:

236. Գյուղատնտեսական, հատուկ տեխնոլոգիական և այլ տրանսպորտային միջոցների պահպանության և սպասարկման տեղերի թիվը որոշվում է ըստ գործող նորմերի կամ հատուկ առաջադրանքի:

237. Բնակավայրերի ճանապարհափողոցային ցանցն անհրաժեշտ է նախագծել միասնական համակարգի տեսքով՝ հաշվի առնելով ճանապարհների և փողոցների դերն ու նշանակությունը, տրանսպորտի ու հետիոտնի անցուդարձը, տարածքի ճարտարապետահատակագծային լուծումներն ու կառուցապատման բնույթը: Ճանապարհափողոցային ցանցում պետք է առանձնացնել միջպետական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհներ և փողոցներ: Քաղաքային ճանապարհներն ու փողոցները դասակարգվում են ըստ սույն շինարարական նորմերի 26-րդ աղյուսակի:

238. Նոր նախագծվող քաղաքային ճանապարհների և փողոցների հաշվարկային հարաչափերը պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 27-րդ աղյուսակի, գյուղական բնակավայրերինը՝ ըստ սույն շինարարական նորմերի 28-րդ աղյուսակի: Գոյություն ունեցող ճանապարհների և փողոցների վերակառուցման պայմաններում շարժման մեկ շերտի հարաչափերը պահպանվում են, համաքաղաքային նշանակության փողոցների համար՝ 3.75 և 3.5 մ, շրջանայինի համար՝ 3.5, տեղական նշանակության փողոցների համար՝ 3.0 մ:

239. Փողոցների և ճանապարհների լայնական կտրվածքի տարրերը սահմանվում են հաշվարկով, ելնելով տրանսպորտային միջոցների և հետիոտնի հեռանկարային անցուդարձից, լայնական պրոֆիլի սահմաններում նախատեսված տարրերի (երթևեկային մասեր, ստորգետնյա հաղորդակցուղիների անցկացման տեխնիկական գոտիներ՝ համաձայն սույն շինարարական նորմերի 5-րդ հավելվածի, մայթեր, կանաչապատման գոտիներ և այլն) կազմից՝ հաշվի առնելով նաև սանիտարահիգիենիկ ու քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: Բաժանիչ գոտիների նվազագույն լայնություններն ընդունվում են ՀՀՇՆ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

240. Փողոցի երթևեկային մասի շերտերի թիվը պետք է նշանակել տրանսպորտի հեռանկարային անցուդարձի՝ բեռնվածության 0.65-0.75 մակարդակի հաշվով: Բնակավայրի ավտոմոբիլների

գերխտացման բարձր մակարդակի պայմաններում նպատակահարմար է լրացուցիչ եզրային շերտեր նախատեսել ավտոմոբիլների կանգառի կամ կայանման համար:

241. Բնակավայրի գլխավոր հատակագծի մշակման ժամանակ շարժման անվտանգությունը, խաչմերուկների թողունակությունը, ավտոմոբիլների՝ մայթեզրերին կանգառման կամ կայանման հնարավորությունը զգալիորեն բարձրացնելու, ինչպես նաև հանդիպակաց մայթ հետիոտնի անցումը դյուրինացնելու նպատակով տրանսպորտի երթևեկությունը պետք է հնարավորինս կազմակերպել միակողմանի ուղղությամբ:

242. Տրանսպորտի և հետիոտնի երթևեկության կազմակերպման գերխնդրի՝ տրանսպորտի տարանցիկ, տեղական և հետիոտն շարժումների միմյանցից տարանջատ գործառույցն ապահովելու համար նպատակահարմար է քաղաքին մոտեցնող մայրուղային ճանապարհների մուտքը մինչև քաղաքի կենտրոն կազմակերպել անարգել արագընթաց շարժման սկզբունքով:

243. Մեծ, խոշոր, խոշորագույն քաղաքների մայրուղային փողոցներով և ճանապարհներով ավտոբուսների և տրոլեյբուսների երթևեկության համար եզրային շերտերն անհրաժեշտ է նախատեսել 4.5-ական մ լայնությամբ՝ երբ տրանսպորտի այդ տեսակների առավելագույն ժամային անցուդարձը գերազանցում է 30 միավորը, իսկ վերակառուցման պայմաններում՝ 15 միավորը:

244. Բեռնատար ավտոմոբիլների գերակայությամբ անցուդարձի դեպքում մայրուղային ճանապարհների և փողոցների երթևեկային մասը թույլատրվում է լայնացնել մեկական շարժման շերտով:

245. Երբ փողոցների մայթեզրով նախատեսվում է երկայնական շարվածքով ավտոմոբիլների կայանում փողոցի առանցքին զուգահեռ երկայնական շարվածքով, ապա եզրային շերտի լայնությունը նորմատիվային պահանջների նկատմամբ պետք է ավելացնել ևս 2 մ-ով:

246. Փողոցի վերելքի ուղղությամբ կառուցապատման սահմանը փողոցի վերելքի ուղղությամբ վայրէջքի համեմատ երթևեկային մասի եզրից հնարավորության դեպքում անհրաժեշտ է տեղակայել առավել մեծ հեռավորության վրա՝ աղմուկի և արտանետումների մակարդակների նույնացման նպատակով:

247. Փոքր, միջին և մեծ քաղաքների համաքաղաքային նշանակության մայրուղային փողոցների նախագծման, ինչպես նաև վերակառուցման կամ երթևեկության միակողմանի կազմակերպման դեպքում կարելի է կիրառել շրջանային նշանակության մայրուղային փողոցների լայնական պրոֆիլի (կտրվածքի) 27-րդ աղյուսակում տրված հարաչափերը:

Աղյուսակ 26

Հ/Հ	Ճանապարհների և փողոցների դասակարգումը	Փողոցների և ճանապարհների հիմնական նշանակությունը
1.	<p><b>Մայրուղային ճանապարհներ</b></p> <p>1) արագընթաց շարժման,</p> <p>2) շարժման կարգավորումով:</p>	<p>Արագընթաց տրանսպորտային կապ հեռավոր արդյունաբերական և հատակագծային գոտիների ու շրջանների միջև, ելքեր դեպի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, օդանավակայաններ, բնակեցման համակարգի բնակավայրեր և բնակչության զանգվածային հանգստի գոտիներ:</p> <p>Փոխհատումները մայրուղային փողոցների և ճանապարհների հետ պետք է նախատեսվեն տարբեր մակարդակներում</p> <p>Տրանսպորտային կապ բնակելի կառուցապատումից դուրս, առավելապես բեռնատարների շարժմամբ, քաղաքի շրջանների միջև, ելքեր դեպի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Փողոցների և ճանապարհների հետ փոխհատումները թույլատրվում է նախատեսել նաև միևնույն մակարդակում:</p>
2.	<p><b>Մայրուղային փողոցներ</b></p> <p>1) համաքաղաքային նշանակության անընդհատ շարժման,</p> <p>2) շարժման կարգավորումով:</p>	<p>Տրանսպորտային կապ բնակելի, արդյունաբերական շրջանների և հասարակական կենտրոնների, ինչպես նաև մայրուղային փողոցների, քաղաքային ճանապարհների և ընդհանուր օգտագործման ճանապարհների միջև: Հիմնական ուղղություններով տրանսպորտի շարժման ապահովումը նախատեսվում է տարբեր մակարդակներում:</p> <p>Տրանսպորտային կապ բնակելի, արդյունաբերական շրջանների և քաղաքների կենտրոնների, պլանավորված շրջանների</p>

		կենտրոնների միջև, ելքեր դեպի մայրուղային փողոցներ և ճանապարհներ և դեպի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Փոխհատումները մայրուղային փողոցների և ճանապարհների հետ՝ միևնույն մակարդակում:
--	--	---

26-րդ աղյուսակի շարունակությունը

3.	<b>Շրջանային նշանակության ճանապարհներ և փողոցներ</b>	Տրանսպորտային և հետիոտնային կապ բնակելի շրջանների, բնակելի և արդյունաբերական շրջանների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի մայրուղային փողոցներ:
4.	<b>Տեղական նշանակության ճանապարհներ և փողոցներ</b>	Տրանսպորտային և հետիոտնային կապ բնակելի շրջանների տարածքներում (միկրոշրջաններում), ելքեր դեպի շարժման կարգավորումով ու շրջանային փողոցներ և ճանապարհներ:
	1) բնակելի կառուցապատման փողոցներ,	Առավելապես մարդատար տրանսպորտային կապ գոտիների (շրջանների) սահմաններում, ելքեր դեպի քաղաքային մայրուղային ճանապարհներ:
	2) հետիոտնային փողոցներ և ճանապարհներ,	Հետիոտնային կապ աշխատավայրերի, հիմնարկ-կազմակերպությունների, հասարակական կենտրոնների, հանգստավայրերի և հասարակական տրանսպորտի կանգառների հետ:
	3) պուրակային ճանապարհներ,	Տրանսպորտային կապ անտառապուրակների և պուրակների տարածքների սահմաններում՝ առավելապես մարդատար ավտոմոբիլների շարժման համար:
	4) մոտեցումներ,	Տրանսպորտային միջոցների մոտեցումներ դեպի բնակելի և հասարակական շենքեր, հիմնարկներ, կազմակերպություններ և քաղաքային կառուցապատման այլ օբյեկտներ՝ շրջանների, միկրոշրջանների և թաղամասերի ներսում:
	5) հեծանվային ուղիներ:	Բացառապես հեծանվային շարժում դեպի հանգստի գոտիներ և հասարակական կենտրոններ:

Աղյուսակ 27

Հ/Հ	Ճանապարհների և փողոցների դասակարգումը	Հաշվարկային արագությունը, կմ/ժամ			Շարժման շերտի լայնությունը,	Շարժման շերտերի թիվը	Մայթի նվազագույն լայնությունը, մ
		Հիմնական	Տեղանքի դժվարին տեղամասերում				
			կտրուված	լեռնային			
1.	Մայրուղային ճանապարհներ						
	1) արագընթաց,	120	100	80	3,6	4 և ավելի	-
	2) շարժման կարգավորումով	80	70	60	3,6 3,3	2 և ավելի	-
2.	Համաքաղաքային նշանակության մայրուղային փողոցներ						
	1) անընդհատ շարժման,	100	90	70	3,6	4 և ավելի	4,5
	2) շարժման կարգավորումով:	80	70	60	3,6 3,3	4 և ավելի	4,5
3.	Շրջանային նշանակության փողոցներ և ճանապարհներ	60	50	50	3,3 3,0	2 և ավելի	2,25
4.	Տեղական նշանակության փողոցներ և ճանապարհներ	40	40	30	3,0 2,7	2 և ավելի	1,5
5.	Մոտեցումներ և անցուղիներ						
	1) հիմնական,	40	40	40	3,0	2	1,0
	2) երկրորդական	30	30	30	4,5	1	0,75

աղյուսակ 27-ի շարունակությունը

6.	Հետիոտնային փողոցներ 1) հիմնական, 2) երկրորդական	-	-	-	1,0 0,75	ըստ հաշվարկի ըստ հաշվարկի	ըստ նախագծի ըստ նախագծի
7.	Հեծանվային ուղիներ	30	20	20	1,5	1-2	-

Աղյուսակ 28

Հ/Հ	Գյուղական փողոցների և ճանապարհների դասակարգում	Հիմնական նշանակությունը	Հաշվարկային արագությունը, կմ/ժամ	Շարժման շերտի լայնությունը, մ	Շարժման շերտերի թիվը	Մայթի նվազագույն լայնությունը, մ
1.	Գյուղական ճանապարհ	Գյուղի կապը արտաքին ճանապարհների հետ	60	3,6 3,3	2	-
2.	Գլխավոր փողոց	Բնակեցման տարածքների կապը հասարակական կենտրոնի հետ	40-50	3,6	2 և ավելի	1.5-2,25
3.	Բնակելի կառուցապատման փողոց՝ 1) հիմնական, 2) երկրորդական, (նրբանցք)	Բնակեցման տարածքների ներսում կապը գլխավոր փողոցի հետ	40	3,0	2 և ավելի	1,5
		Կապը հիմնական բնակելի փողոցների միջև	30	3,0 2,7	2	1,0
4.	Մոտեցումներ և անցուղիներ	Թաղամասի խորքի բնակելի տների կապը փողոցի հետ	20	4,5	1	1,0
5.	Տնտեսական անցատեղ, անասնաանցատեղեր	Անասունների և բեռնատար տրանսպորտի անցատեղեր դեպի մերձկալվածքային հողամասեր	30	4,5	1	-

248. Այն դեպքերում, երբ տրանսպորտային հոսքի գերակշիռ մասը կազմում են մարդատար ավտոմոբիլները, ապա չորս և ավելի շերտերով նոր մայրուղային փողոցների կառուցման և հների վերակառուցման ժամանակ թույլատրվում է միջանկյալ երթևեկային շերտերի լայնությունն ընդունել եզրայիններից 0,3 կամ 0,6 մ-ով պակաս, պահպանելով մեկ շերտի նվազագույն լայնությունը 3 մ:

249. Բնակելի կառուցապատման միակողմանի երթևեկությամբ փողոցների երթևեկային մասի լայնությունը նպատակահարմար է սահմանել 7,2 մ-ից ոչ պակաս՝ զույգ մայթեզերերին երկուական մետր ավտոմոբիլների երկայնական շարվածքով կայանման համար, և կենտրոնական 3,3 մ լայնությամբ շերտը՝ միակողմանի երթևեկության համար: Երկկողմանի երթևեկությամբ փողոցների երթևեկային մասի լայնությունը նույն սկզբունքով կարելի է նշանակել 9 մ-ից ոչ պակաս:

250. Տրանսպորտի երթևեկությունը քաղաքների պատմական միջուկով պետք է սահմանափակել կամ արգելել՝ նախատեսելով շրջանցիկ կամ օղակաձև մայրուղային փողոցներ, հետիոտնային փողոցներ ու գոտիներ:

251. Երբ փողոցի՝ հաշվարկով ստացված երթևեկային շերտերի թիվը կազմում է 6 և ավելի, ապա նպատակահարմար է տարանցիկ երթևեկությունը տարանջատել տեղականից սիզամարգերով, որոնցով կարելի է անցկացնել հաղորդակցուղիներ, իսկ ձմռանը կուտակել երթևեկային մասերից մաքրված ձյունը:

252. Թույլատրվում է մայրուղային փողոցներն ու ճանապարհները, ինչպես նաև տրանսպորտային հանգույցները հաշվարկային հարաչափերի հասցնել փուլ առ փուլ՝ հաշվի առնելով տրանսպորտի և հետիոտնի շարժման անցուղարձերի իրական ցուցանիշները՝ հետագա շինարարության



համար անհրաժեշտ ստորգետնյա և վերգետնյա տարածքների պարտադիր օտարման պայմանով:

253. Փողոցների ու ճանապարհների հորիզոնական կորերի նվազագույն շառավիղներն ու առավելագույն երկայնական թեքությունները սահմանվում են ըստ հաշվարկային արագությունների, համաձայն ՀՀՇՆ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների (որտեղ լուսաբանված են «կտրտված տեղանք» և «լեռնային տեղանք» հասկացությունները): 30 կմ/ժամ հաշվարկային արագության համար հորիզոնական կորերի նվազագույն շառավիղը պետք է ընդունել 30 մ, իսկ երկայնական առավելագույն թեքությունը՝ 90%, բացառիկ դեպքերում, մինչև 150 մ երկարությամբ տեղամասերում՝ 120%, տեսանելիության հաշվարկային հեռավորությունը՝ 30 մ, ուղղաձիգ ուռուցիկ կորերի նվազագույն շառավիղը՝ 570 մ, գոգավորներինը՝ 180 մ:

254. Հորիզոնական կորերի երթևեկային մասի լայնացման չափերը պետք է ընդունել ըստ ՀՀՇՆ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների:

255. Վիրաժների հաշվարկային թեքությունները (առավելագույն թեքությունը, որը սահմանվում է հաշվարկային արագությանը համապատասխան նվազագույն շառավիղով կորի համար) պետք է ընդունել հանրապետության տարածքի ճանապարհակլիմայական շրջանացմանը համապատասխան: Անհրաժեշտ է վիրաժի հաշվարկային թեքությունը I և II ճանապարհակլիմայական շրջաններում ընդունել 40-60%, III և IV-ում՝ 20-40%: Կախված հորիզոնական կորերի շառավիղից, վիրաժի թեքությունները նշանակվում են ըստ ՀՀՇՆ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների:

256. Մայթերի բանուկ մասի լայնությունը սահմանելիս հաշվի չեն առնվում կրպակների, նստարանների, փողոցային կահավորման այլ տարրերի տեղադրման համար անհրաժեշտ հարթակները:

257. Այն դեպքում, երբ մայթերն անմիջականորեն հարում են շենքերի պատերին, հենապատերին կամ ցանկապատերին, ապա պետք է մայթերը լայնացնել առնվազն 1,5 մ-ով՝ ղեկավարվելով նաև աղմկապաշտպան նորմերով:

258. Փողոցի երկայնքով մայթերից 0,5 մ լայնությամբ գոտում արգելվում է մայթի մակարդակից բարձր որևէ սարքերի (էլեկտրասյուների, արգելափակոցների և այլնի) տեղադրում, ինչպես նաև ծառատունկ՝ մայթերին կանգառած ավտոմոբիլից ուղևորների ելումուտն ապահովելու ընթացքում դռների անարգել ու անվնաս բացվելու համար:

259. Քաղաքային ճանապարհների կամ փողոցների՝ միևնույն մակարդակում փոխհատման տեղում շրջադարձի շառավիղը մայթի կամ երթևեկային մասի եզրով անհրաժեշտ է ընդունել 12 մ-ից ոչ պակաս, հրապարակներում՝ 15 մ-ից ոչ պակաս: Սահմանափակ պայմաններում կամ վերակառուցման ժամանակ թույլատրվում է նշված շառավիղները համապատասխանաբար ընդունել 6 և 9 մ:

260. Փողոցների և ճանապարհների տրանսպորտային հանգույցների հարաչափերը պետք է նախագծել ՀՀ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Խիտ կառուցապատման պայմաններում «երեքնուկի տերև», «շեփոր» և «շեղանկյուն» տիպի հանգույցների ձախ թևերի նվազագույն շառավիղը պետք է ընդունել 15 մ, սահմանելով երկայնական առավելագույն թեքությունը 40 %-ից ոչ ավելի: Աջ և ձախ շրջադարձերի շառավիղները պետք է նշանակվեն երթևեկային մասի ներքին եզրով: Տրանսպորտային հանգույցների հողամասի տրամադրման սահմանը որոշվում է աջ շրջադարձերի թևերի արտաքին եզրերով, հաշվի առնելով կողային տեսանելիության սահմանները: Այդ տարածքում շինությունների տեղադրումն արգելվում է, իսկ կանաչապատման բարձրությունը՝ տարածքի հատակագծային մակարդակից, չպետք է գերազանցի 0.9 մ-ը:

261. Ավտոմոբիլների հետադարձի համար փակուղային փողոցների և ճանապարհների վերջնամասում պետք է նախատեսել 15 մ-ից ոչ պակաս տրամագծով կղզյակներով հրապարակներ, իսկ մարդատար հասարակական տրանսպորտի վերջնակետային հետադարձի համար՝ 30 մ-ից ոչ պակաս տրամագծով հրապարակներ: Շրջադարձային հրապարակներում ավտոմոբիլների կանգառ չի թույլատրվում:

262. Կարգավորվող երթևեկությամբ մայրուղային փողոցների երկայնքով անհրաժեշտության դեպքում թույլատրվում է նախատեսել բաժանիչ շերտերով առանձնացված հեծանվային ուղիներ: Փողոցների և ճանապարհների երթևեկային մասի եզրով նախատեսվող հեծանվային ուղիները թույլատրվում է առանձնացնել նաև կրկնակի նշագծումով: Տրանսպորտային հոսքի համընթաց ուղղությամբ ուղու լայնությունը պետք է լինի 1.2 մ-ից ոչ պակաս, իսկ տրանսպորտային հոսքի հանդիպակաց ուղղությամբ՝ 1.5 մ-ից ոչ պակաս: Բնակչության զանգվածային հանգստյան գոտիներում և այլ կանաչապատ տարածքներում կարող են նախատեսվել փողոցներից, ճանապարհներից և հետիոտն շարժումից տրանսպորտով հեծանվային ուղիներ: Հեծանվային ուղիները կարող են լինել միակողմանի և երկողմանի շարժման, 1-ական մ-ից ոչ պակաս լայնությամբ, կողային անվտանգության

գոտիներով: Տարածքային սուղ պայմաններում անվտանգության գոտիները կարելի է փոխարինել 0,75 մ բարձրությամբ արգելապատնեշով: Մայթի եզրաքարի երկայնքով, երթևեկային մասի հաշվին նախատեսվող հեծանվային շավղի լայնությունը պետք է լինի 1 մ-ից ոչ պակաս:

263. Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները և դրանց հարող տարածքներն առանձնացվում են որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներ, որոնց նկատմամբ սահմանափակումներն ու ռեժիմները պետք է ընդունել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները և դրանց հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404-Ն որոշման պահանջներին համապատասխան: Բնակավայրով անցնող ճանապարհի տարանցիկ երթևեկությունը պետք է տարանջատել տեղականից՝ ճանապարհի զույգ կողմերում նախատեսելով ուղեկցող փողոցներ (ճանապարհներ), որոնցից ելքերը դեպի հիմնական ճանապարհ կամ փոխհատումները դրանց հետ կարելի է հասցնել նվազագույնի՝ 500-2000 մ միջակայքում:

264. Երբ սույն շինարարական նորմերի 263-րդ կետի պահանջները դժվար իրականանալի են կամ անհնարին, ապա պետք է դիմել այլընտրանքային տարբերակների՝ բնակավայրերով անցնող ճանապարհով կազմակերպել միակողմանի երթևեկություն կամ ճանապարհը դուրս բերել բնակավայրից:

265. Ավտոմոբիլային ճանապարհների կողային տեսանելիության հեռավորությունը պետք է սահմանել ըստ ՀՀ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների, այն է՝ ճանապարհի երկայնքով՝ հաշված երթևեկային մասի եզրից I կարգի ճանապարհների համար պետք է ապահովել 18 մ, II կարգի ճանապարհի համար՝ 15 մ և III- IV կարգի ճանապարհների համար՝ 12 մ:

266. Հիմնական մայրուղային ճանապարհների երթևեկային մասից մինչև բնակելի կառուցապատման գոտու եզրը պետք է ընդունել 50 մ-ից ոչ պակաս, ՀՀՇՆ 22-04 շինարարական նորմերի պահանջները բավարարող աղմկապաշտպան միջոցառումների կիրառման դեպքում՝ 25 մ-ից ոչ պակաս:

267. Փողոցների, տեղական կամ կողային անցուղիների երթևեկային մասի եզրից մինչև կառուցապատման գիծը պետք է ընդունել 25 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորության գերազանցման դեպքում կառուցապատման գծից 5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա պետք է նախատեսել հրշեջ մեքենաների մոտեցումն ապահովելու համար 6 մ լայնությամբ շերտ:

268. Ճանապարհների և փողոցների խաչմերուկներում անհրաժեշտ է նախատեսել տեսանելիության եռանկյունիներ: Հավասարաարուն եռանկյան սրունքների չափերը տեսանելիության «տրանսպորտ-տրանսպորտ» փոխհատման դեպքում շարժման 40, 60 և 80 կմ/ժամ արագությունների դեպքում պետք է ընդունել համապատասխանաբար 25, 40 և 65 մ-ից ոչ պակաս այն գոտու համար, որի ներսում չի թույլատրվում տեղադրել 0,5 մ-ից բարձր անշարժ և շարժական առարկաներ, շենքեր ու շինություններ (կրպակներ, գովազդային վահանակներ, փոքր ճարտարապետական ձևեր և այլն):

269. Տեսանելիության եռանկյան չափերը «հետիոտն-տրանսպորտ» փոխհատման դեպքում պետք է ընդունել 8 և 40 մ՝ տրանսպորտի 40 կմ/ժամ արագության համար և 10 և 50 մ՝ 60 կմ/ժամ արագության համար:

270. Գոյություն ունեցող կառուցապատման պայմաններում, երբ հնարավոր չէ ապահովել տեսանելիության եռանկյունը, հետիոտնի և տրանսպորտի անվտանգությունը պետք է ապահովել շարժման կարգավորումով կամ հատուկ տեխնիկական միջոցներով:

271. Անցուղիների և մոտեցումների միացումը փողոցներին թույլատրվում է խաչմերուկներից տեսանելիության հեռավորության վրա: Տեսանելիության հեռավորությունը սահմանվում է ըստ հաշվարկային արագության՝ համաձայն ՀՀ IV-11.05.02 շինարարական նորմերի պահանջների:

272. Բնակավայրերում՝ ծերանոցների, հաշմանդամների համար շենքերի և առողջապահական հիմնարկների ու բնակչության զանգվածային այցելության այլ հաստատությունների տեղակայման վայրերում պետք է նախատեսել հետիոտնային ուղիներ, որոնցով հնարավոր է հաշմանդամների թիկնաթոռ սայլակների անցուղարձը: Ընդ որում, այդ ուղիների եզրաքարերի բարձրությունը չպետք է գերազանցի 0,05 մ, իսկ առավելագույն երկայնական թեքությունը՝ 83% : Երբ ուղու երկայնական թեքությունը գերազանցում է 30 %-ից, ապա ամեն 100 մ-ը մեկ նախատեսվում են 5 մ-ից ոչ պակաս երկարությամբ հորիզոնական հատվածներ:

273. Շարժման կարգավորումով մայրուղային ճանապարհներում ու փողոցներում, կառուցապատման տարածքի սահմաններում անհրաժեշտ է նախատեսել միևնույն մակարդակում

հետիոտնային անցումներ՝ 200-300 մետր ընդմիջումներով:

274. Շարժման կարգավորումով մայրուղային փողոցների վրա տարբեր մակարդակներով հետիոտնային անցումներ պետք է նախատեսել այն դեպքում, երբ հետիոտնի առավելագույն անցուդարձը գերազանցում է 1500 մարդը մեկ ժամում:

275. Տարբեր մակարդակներով սարքավորված հետիոտնային անցումները պետք է նախատեսել սույն շինարարական նորմերի 29-րդ աղյուսակում տրված ցուցանիշներին համապատասխան՝ հետևյալ ընդմիջումներով.

Աղյուսակ 29

Հ/Հ	Ուղու նշանակությունը	Հեռավորությունը, մ
1.	Արագընթաց շարժման ճանապարհներ, արագընթաց տրամվայի գծեր և երկաթուղիներ	400-800
2.	Անընդհատ շարժման փողոցներ	300-400

276. Վարչական և առևտրական կենտրոնների, հյուրանոցների, թատրոնների, դպրոցների ցուցահանդեսների և շուկաների մոտ հետիոտնային ուղիները (մայթեր, հրապարակներ, անցումներ) պետք է նախագծել հետիոտնի անցուդարձի ծանրաբեռնված պահերի (պիկ) ժամերին հետիոտն հոսքի 0,3 մ<sup>2</sup>/մարդուց, իսկ գործարանների, մարզահանդեսային համալիրների, կինոթատրոնների, կայարանների մոտ՝ 0,8 մ<sup>2</sup>/մարդուց ոչ ավելի խտության պայմանից, ապահովելով ՄՆԻՊ 2.08.02 շինարարական նորմերի պահանջները:

**XIV. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՀԵՏԻՈՏՆ ՇԱՐՇՄԱՆ ՑԱՆՑ**

277. Հասարակական մարդատար տրանսպորտի տեսակը պետք է ընտրել՝ ելնելով հաշվարկային ուղևորահոսքից և ուղևորության հեռավորությունից: Տրանսպորտի տարբեր տեսակների ուղևորափոխադրելիության հնարավորությունը, ինչպես նաև ուղևորների ընդունման և մեկնելու հարթակների չափերը որոշվում են վերգետնյա տրանսպորտի համար՝ շարժակազմի ուղևորային սրահում 4 մարդ/մ<sup>2</sup> խտության ապահովման պայմանից, և 3 մարդ/մ<sup>2</sup> ստորգետնյա տրանսպորտի համար:

278. Վերգետնյա հասարակական տրանսպորտի ուղիներ պետք է նախատեսել մայրուղային փողոցներով և ճանապարհներով, կազմակերպելով դրանց երթևեկությունը տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքի հետ միասին՝ երթևեկային մասից տարանջատված շերտով կամ առանձնացված պաստառով:

279. Խոշոր քաղաքների կենտրոնական շրջաններում, ճանապարհափողոցային սահմանափակ հնարավորության դեպքում թույլատրվում է նախատեսել տրամվայի գծերի անցկացումը փողոցի սահմաններից դուրս՝ ոչ խորը փորվածքի թունելներով կամ ուղեկամուրջներով:

280. Կառուցապատված տարածքներում վերգետնյա հասարակական ուղևորատար տրանսպորտի ցանցի խտությունն անհրաժեշտ է ընդունել 1,5-2,5 կմ/կմ<sup>2</sup> սահմաններում՝ կախված ուղևորների հոսքի անցուդարձից:

281. Խոշոր քաղաքների կենտրոնական շրջաններում այդ ցանցի խտությունը կարելի է հասցնել մինչև 4,5 կմ/ կմ<sup>2</sup>:

282. Թեք լանջերի կառուցապատման դեպքում ցանցի խտությունը կարելի է հասցնել մինչև 3,5-4,5 կմ/կմ<sup>2</sup>:

283. Հետիոտն մոտեցումների հեռավորությունը մինչև հասարակական տրանսպորտի մոտակա կանգառ պետք է ընդունել 400 մ-ից ոչ ավելի: Քաղաքի կենտրոնական մասերում այդ հեռավորությունը չպետք է գերազանցի 250 մ-ը, արտադրական և պահեստարանների գոտիներում՝ 400 մ՝ մինչև կազմակերպության մուտքը, իսկ սպորտային և զանգվածային հանգստի գոտիներում՝ 800 մ մինչև գլխավոր մուտքը:

284. Անհատական տնամերձ կառուցապատման շրջաններում հետիոտն անցման առավելագույն հեռավորությունը մինչև հասարակական տրանսպորտի մոտակա կանգառը հարկավոր է ընդունել 600 մ-ից ոչ ավելի:

285. Բնակեցման տարածքի սահմաններում հասարակական ուղևորատար տրանսպորտի կանգառների միջև հեռավորությունը հարկավոր է ընդունել 400-500 մ՝ ավտոբուսների, տրամվայների և տրոլեյբուսների համար, 800-1200 մ՝ արագընթաց տրամվայների և ճեպընթաց ավտոբուսների համար, 1000-1200 մ՝ մետրոպոլիտենի և 1500-2000 մ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղու համար:

286. Հասարակական տրանսպորտային մեկ միջոցից մեկ այլի տեղափոխման հանգույցներում, անկախ ուղևորների հոսքի հաշվարկային չափից, տրանսպորտային միջոցի փոփոխման համար ուղևորի կորցրած ժամանակը չպետք է գերազանցի 3 րոպեն: Տրանսպորտից տրանսպորտ տեղափոխման հանգույցների, մետրոպոլիտենի կայարանների և զանգվածային այցելության օբյեկտների առջևի հրապարակներն անհրաժեշտ է նախագծել՝ ելնելով հետիոտնի հոսքի շարժման հաշվարկային խտությունից (մարդ/մ<sup>2</sup>), որի չափը ընդունվում է 1,0-ից ոչ ավելի՝ հետիոտնի միակողմանի շարժման, 0,8՝ հանդիպակաց շարժման, 0,5՝ հետիոտն հոսքերի փոխհատման տեղերում և 0,3՝ արագընթաց արտափողոցային տրանսպորտային գծերի կենտրոնական և վերջնակետային տեղափոխման հանգույցներում:

**XVI. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

287. Բնակեցման և հարակից արտադրական տարածքներում մարդատար ավտոմոբիլների հաշվարկային թվաքանակի 90%-ից ոչ պակասի մշտական պահպանության համար անհրաժեշտ է նախատեսել կայանատեղեր և կանգառատեղեր՝ ապահովելով ՀՀՇՆ IV-11.03.03 շինարարական նորմերի պահանջները: Ընդ որում, հետիոտնի հասանելիության հեռավորությունը չպետք է գերազանցի 300 մ՝ նոր շինարարության, և 600 մ՝ վերակառուցման դեպքերում:

288. Մարդատար ավտոմոբիլների ժամանակավոր պահպանման բացօթյա կանգառատեղեր պետք է նախատեսել մարդատար անհատական ավտոմոբիլների հաշվարկային թվաքանակի առնվազն 70%-ի համար:

289. Բնակելի շրջաններին և միկրոշրջաններին սահմանակից փողոցների ու ճանապարհների սահմաններում ավտոմոբիլների ժամանակավոր և հիմնական պահպանման համար թույլատրվում է նախատեսել բացօթյա կանգառներ:

290. Բնակելի շրջանների և միկրոշրջանների տարածքում կարելի է նախատեսել ավտոմոբիլների պահպանման ստորգետնյա կայանատեղեր:

291. Բնակելի և հասարակական շենքերին ներկառուցված կամ կցակառուցված կայանատեղեր (բացառությամբ դպրոցների, մանկական նախադպրոցական հիմնարկների և բուժական հաստատությունների) պետք է նախագծել՝ ՀՀՇՆ 31-01, ՍՆԻՊ 2.08.02 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

292. Հաշմանդամներին պատկանող ավտոմոբիլների և այլ մոտոտրանսպորտի հիմնական պահպանման համար առանձնացված ավտոտնակներ պետք է նախատեսել բնակելի շենքերի մուտքերից 200 մ-ից ոչ ավելի հետիոտնային հասանելիության հեռավորությամբ: Տեղերի թիվը ընդունվում է ըստ նախագծային առաջադրանքի:

293. Հետիոտն մոտեցումների հեռավորությունը մարդատար ավտոմոբիլների ժամանակավոր պահպանման կանգառատեղերից անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 30-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 30

Հ/Հ	Անվանումը	Հեռավորությունը, մ
1.	Բնակելի շենքերի մուտքերը	100
2.	Կայարանների սպասարահները, հասարակական սննդի և առևտրի խոշոր օբյեկտների մուտքերը	150
3.	Բնակչության սպասարկման այլ հիմնարկները , կազմակերպություններն ու վարչական շենքերը	250
4.	Պուրակների, ցուցահանդեսների և մարզադաշտերի մուտքերը	400

294. Մարդատար ավտոմոբիլների կանգառատեղերի հաշվարկի նորմերը թույլատրվում է ընդունել սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածին համապատասխան:

295. Մարդատար ավտոմոբիլների կայանատեղերի հողամասերի չափերը՝ կախված դրանց հարկայնությունից, անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 31-րդ աղյուսակում տրված ցուցանիշներին համապատասխան, մեկ ավտոմոբիլի տեղի համար:

Աղյուսակ 31

Հ/Հ	Անվանումը	Հողամասերի չափերը, մ <sup>2</sup>
1.	Մեկ հարկանի կայանատեղի համար	30
2.	Երկհարկանի կայանատեղի համար	18
3.	Եռահարկ կայանատեղի համար	13
4.	Քառահարկ կայանատեղի համար	10
5.	Հինգ հարկանի կայանատեղի համար	9
6.	Վերգետնյա կանգառատեղ	24

296. Կայանատեղերի ուղեմուտքերի ու ելքերի նվազագույն հեռավորությունը մինչև մայրուղային փողոցների խաչմերուկներ պետք է ընդունել 50 մ, տեղական փողոցների խաչմերուկներ՝ 40 մ, հասարակական տրանսպորտի կանգառներ՝ 30 մ:

297. Մարդատար ավտոմոբիլների ստորգետնյա կայանատեղերի մուտքերն ու ելքերը բնակելի շենքերի և անհատական տների պատուհաններից, հասարակական շենքերի աշխատատեղերից ու հանրակրթական դպրոցների սահմաններից, մանկական նախադպրոցական ու բուժական հիմնարկներից պետք է հեռու լինեն 15 մ-ից ոչ պակաս:

298. Ստորգետնյա կայանատեղերի օդափոխիչ հորանները պետք է նախատեսվեն ՎՍՆ 01 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

299. Հատուկ նշանակության մարդատար ու բեռնատար ավտոմոբիլների կայանատեղերը, ավտոբուսների, տրոլեյբուսների ու տրամվայների հավաքակայանները, ինչպես նաև կենտրոնական տեխնիկական սպասարկման և ավտոմոբիլների սեզոնային պահպանման կայաններն ու վարձակալության կետերը պետք է տեղակայել դրանց համար հատուկ նախատեսվող գոտիներում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, դրանց հողամասի չափերն ընդունելով սույն շինարարական նորմերի 4-րդ հավելվածի պահանջների համաձայն:

300. Վերգետնյա և կիսավերգետնյա կայանատեղերից, մարդատար ավտոմոբիլների հիմնական և ժամանակավոր բացօթյա սպասարկման, տեխնիկական սպասարկման կայաններից մինչև բնակելի ու հասարակական շենքերը, ինչպես նաև բնակեցման տարածքում գտնվող դպրոցները, մսուր-մանկապարտեզները և բուժհիմնարկների տեղամասերն անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 32-րդ աղյուսակում նշված հեռավորություններից ոչ պակաս:

Աղյուսակ 32

Հ/Հ	Անվանումը	Հեռավորությունը, մ							
		Կայանատեղերից և բացօթյա կանգառատեղերից, մարդատար ավտոմոբիլների քանակի դեպքում					Տեխնիկական սպասարկման կայաններից, սպասարկման տեղերի դեպքում		
		10 և պակաս	11-50	51-100	101-300	300-ից ավելի	10 և պակաս	11-30	30-ից ավելի
1.	Բնակելի շենքեր	10 *)	15	25	35	50	15	25	50
2.	Բնակելի շենքեր՝ կողային խուլ պատերով	10 *)	10 *)	15	25	35	15	25	50
3.	Հասարակական շենքեր	10 *)	10 *)	15	25	25	15	20	20
4.	Հանրակրթական դպրոցներ և նախադպրոցական հիմնարկներ	15	25	25	50	-	50	-	-
5.	Բուժական հաստատություններ	25	50	-	-	-	50	-	-

6. \*) - III-V կարգերի հրակայունության կայանատեղերի համար պետք է ընդունել 12 մ-ից ոչ պակաս:

301. Հեռավորությունները պետք է նշանակել բնակելի և հասարակական շենքերի պատուհաններից և հանրակրթական դպրոցների, մանկական նախադպրոցական ու բուժական հիմնարկների հողամասերի սահմաններից մինչև կայանատեղերի պատերը կամ բացօթյա կանգառատեղերի սահմանները:

302. Շենքերի ճակատի երկարությամբ՝ 101-ից 300 ավտոմոբիլի համար տեղակայված բացօթյա կանգառատեղերից մինչև այդ շենքերը հեռավորությունը պետք է ընդունել 50 մ-ից ոչ պակաս:

303. Բացվող պատուհաններ, ինչպես նաև դեպի բնակելի ու հասարակական շենքերը ուղեմուտքեր չունեցող I և II կարգի հրակայունության կայանատեղերի համար 30-րդ աղյուսակում բերված հեռավորությունները կարելի է կրճատել 25%-ով:

304. Մարդատար ավտոմոբիլների 300 և ավելի տեղով կայանատեղերն ու բացօթյա կանգառատեղերը պետք է տեղակայել բնակելի միկրոշրջաններից դուրս:

305. Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կայանները պետք է նախատեսել մեկ սպասարկման կետ՝ 200 մարդատար ավտոմոբիլի համար՝ հողամասերի չափերն ընդունելով համաձայն սույն շինարարական նորմերի 33-րդ աղյուսակում տրված ցուցանիշի:

Աղյուսակ 33

Հ/Հ	Սպասարկման կետերի քանակը	Հողամասի մակերեսը, 1 օբյեկտին հա
1.	2 կետ	0.15
2.	5 կետ	0.5
3.	10 կետ	1.0
4.	15 կետ	1.5
5.	25 կետ	2.0
6.	40 կետ	3.5

306. Հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանները պետք է նախագծել՝ օրական 1200 մարդատար ավտոմոբիլների սպասարկման համար վառելանյութի բաշխման մեկ կետ հաշվարկից, հողամասերի չափերն ընդունելով համաձայն սույն շինարարական նորմերի 34-րդ աղյուսակում տրված ցուցանիշի:

Աղյուսակ 34

Հ/Հ	Հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանների քանակը	Հողամասի մակերեսը, 1 օբյեկտին հա
1.	1 բաշխման կետ	0.1
2.	1-ից՝ 5 բաշխման կետ	0.2
3.	5-ից՝ 7 բաշխման կետ	0.3
4.	7-ից՝ 9 բաշխման կետ	0.35
5.	9-ից՝ 11 բաշխման կետ	0.4

307. Բնակավայրերում ավտոմոբիլների հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանները (ԱՀՎԼԿ) պետք է նախատեսել միայն հեղուկ վառելիքի պահման ստորգետնյա պահեստարաններով, պահպանելով N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի, ՍՆԻՊ 2.05.13, ՍՆԻՊ II-106 և ՎՍՆ 01 շինարարական նորմերի պահանջները: Ստորգետնյա պահեստարանների միավորի տարողությունը չպետք է գերազանցի 20 մ<sup>3</sup>, իսկ ընդհանուրը՝ 40 մ<sup>3</sup>:

308. ԱՀՎԼԿ-ի կազմում պետք է նախատեսել տեխնոլոգիական սարքավորումներով շենքեր և շինություններ, որոնք կապահովեն.

- 1) սպասարկող և սպասարկվող անձնակազմի կենցաղային պահանջները (սանիտարական հանգույց, սննդի կետ, սպասասրահ),
- 2) շրջակա միջավայրի պահպանությունը,
- 3) վառելիքի ընդունումը, պահեստավորումը և առաքումը,

4) ԱՀՎԼԿ-ի շահագործման անվտանգությունը,

5) արտաքին հրդեհաշիջման աշխատանքները՝ նախատեսելով 100մ<sup>3</sup> ծավալով ստորգետնյա ջրավազան կամ տեղադրելով երկու հրշեջ հիդրանտներ՝ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

309. ԱՀՎԼԿ-ի մուտքերը (ելքերը) պետք է տեղադրվեն միմյանցից անջատ և մինչև փողոցների և ճանապարհների մոտակա հատումները՝ 50 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա: ԱՀՎԼԿ-ի տեղադրումը արգելվում է.

- 1) փողոցների և ճանապարհների բաժանիչ շերտում և ուղղորդիչ կղզյակներում,
- 2) տրանսպորտային հոսքերի միակողմանի երթևեկության դեպքում, երթևեկության ձախ կողմից,
- 3) բնակելի կառուցապատման փողոցների և հետիոտնային ճանապարհների վրա,
- 4) բնապահպանական, պատմական և մշակութային, առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հողերում:

310. ԱՀՎԼԿ-ի տարածքը պետք է տարանջատվի փողոցների և ճանապարհների երթևեկային մասից անվտանգության կղզյակով, որի լայնությունը սահմանվում է մայթի տեղադրման պայմանից՝ նվազագույնը 1.5 մ լայնությամբ:

311. Հեղուկ վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններով ԱՀՎԼԿ-ի հեռավորությունները մինչև մանկական նախադպրոցական հաստատությունների, հանրակրթական դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, ստացիոնար բուժական հիմնարկների հողամասերի սահմանները կամ բնակելի և հասարակական շենքերի պատերը պետք է ընդունել 50 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունը պետք է որոշել բաշխիչ կետերից և վառելիքի պահեստավորման ստորգետնյա պահեստարաններից: Օրական 500-ից ոչ ավելի միայն մարդատար ավտոմոբիլների սպասարկման համար նախատեսված ԱՀՎԼԿ-ի հեռավորությունը մինչև վերը նշված օբյեկտները թույլատրվում է նվազեցնել, բայց ընդունել 25 մ-ից ոչ պակաս:

312. Ավտոմոբիլների գազալիցքավորման ճնշակայաններին (ԱԳԼՃԿ) տրամադրած հողատարածքը՝ շինարարություն կազմակերպելու համար, պետք է լինի ոչ պակաս, քան 0.2 հեկտար, իսկ մոնոբլոկ կայանների դեպքում՝ ոչ պակաս 0,1 հեկտարից: ԱԳԼՃԿ-ները տեղադրել միմյանցից 2 կմ-ից ոչ պակաս հեռավորության վրա՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թ. 1104-Ն որոշման պահանջների: ԱԳԼՃԿ-ի գազի ակումուլյացիոն տարողությունների հեռավորությունները պետք է լինեն՝ էլեկտրական հոսանքի օդային գծերի բարձրությունը գազալցակայանի գազահեռացման աշտարակի բարձրությունից պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի N 961-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

313. ԱԳԼՃ-ի մուտքերը (ելքերը) պետք է տեղադրվեն միմյանցից անջատ և մինչև փողոցների և ճանապարհների մոտակա հատումները՝ 50 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

314. ԱԳԼՃԿ-ի կազմում պետք է նախատեսել տեխնոլոգիական սարքավորումներով շենքեր և կառուցվածքներ, որոնք կապահովեն.

- 1) սպասարկող և սպասարկվող անձնակազմի կենցաղային պահանջները (սանիտարական հանգույց, սննդի կետ, սպասասրահ),
- 2) շրջակա միջավայրի պահպանությունը,
- 3) բնական գազի պահեստավորումը և կոմպրեսացված վառելիքի լիցքավորումը,
- 4) ԱԳԼՃԿ-ի շահագործման անվտանգությունը,

5) արտաքին հրդեհաշիջման աշխատանքները՝ նախատեսելով 100մ<sup>3</sup> ծավալով ստորգետնյա ջրավազան կամ տեղադրելով երկու հրշեջ հիդրանտներ՝ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

315. ԱԳԼՃԿ-ի կառուցման թույլատրելի հեռավորությունները՝ արդյունաբերական կազմակերպություններից, երկաթգծի կայարաններից, ընդհանուր օգտագործման երկաթգծային կամուրջներից, ավտոճանապարհներից, շենք-շինություններից, մարդկանց գանգվածային կուտակումներով հրապարակներից, պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

316. ԱԳԼՃԿ-ի և ԱՀՎԼԿ-ի միջև թույլատրելի հեռավորությունները պետք է սահմանել՝

պահպանելով «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» ՀՀՇՆ 21-01 նորմերի պահանջները:

**XVII. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄ**

317. Քաղաքների և այլ բնակավայրերի խմելու-տնտեսական ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծումը պետք է իրականացնել համաձայն ՀՀՇՆ 40-01.01, ՍՆԻՊ 2.04.02 և ՍՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի պահանջների՝ հաշվի առնելով խմելու ջրի ստացման սանիտարահիգիենիկ անվտանգության, բնապահպանական և ռեսուրսախնայողության պահանջները:

318. Բնակավայրերի բնակելի և հասարակական կառուցապատումը՝ ներառյալ տնամերձ հողամասերով անհատական և բլոկավորված կառուցապատմամբ հատվածները, ինչպես նաև արտադրական օբյեկտները պետք է ապահովված լինեն ջրամատակարարման և ջրահեռացման կենտրոնացված կամ տեղային համակարգերով: Այն բնակելի գոտիներում, որոնք ապահովված չեն կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով, բազմահարկ բնակելի շենքերի տեղակայում չի թույլատրվում:

319. Խմելու-տնտեսական ջրամատակարարման աղբյուրների ընտրությունը և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիների չափերի սահմանումն անհրաժեշտ է իրականացնել համաձայն N2-III-Ա2-1 և N 2-III-Ա2-2 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների՝ հաշվի առնելով ճառագայթային անվտանգության նորմերը:

320. Զրի մաքրման կայանների զբաղեցրած հողամասերի չափերը՝ կախված դրանց արտադրողականությունից (հազ. մ<sup>3</sup>/օր), պետք է ընդունել ըստ նախագծի, բայց սույն շինարարական նորմերի 35-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 35

Հ/Հ	Արտադրողականությունը, հազ. մ <sup>3</sup> /օր	Հողամասի չափերը, հա
1.	մինչև 0,8	1
2.	09-ից բարձր մինչև 12	2
3.	13-ից - <sup>բ</sup> 32	3
4.	33-ից - <sup>բ</sup> 80	4
5.	81-ից - <sup>բ</sup> 125	6
6.	126-ից - <sup>բ</sup> 250	12
7.	251-ից - <sup>բ</sup> 400	18
8.	401-ից - <sup>բ</sup> 800	24

321. Կոյուղու մաքրման սարքավորումների զբաղեցրած հողամասերի չափերը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի 36-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 36

Հ/Հ	Կոյուղու մաքրման սարքավորումների արտադրողականությունը (հազ. մ <sup>3</sup> /օր)	Հողամասի չափերը, հա		
		մաքրող սարքավորումներ	տիղմի հարթակներ	կոյուղաջրերի խորը մաքրման կենսաբանական լճակներ
1.	Մինչև 0,7	0,5	0,2	-
2.	08-ից բարձր մինչև 17	4	3	3
3.	18-ից - <sup>բ</sup> 40	6	9	6
4.	41-ից - <sup>բ</sup> 130	12	25	20
5.	131-ից - <sup>բ</sup> 175	14	30	30
6.	176-ից - <sup>բ</sup> 280	18	55	-



322. 280 հազ.մ<sup>3</sup>/օր-ից բարձր արտադրողականությամբ մաքրման կայանների հողամասերի չափերը պետք է ընդունել սահմանված կարգով մշակված նախագծերով, համանման կառույցների նախագծերով:

323. Կոյուղու մաքրման սարքավորումների տեղային /լոկալ/ համակարգի դեպքում հողամասերի և դրանց սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը պետք է ընդունել գրունտային պայմաններից և կոյուղաջրերի քանակից ելնելով, 0.25 հա-ից ոչ ավելի, և համաձայն ՄՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի պահանջների:

324. Կոյուղու կենտրոնական համակարգի բացակայության դեպքում պետք է նախատեսել կեղտաջրերի մաքրման կայաններ, որոնց համար առանձնացված հողամասերի և սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 12-րդ աղյուսակի և համաձայն ՄՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի պահանջների:

### **XVIII. ՀԵՂԵՂԱՏԱՐ ԿՈՅՈՒՂԻ**

325. Հեղեղատար կոյուղու նախագծումը պետք է իրականացնել գործող նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝ ՄՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի, ՄՆ 496 հրահանգի և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

326. Տարբերակում են հեղեղատար կոյուղու ընդհանուր (միախառն) (կոմունալ-տնտեսականի հետ համատեղված) և առանձնացված համակարգեր: Նախապատվությունը տրվում է առանձնացված համակարգին: Հեղեղատար կոյուղու միջոցով մակերևութային ջրերի հեռացումը դեպի գետեր կամ ջրավազաններ պետք է իրականացվի քաղաքների և գյուղական բնակավայրերի տարածքների ողջ ավազանից՝ դեպի ցանց հեռացված հոսքաջրերը նախնական մաքրման ենթարկելուց հետո: Բնակավայրի տարածքից հավաքվող և տեղափոխվող ձյան և սառույցի զանգվածների օգտահանումը պետք է իրականացնել կոյուղու կոլեկտորների վրա տեղակայված ձնհալ խցերի կիրառմամբ՝ օգտագործելով կոյուղու հոսքաջրերի ջերմությունը: Մակերևութային հոսքաջրերի բացթողումը դեպի անարտահոս ջրավազաններ, ողողվող հեղեղատներ, փակ ձորակներ, ճահճացած տարածքներ չի թույլատրվում:

327. Մակերևութային հոսքաջրերի բացթողումը լողալու համար նախատեսված ջրավազաններ հնարավոր է միայն դրանք խորը մաքրման ենթարկելու պայմանով:

328. Ջրահեռացման խողովակների և ջրատար ուղիների չափերի որոշման համար անհրաժեշտ է հաշվի առնել հեղեղատար կոյուղու ցանց մտնող հոսքաջրերի առավելագույն հաշվարկային քանակը, որը կախված է տեղումների հաշվարկային ինտենսիվությունից, տևողությունից, հոսքաջրերի գործակցից և ջրհավաք ավազանի մակերեսից: Քաղաքային տարածքներում պետք է կիրառել հեղեղատար կոյուղու փակ համակարգ: Բաց համակարգերի կիրառումը թույլատրվում է միջին և փոքր քաղաքների, գյուղական բնակավայրերի՝ սակավահարկ կառուցապատմամբ շրջաններում և զբոսայգիների տարածքներում՝ ավտոմայրուղիներին ուղեկցող խրամառուններով: Ճանապարհների հետ հատումը նախատեսվում է կազմակերպել կամրջային կամ խողովակային անցումներով: Ջրատար խողովակների համակարգի նվազագույն տրամագիծը ընդունվում է 400 մմ: :

329. Բաց հեղեղատար համակարգը կազմված է բնական կամ արհեստական պատվածքով տարբեր չափերի ջրահեռացման առվակներից կամ պարզեցված ջրատար կառուցվածքներից: Ջրընդունիչներ այս դեպքում չեն տեղադրվում:

330. Մակերևութային հոսքաջրերի հեռացման համակարգը կազմակերպելիս պետք է հաշվի առնվի ուղեկցող ցամաքուրդային համակարգերից, ջերմային ցանցերից և ստորգետնյա ենթակառուցվածքների ընդհանուր կոլեկտորներից ցամաքուրդային ջրերի ընդունման հնարավորությունը: Սալարկված տարածքների լվացման և կանաչապատ տարածքների ոռոգման արդյունքում գոյացած աննշան ծավալով ջրերի մուտքը ջրընդունիչ հորեր կարելի է հաշվի չառնել: Տեխնիկական հնարավորության այդ ջրերը առանձին խողովակաշարերի միջոցով կարելի է օգտագործել դեկորատիվ լճակների սնուցման համար:

331. Ջրահեռացման ցանցի հաշվարկը պետք է իրականացնել անձրևի հոսքաջրերի քանակից ելնելով ՄՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի պահանջներից:

332. Հաշվարկային ինտենսիվության միապատիկ գերազանցման դեպքում, որի ժամանակ հեղեղատար կոյուղու ջրընդունիչը պետք է բաց թողնի անձրևահոսքերի միայն մի մասը, մնացած մասը ժամանակավորապես ջրածածկում է (ողողում է) փողոցի երթևեկելի մասը, և թեքության առկայության դեպքում՝ հոսում ջրահեռացման եզրային խրամառուններով: Այս դեպքում, փողոցների ջրածածկման

բարձրությունը պետք է պակաս լինի նկուղային և կիսանկուղային հարկերի ջրածածկման բարձրությունից: Հեղեղատար կոյուղու ցանցի միապատիկ գերլցման ժամանակահատվածն ընդունվում է տարածքի բնույթից, մակերեսից և անձրևի ինտենսիվության մեծությունից՝ ըստ ՄՆԻՊ 2.04.03 շինարարական նորմերի:

333. Քաղաքների տարածքներից հեռացված մակերևութային ջրերի մաքրումը պետք է իրականացնել տեղային (լոկալ) կամ խմբային տարբեր տիպի մաքրման կառույցներում: Մաքրման ուղարկվող հոսքաջրերի հաշվարկային քանակը պետք է որոշել անձրևի տարեկան առավելագույն հոսքի (0.05-0.1) ինտենսիվության միապատիկ գերազանցման ժամանակահատվածով:

334. Արդյունաբերական կազմակերպությունների, պահեստարանների, ավտոտնտեսությունների և այլ տարածքներից, ինչպես նաև բնակելի և հասարակական-գործարարական գոտիների տարածքներում տեղակայված առավել աղտոտված (օրգանական կամ ոչ օրգանական ծագման թունավոր (տոքսիկ) նյութերով) հատվածներից մակերևութային ջրահոսքերը պետք է ենթարկվեն մաքրման լոկալ (ինքնուրույն) մաքրման սարքավորումներում՝ մաքրման ենթարկված ջրի գերադասելի կրկնակի օգտագործմամբ՝ փակ ցիկլերով արդյունաբերական կարիքների համար:

335. Արդյունաբերական և բնակելի տարածքներից մակերևութային հոսքաջրերի հեռացմանը դեպի ջրային օբյեկտներ ներկայացվում են նույն պահանջները, ինչ և կոյուղաջրերին՝ ՄՆ 496 հրահանգի պահանջներին համապատասխան:

336. Արձրևաջրերի հաշվարկային ծախսի մաքրման կամ կարգավորման (կուտակման) նպատակահարմարությունը պետք է որոշել տեխնիկատնտեսական հաշվարկների հիման վրա:

337. Կողմնորոշիչ հաշվարկների համար, քաղաքների բնակելի և հասարակական-գործարարական գոտիների տարածքներից մաքրման կայան մտնող մակերևութային հոսքաջրերի օրական ծավալն ընդունվում է տարածքի կառուցվածքային մասերից կախված՝ սույն շինարարական նորմերի 37-րդ աղյուսակում տրված տվյալներին համաձայն:

Աղյուսակ 37

Հ/Հ	Քաղաքի տարածքը	Մաքրման ուղարկվող մակերևութային ջրերի ծավալը մ <sup>3</sup> /օր տարածքի 1 հա-ից
1.	Քաղաքային քաղաքաշինական հանգույց	60-ից ավելի
2.	Մայրուղիներին հարող տարածքներ	50-60
3.	Միջմայրուղային տարածքներ՝ թաղամասի հետևյալ չափերով. 1) մինչև 5 հա, 2) 5-10 հա, 3) 10-50 հա	45-50 40-45 35-40

Ջրային օբյեկտներ բաց թողնվող մակերևութային ջրահոսքերի մաքրման որակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրությանը, սանիտարական նորմերի պահանջներին և ջրամբարի ջրօգտագործման ռեժիմին:

338. Բնակելի գոտուց մինչև մակերևութային հոսքի մաքրման բաց տիպի կայան սանիտարապաշտպանիչ գոտին (ՄՊԳ) պետք է ընդունել 100 մ, փակ տիպի դեպքում՝ 50 մ:

**XIX. ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**

339. Հանրապետության պարբերական խոնավության պակասությամբ գյուղատնտեսական տարածքների համար հարկ է նախատեսել ոռոգում՝ բաղկացած տեխնիկական, ագրոտեխնիկական, կազմակերպչական ու տնտեսական միջոցառումներից, որոնց հիմքում ընկած է ջրի նորմավորված մատակարարման սկզբունքը:

340. Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգումն իրականացնել ոռոգման տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, օդում ջրի ցրմամբ՝ ջրցրիչ սարքավորումներով, ստորգետնյա խողովակաշարերի միջոցով, կաթիլային):

341. Բաշխիչ ցանցը պետք է բաղկացած լինի ջրաչափիչ, մակարդակի բարձրացման,

ջրածախսումների կարգավորման սարքավորումներով հագեցած մատակարարող և կարգավորող ջրանցքներից՝ ջրանցքների հատակի նիշերի լծորդմամբ:

342. Ոռոգման ռեժիմները պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով խոնավության դեֆիցիտը հողի ակտիվ շերտում ըստ կլիմայական պայմանների (միջին տարվա համար): Որպես հաշվարկային պետք է ընդունվի երաշտ տարվա ոռոգման ռեժիմը, այսինքն՝ վեգետացիոն շրջանում ջրի 95%-ի ապահովման պայմանը:

343. Ոռոգման համակարգի հաշվարկային ելքերը պետք է որոշվեն համաձայն.

- 1) ոռոգման ենթակա տարածքների մակերեսների,
- 2) ՄՆԻՊ 2.04.02 շինարարական նորմերի պահանջների:

344. Տարածքների ոռոգման աղբյուր կարող է ծառայել համայնքների տարածքով անցնող գետակների ջուրը, ինչի համար անհրաժեշտ է փոքր ամբարտակների օգնությամբ ստեղծել ջրամբարներ և ազատ հոսքի կամ պոմպերի օգնությամբ իրականացնել ոռոգումը:

345. Քաղաքային բնակավայրերի ոռոգման նպատակով ջրապահանջի հաշվարկման ժամանակ հարկ է հաշվի առնել նաև փողոցների լվացման, այգիների ու պուրակների ոռոգման համար պահանջվող ջրի ծախսը: Հեղեղետար կոյուղու ելքերի հաշվարկներում պետք է հաշվի առնել նաև փողոցների լվացման համար պահանջվող ջրի, ինչպես նաև հալոցքի և անձրևաջրերի ծախսը: Քաղաքային բնակավայրերի բարեկարգման պահանջներից ելնելով փողոցները պետք է լվացվեն գիշերային ժամերին:

**XX. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ**

346. Քաղաքային և գյուղական բնակավայրերի սանիտարական մաքրումը պետք է ապահովել կոյուղացման համակարգի, կենցաղային և արդյունաբերական թափոնների հավաքման ու օգտահանման հետ փոխկապակցված՝ հաշվի առնելով բնապահպանական և ռեսուրսախնայողության պահանջները և N 2.1.7.002 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կենցաղային թափոնների քանակը պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 38-րդ աղյուսակի տվյալների:

Աղյուսակ 38

Հ/Հ	Անվանումը	Թափոնների քանակը* մարդ/տարի	
		մ <sup>3</sup>	կգ
1.	Կոշտ կենցաղային աղբ Քաղաքում ընդհանուր քանակը (բնակելի շենքեր՝ կոյուղացված, գազաֆիկացված, ջրամատակարարման ցանցով, հասարակական և այլ շենքեր ու շինություններ)	1.3**	360
2.	* Հորերից հանված հեղուկ թափոնները (կոյուղու բացակայության դեպքում) ընդունել 2000-3500լ (մարդ/տարի):		
3.	** Միջին, փոքր, փոքրագույն քաղաքների համար կուտակված աղբի նորմը հանձնարարվում ընդունել 1.1-1.3 մ <sup>3</sup> /տարի:		

347. Կենցաղային թափոնների վնասագերծման, տեղափոխման և վերամշակման կազմակերպությունների և կառուցվածքների հողամասերի և սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 39-րդ աղյուսակի տվյալների:

Աղյուսակ 39

Հ/Հ	Կազմակերպություններ և կառուցվածքներ	1000 տ կենցաղային թափոնների համար հողամասերի մակերեսը, հա	Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը**, մ
1.	Աղբամշակման և աղբաայրման կազմակերպություններ՝ տարեկան հազ. տ հզորությամբ 1) մինչև 100, 2) 100-ից մեծ	0.05 0.05	300 500
2.	Կոմպոստի պահեստներ	0.04	300
3.	Պոլիգոններ*	0.02-0.05	500
4.	Կոմպոստացման դաշտեր	0.5-1	500
5.	Աղբատեղափոխման կայաններ	0.04	100
6.	Թողարկման (դատարկման) կայաններ	0.02	300
7.	Վնասագերծված նստվածքների (ըստ չոր նյութի) պահեստավորման և թաղման դաշտեր	0.3	1000
8.	* Պոլիգոնների նվազագույն չափերն ընտրվում են ավազային գրունտներում տեղակայված կառուցվածքների դեպքում:		
9.	** Աղբամշակման և աղբաայրման կազմակերպությունների համար, մթնոլորտ վնասակար նյութերի արտանետման պարագայում, սանիտարաշապտպանիչ գոտու չափը պետք է ճշգրտվի արտանետումների ցրման հաշվարկի հիման վրա:		

**XXI. ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ**

348. Էներգակիրների ծախսը և էներգիայի աղբյուրների հզորության պահանջը պետք է որոշել.

1) արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների համար՝ ըստ գործող կազմակերպությունների հայտերի (տեղեկատվության), նոր, վերակառուցվող կամ նմանատիպ կազմակերպությունների նախագծերի, ինչպես նաև ըստ խոշորացված ցուցանիշների (տեղական առանձնահատկությունների հաշվառմամբ),

2) տնտեսական-կենցաղային և կոմունալ կարիքների համար՝ գործող ճյուղային (էլեկտրա, ջերմա- և գազամատակարարման) նորմերին համապատասխան:

349. Էլեկտրասպառման խոշորացված ցուցանիշները թույլատրվում է ընդունել սույն շինարարական նորմերի 6-րդ հավելվածին համապատասխան:

350. Գոյություն ունեցող, վերակառուցվող և նախատեսվող օբյեկտների էլեկտրապահանջի վերաբերյալ տվյալների հավաքագրման (էլեկտրաաուդիտ) ժամանակ պետք է առաջնորդվել էներգետիկ կարիքները կոգեներատիվ (էլեկտրական և ջերմային էներգիաների համատեղ արտադրության) եղանակով ծածկելու նպատակահարմարությամբ, ինչպես «Մեծ» էներգետիկայի օբյեկտներում՝ ՋԷԿ, ճյուղավորված և ձգված ջերմային ցանցով (ջերմամատակարարում), այնպես էլ՝ «Փոքր» (բաշխված) էներգետիկայի օբյեկտներում՝ ներառյալ ինքնավար (ավտոնոմ) էներգակիրները: Սրանց թվին կարելի է դասել նաև էներգիայի վերականգնվող աղբյուրների և նոր էներգատեխնոլոգիաների կիրառումը:

351. Բնակավայրերի էլեկտրամատակարարումը պետք է նախատեսել տարածաշրջանային էներգետիկ ցանցից: Տարածաշրջանային էներգահամակարգին միանալու անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել առանձին էլեկտրական ենթակայաններից:

352. Քաղաքների էլեկտրամատակարարումը պետք է իրականացվի էլեկտրաէներգիայի՝ նվազագույնը երկու անկախ աղբյուրներից՝ ՍՆԻՊ 3.05.06 շինարարական նորմերի պահանջների ապահովմամբ:

353. Ջերմային էլեկտրակայանները պետք է տեղաբաշխվեն ջերմային և էլեկտրական բեռնվածությունների կենտրոնի մոտակայքում, բնակավայրի սահմաններից դուրս, բնակելի,

հասարակական-գործարարական և ռեկրեացիոն գոտիների նկատմամբ հողմահար կողմով՝ պահպանելով ՍՆԻՊ II-58 շինարարական նորմերի պահանջները:

354. Զերմային էլեկտրակայաններից մինչև բնակելի և հասարակական կառուցապատումը սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը պետք է որոշել սույն շինարարական նորմերի 111, 113 և 114-րդ կետերի պահանջների համաձայն:

355. Էլեկտրահաղորդման 110 կՎ և ավելի բարձր լարման օդային գծերի (ՕԳ) տեղաբաշխումը թույլատրվում է միայն բնակելի և հասարակական-գործարարական գոտիների սահմաններից դուրս: 220 կՎ և ավելի բարձր լարման էլեկտրահաղորդման տարանցիկ գծերի տեղադրումը բնակավայրերի սահմաններում չի թույլատրվում, բացառությամբ պահուստային տարածքների: Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի միջանցքների լայնությունը և դրանք շահագործելու թույլատրելի ռեժիմը, այդ թվում և գյուղատնտեսական արտադրանքի ստացման համար, որոշվում են էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ ՀՀ կառավարության N 961-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգով: 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի համար՝ համաձայն ՀՀ կառավարության N 363-Ն որոշմամբ հաստատված էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի, էլեկտրահաղորդման օդային գծերի երկայնքով գծի երկու կողմից (եզրային հաղորդալարերից՝ դրանց չջեղված դիրքի դեպքում) հետևյալ հեռավորությունների վրա սահմանվում են անվտանգության գոտիներ, որոնց չափերը պետք է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 40-րդ աղյուսակի տվյալների:

Աղյուսակ 40

Հ/Հ	Գծի լարումը (կՎ)	Հեռավորությունը (մ)
1.	Մինչև 20	10
2.	35	15
3.	110	20
4.	150, 220	25
5.	330, 500	30

356. Բնակելի, հասարակական-աշխատանքային և ռեկրեացիոն գոտիների սահմաններում 110 կՎ և ավելի բարձր լարման էլեկտրական ցանցերի անցկացումը դեպի խորը ներանցումով իջեցնող ենթակայաններ պետք է նախատեսել մալուխային գծերով:

357. Քաղաքների վերակառուցման ժամանակ պետք է նախատեսել գոյություն ունեցող 35-110 կՎ և ավելի բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի դուրս բերում բնակելի, հասարակական-գործարարական գոտիների սահմաններից, կամ օդային գծերի փոխարինում մալուխայինով:

358. 4 և ավելի հարկայնությամբ կառուցապատում ունեցող քաղաքների և այլ բնակավայրերի բոլոր գոտիներում մինչև 20 կՎ (ներառյալ) լարում ունեցող (առողջարանային տարածքներում բոլոր լարման ցանցերը) էլեկտրական ցանցերը պետք է նախատեսել մալուխային գծերով:

359. Առանձին կանգնած բաշխիչ կետերի և երկուսից ոչ ավել (յուրաքանչյուրը մինչև 1000 կՎԱ հզորությամբ) տրանսֆորմատորներով 10(6)-20 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանների հեռավորությունը մինչև բնակելի տների և հասարակական շինությունների պատուհանները պետք է ընդունել 10 մ-ից ոչ պակաս՝ հաշվի առնելով աղմուկի, վիբրացիայի թույլատրելի մակարդակը և հակահրդեհային պահանջները, իսկ մինչև բուժ-պրոֆիլակտիկ հաստատությունները՝ 15 մ-ից ոչ պակաս՝ N 2-III-11.3 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան:

360. Բնակավայրերի ջերմամատակարարումը պետք է նախատեսել սահմանված կարգով հաստատված ջերմամատակարարման սխեմայի համաձայն՝ հաշվի առնելով արդյունավետ համադրության և ապակենտրոնացված ջերմային աղբյուրների էներգախնայողության տնտեսական հիմնավորումը:

361. Արդյունաբերական կազմակերպությունների, ինչպես նաև բնակելի և հասարակական կառուցապատման օբյեկտների ջերմամատակարարման համար նախատեսված էներգիա արտադրող սարքերն ու սարքավորումները պետք է տեղաբաշխել արտադրական կամ կոմունալ գոտիների տարածքներում:

362. Արդյունաբերական կազմակերպությունների, ինչպես նաև բնակելի և հասարակական կառուցապատման օբյեկտների ջերմամատակարարման համար նախատեսված կաթսայատները պետք է տեղաբաշխել արտադրական գոտիների տարածքներում:

363. Ցածր հարկայնությամբ բազմաբնակարան բնակելի, ինչպես նաև մեկ-երկու հարկանի տնամերձ հողամասերով բնակելի կառուցապատմամբ տարածքների ջերմամատակարարումը թույլատրվում է նախատեսել մի խումբ բնակելի և հասարակական շինությունները սպասարկող կաթսայատներից կամ ջերմության անհատական աղբյուրներից՝ տեխնիկական կանոնակարգերի, բնապահպանական, սանիտարահիգիենիկ, ինչպես նաև հակահրդեհային պահանջների պահպանմամբ:

364. Բնակելի գոտիներում տեղակայված առանձին կանգնած կաթսայատների հողամասերի չափերը պետք է ընդունել համաձայն սույն շինարարական նորմերի 41-րդ աղյուսակի տվյալների:

Աղյուսակ 41

Հ/Հ	Կաթսայատների ջերմարտադրողականությունը, Հկալ/ժամ (ՄՎտ)	Կաթսայատների հողամասերի չափերն ըստ օգտագործվող վառելիքի տիպի, հա	
		կոշտ վառելիք	հեղուկ վառելիք
1.	5-ից մինչև 10 (6 մինչև 12)	1,0	1,0
2.	11 -ից բարձր մինչև 50 (12-ից բարձր մինչև 58)	2,0	1,5
3.	51 -ից- (58 -"- 116)	3,0	2,5
4.	101-ից -"- 200 (116 -"- 233)	3,7	3,0
5.	201-ից -"- 400 (233 -"- 466)	4,3	3,5
6.	Սպառողներին տաք ջրով անմիջական ջրաբաշխումով ապահովող կաթսայատների, ինչպես նաև վառելիքը երկաթգծով տեղափոխվող կաթսայատների հողամասերի չափերը պետք է մեծացնել 20%-ով:		
7.	Մոխրախարամային կույտերի տեղադրումը պետք է նախատեսել բնակեցման տարածքից դուրս:		
8.	Մոխրախարամային կույտերի տեղադրման պայմաններն ու հարթակների չափերն անհրաժեշտ է նախատեսել համաձայն ՍՆԻՊ 2.04.07 շինարարական նորմերի:		
9.	Կաթսայատներից սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը որոշվում են ըստ գործող սանիտարական նորմերի:		

365. Մայրուղային գազատարների գազաբաշխիչ կայանները պետք է տեղաբաշխել բնակավայրի սահմաններից դուրս՝ համաձայն ՀՀՇՆ IV-12.03.01 շինարարական նորմերի պահանջների:

366. Գազալցման կայանների (ԳԼԿ) հողամասերի չափերը, կախված դրանց արտադրողականությունից, պետք է ընդունել ըստ նախագծի, բայց սույն շինարարական նորմերի 42-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ ավելի:

Աղյուսակ 42

Հ/Հ	ԳԼԿ արտադրողականությունը, հազ.տ/տարի	Հողամասի չափերը, հա
1.	10 հազ.տ/տարի	6
2.	20 -"-	7
3.	40 -"-	8

367. Գազալցման կետերի (ԳԿ) և բալունների միջանկյալ պահեստների հողամասերի չափերն անհրաժեշտ է ընդունել 0,6 հա-ից ոչ ավելի: Հեռավորությունը դրանցից մինչև տարբեր նշանակության շենքերն ու շինություններն անհրաժեշտ է ընդունել համաձայն N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի, ՍՆԻՊ 2.05.13, ՍՆԻՊ II-106 և ՎՍՆ-01 շինարարական նորմերի պահանջների:

368. Կապի, ռադիոհաղորդման և հեռուստատեսության, հակահրդեհային և պահպանության ազդանշանման, ինժեներական սարքավորումների համակարգի դիսպետչերական ծառայությունների մատուցման կազմակերպությունների, շենքերի և շինությունների տեղաբաշխումն անհրաժեշտ է իրականացնել սահմանված կարգով հաստատված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

369. Գազալիցքավորման ճնշակայաններից, գազալցման կետերից և բալունների միջանկյալ պահեստներից մինչև տարբեր նշանակության շենքերն ու շինությունները հեռավորությունը պետք է ընդունել ըստ ՀՀՇՆ IV-12.03.01 շինարարական նորմերի պահանջների:

**XXII. ՏԱՐԱԾՔԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

370. Տարածքի ինժեներական նախապատրաստման և պաշտպանության միջոցառումները պետք է սահմանել՝ հաշվի առնելով ինժեներաերկրաբանական պայմաններն ու դրանց փոփոխությունների կանխատեսումները, տարածքի օգտագործման և հատակագծային կազմակերպման բնույթը, ինչպես նաև վտանգավոր երկրաբանական երևույթներից կառուցապատվող տարածքների ինժեներական պաշտպանության համակարգի նախագծման՝ ՄՆԻՊ 2.01.15, ՀՀՇՆ II-6.01 շինարարական նորմերի պահանջները:

371. Բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծերը մշակելիս, անհրաժեշտության դեպքում, պետք է նախատեսել ինժեներական պաշտպանություն հեղեղներից, ջրածածկումներից, ձնահյուսքերից, փլուզումներից, սողանքներից և քարաթափերից:

372. Ուղղաձիգ հատակագծման ժամանակ տարածքի նախագծային նիշերը պետք է ընտրել այնպես, որ առավելագույն չափով պահպանվեն բնական ռելիեֆը, հողածածկույթը, մակերևութային ջրերի բնական հուները, գոյություն ունեցող ծառատունկը, մակերևութային ջրերի հեռացումն այն արագությամբ, որ բացառվի հողի էռոզիայի հնարավորությունը, կատարվեն նվազագույն ծավալի հողային աշխատանքներ՝ հանված գրունտներն օգտագործելով շինարարական հրապարակում:

373. Մակերևութային ջրերի հեռացումը (դեպի ջրամբարները, ջրահոսքերը, հեղեղատարները և այլն) պետք է իրականացնել ամբողջ ավազանից՝ տրանսպորտային կառուցվածքների նորմերի և պահանջների համաձայն՝ քաղաքներում նախատեսելով անձրևաջրերի հեռացման փակ համակարգ՝ հոսքի նախնական մաքրումով:

374. Բաց հունով կառուցվածքների (առուներ, հեղեղատարներ) ափերի բարձրությունը և ամրացումը նախատեսելով ջրի առավելագույն հնարավոր մակարդակը (1 % ապահովվածությամբ):

375. Խոշոր, մեծ քաղաքների համար, քաղաքային տարածքները հեղեղումներից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել հեղեղատարների ցանց՝ հեղեղակարգավորիչ սարքավորումներով: Վերակառուցման պայմաններում, փակ համակարգի առկայության դեպքում, անհրաժեշտ է պարբերաբար մաքրման ենթարկել հեղեղակարգավորիչ սարքավորումները՝ խոշոր չափերի ջրաբերուկների քարերի հեռացման նպատակով: Հեղեղատար համակարգերի համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ: Շինարարական աշխատանքներ սկսելուց առաջ, պետք է նախատեսել գրունտային ջրերի մակարդակի իջեցում փակ ցամաքուրդային համակարգի միջոցով: Քաղաքների այն տարածքներում, որոնք կառուցապատված են առանձնատներով, գյուղական վայրերում, մարզադաշտերի, պուրակների և այլ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներում թույլատրվում է գրունտային ջրերի իջեցում բաց համակարգի միջոցով:

376. Նշված միջոցառումները պետք է ապահովեն գրունտային ջրերի մակարդակի իջեցում կապիտալ շինարարության տարածքում 2 մ-ից ոչ պակաս (մակերևութային նախագծային նիշից հաշված), իսկ մարզադաշտերի, այգիների, պուրակների և այլ կանաչապատ տարածքներում՝ 1 մ-ից ոչ պակաս:

377. Տորֆի տեղակայմամբ տեղամասերում, որոնք ենթակա են կառուցապատման, գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետ միաժամանակ պետք է նախատեսել դրանց մակերևութային պարբերական բեռնում հանքային գրունտներով, կամ համապատասխան հիմնավորման դեպքում, թույլատրվում է տորֆագերծում: Հանքային գրունտի շերտի բարձրությունը որոշվում է՝ հաշվի առնելով տորֆի հետագա նստվածքը և տարածքի մակերևութային հոսքի կազմակերպման անհրաժեշտ թեքության ապահովումը:

378. Բնակավայրի տարածքում հանքային գրունտի շերտի նվազագույն բարձրությունը պետք է ընդունել 1 մ, իսկ փողոցների երթևեկելի մասերում այդ չափը պետք է սահմանվի՝ ելնելով տրանսպորտի շարժման անցուդարձից և հաշվի առնելով տրանսպորտային կառուցվածքներին ներկայացվող նորմատիվ պահանջները:

379. Առափնյա տեղամասերում գտնվող բնակավայրերի տարածքները պետք է պաշտպանված լինեն հեղեղների ազդեցությունից, քամու ազդեցությամբ ջրի մակարդակի բարձրացումից, գրունտային ջրերով ջրածածկումից՝ լիցքով կամ թմբապատումով: Տարածքի հնարավոր ողողման եզերքի նիշը պետք է ընդունել 0,5 մ-ով ավելի ջրի ամենաբարձր հաշվարկային հորիզոնից՝ հաշվի առնելով ալիքի կամ քամու ազդեցությամբ ջրի մակարդակի բարձրացումը: Հողաթմբի գագաթի նիշի գերազանցումը

հաշվարկայինից պետք է սահմանել կառուցվածքի կարգից կախված: Որպես ջրերի բարձր մակարդակ ունեցող հաշվարկային հորիզոն պետք է ընդունել գրունտային ջրի այն ամենաբարձր մակարդակը, որի կրկնելիությունը բնակելի և հասարակական շենքերով կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների համար՝ 100 տարին մեկ է, իսկ պուրակների և հարթ տարածքների համար՝ 10 տարին մեկ:

380. Հեղեղավտանգ գոտում գոյություն ունեցող կառուցապատման պաշտպանության համար անհրաժեշտ է նախատեսել անտառի առավելագույն պահպանում, ծառերի և թփերի տնկում, թեք լանջերի դարավանդավորում, հեղեղաբեր գետերի ափերի ամրացում, հեղեղի ձևավորման գոտիներում պատվարների, պատնեշների, հեղեղաուղղորդիչ հողաթմբերի և հունի ջրաբերուկի կոնի հեռացնող ջրանցքների կառուցում:

381. Այն տեղամասերում, որտեղ գործում են հեղեղատների առաջացումով էրոզիոն գործընթացներ պետք է նախատեսել մակերևութային հոսքի կարգավորում, հեղեղատների գոգի ամրացում, լանջերի դարավանդավորում և անտառապատում: Առանձին դեպքերում թույլատրվում է հեղեղատների լրիվ կամ մասնակի վերացում՝ հողալցման միջոցով, նախատեսելով նաև ջրի ու ցամաքուրդային կոլեկտորների տեղադրում:

382. Հեղեղատների վերականգնված տարածքները կարելի է օգտագործել տրանսպորտային կառույցների, ավտոտնակների, պահեստների, կոմունալ օբյեկտների, ինչպես նաև պուրակների տեղադրման համար:

383. Սողանքային երևույթների ազդեցությանը ենթակա տարածքներում կառուցված քաղաքային և գյուղական բնակավայրերում պետք է նախատեսել մակերևութային հոսքի կարգավորում, գրունտային ջրերի մակարդակի իջեցում, սողանքային զանգվածի բնական որմնանեցուկի պահպանում քայքայումից, մեխանիկական և ֆիզիկաքիմիական միջոցներով (լանջերի սանդղավորում, կանաչապատում) շեպերի կայունության բարձրացում:

384. Հակասողանքային միջոցառումները պետք է իրականացնել տարածքի ինժեներաերկրաբանական համալիր ուսումնասիրությունների հիման վրա:

**XXIII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

385. Բնակավայրերի տարածքներում անհրաժեշտ է ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին N 2.1.7.003, N2.1.8-010 սանիտարական կանոններով և նորմերով, ՀՀՇՆ 22-04 շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:

386. Քաղաքային և գյուղական նոր բնակավայրերի կառուցման, գոյություն ունեցող բնակավայրերի զարգացման համար տարածքների ընտրությունը պետք է կատարել սահմանված կարգով հաստատված և Հայաստանի Հանրապետության օրենսդրական և նորմատիվ-իրավական ակտերի հիման վրա մշակված տարածական պլանավորման փաստաթղթերի հիման վրա:

387. Ընդերքօգտագործողը պետք է ապահովի բնության և շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, այդ թվում՝ մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը, արդյունաբերական թափոնների օգտագործման, օգտահանման, չեզոքացման և նվազեցման աշխատանքների, միջոցառումների կատարումը:

388. Բուժիչ և առողջարարական վայրերի, առողջարանների սանիտարական տեղամասի կազմում առանձնացվում են գոտիներ՝ պահպանության տարբեր ռեժիմներով.

- 1) առաջին գոտի, որտեղ արգելվում են տնտեսական գործունեության բոլոր տիպերը, բացի բնական բուժիչ ռեսուրսների ուսումնասիրության հետ կապված աշխատանքներից՝ էկոլոգիապես մաքուր և ռացիոնալ տեխնոլոգիաների պարտադիր կիրառմամբ,
- 2) երկրորդ գոտի, որի տարածքում արգելվում է առողջարանային բուժման և հանգստի ոլորտի հետ կապ չունեցող օբյեկտների և կառուցվածքների, ինչպես նաև շրջակա միջավայրը, բնական բուժիչ ռեսուրսները աղտոտող կամ դրանց աղքատացմանը նպաստող աշխատանքների իրականացումը,
- 3) երրորդ գոտի, որի տարածքում իրականացվում են շրջակա միջավայրը, բուժիչ ռեսուրսները աղտոտող արդյունաբերական և գյուղատնտեսական շենքերի և շինությունների և



կազմակերպությունների տեղադրման սահմանափակումներ:

389. Օբյեկտների տեղադրումը խմելու ջրերի աղբյուրների II և III սանիտարական գոտիները պետք է իրականացնել ՀՀ ջրային օրենսդրությանը, 2-III-Ա2-1 և 2-III-Ա2-2 սանիտարական նորմերին և կանոններին համաձայն:

390. Ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների շենքերի, շինությունների տեղադրումը արգելվում է.

1) արգելավայրերի, արգելոցների, բուսաբանական այգիների, դենդրոլոգիական պարկերի հողերի վրա և ջրապաշտպան գոտիներում,

2) քաղաքների կանաչ գոտիներում, քաղաքային անտառների տարածքներում,

3) ջրամատակարարման համար նախատեսված աղբյուրների սանիտարական առաջին գոտում, ջրամատակարարման կառուցվածքների հարթակների վրա,

4) այն տեղամասերի վրա, որոնց հողաշերտի, գրունտների աղտոտվածության մակարդակը գերազանցում է սահմանված նորմերը՝ անվտանգության և էկոլոգիական հնարավոր հետևանքների առաջացման պահանջներով,

5) հիդրոօդերևութաբանական կայանների պահպանման գոտում,

6) լեռնաարդյունահանող և լեռնավերամշակող օբյեկտների թափոնների շրջանում, սահքերի, սահքավտանգ տեղամասերի, հեղեղների և ձնահյուսերի շրջանում,

7) ինժեներական պաշտպանության կառուցվածքներ չունեցող հնարավոր ջրածածկման գոտիներում (1.5 մ և ավելի խորությամբ),

8) մայրուղային նյութատար խողովակաշարերի պահպանման գոտիներում:

391. Մերձքաղաքային գոտու ծառապատ տարածքներում պետք է նախատեսել անտառայգու և անտառտնտեսական հատվածների տարանջատում, հանգստի վայրերի և պահպանվող տարածքների առանձնացում՝ ապահովելով կանաչապատ տարածքի բնապահպանական և առողջարարական գործառույթները:

392. Անտառագուրկ և սակավանտառ շրջաններում քաղաքային և գյուղական բնակավայրերի շուրջն անհրաժեշտ է նախատեսել քամապաշտպան և ավապաշտպան անտառաշերտեր, որոնց շերտի լայնությունը պետք է ընդունել 500 մ-ից ոչ պակաս՝ խոշորագույն և խոշոր քաղաքների համար, 100 մ՝ մեծ և միջին քաղաքների համար և 50մ՝ փոքր քաղաքների և գյուղական բնակավայրերի համար, ինչպես նաև իրականացնել բլուրների, չոր հեղեղատների կանաչապատում:

393. Քաղաքների, սանիտարական պահպանման տեղամասերի կանաչ գոտու անտառները, որոնք պատկանում են I խմբի անտառներին, պետք է օգտագործվեն ռեկրեացիոն, սանիտարահիգիենիկ և առողջարարական նպատակներով:

394. Բնակավայրերի նախագծման և կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել գործող սանիտարական նորմերով մթնոլորտային օդի որակին ներկայացվող պահանջները, ընդ որում բնակավայրի բնակելի, հասարակական, խառը կառուցապատման գոտիներում չի թույլատրվում սանիտարական նորմերով սահմանված աղտոտվածության սահմանային թույլատրելի խտությունների (ՄԹԽ) գերազանցում, իսկ մթնոլորտային օդի որակին հատուկ պահանջներ ներկայացնող գոտիներում (առողջապահական, մանկական, նախադպրոցական, դպրոցական, ռեկրեացիոն օբյեկտների տարածքներում) պետք է ապահովել 0.8 ՄԹԽ:

395. Բնակելի, հասարակական կառուցապատման գոտիներում վտանգավոր նյութերի սահմանային խտությունների մեծացման դեպքում անհրաժեշտ է նախատեսել տեխնոլոգիական և նախագծային բնույթի միջոցառումներ, ընդգրկելով նաև սանիտարապաշտպանիչ գոտիների սահմանները՝ համաձայն սույն շինարարական նորմերի 111-րդ կետի:

396. Բնակելի, հասարակական և ռեկրեացիոն օբյեկտները պետք է տեղադրել աղտոտման հիմնական աղբյուր հանդիսացող արտադրական և հրդեհավտանգ օբյեկտների նկատմամբ հողմահար կողմից (գերակշռող քամիների ուղղության համար):

397. Մթնոլորտային օդի հատուկ մաքրություն պահանջող կազմակերպությունները չի կարելի տեղադրել մթնոլորտի աղտոտման աղբյուր հանդիսացող հարևան կազմակերպությունների նկատմամբ՝ գերակշռող ուղղության քամիների հողմահար կողմից: Անասնաբուժական կազմակերպությունները, թունաքիմիկատների, զինամթերքների, պարարտանյութերի պահեստները, ինչպես նաև հրդեհավտանգ պահեստները և արտադրությունները, թափոնների օգտահանման արտադրամասերը, կաթսայատները, մաքրման կայանները, գոմաղբի բաց տիպի պահոցները

հարկավոր է տեղադրել բնակելի, հասարակական, ռեկրեացիոն գոտիների, արտադրական գոտու օբյեկտների և կազմակերպությունների նկատմամբ հողմհակառակ կողմից՝ ՄՆ 245 սանիտարական նորմերի դրույթներին համապատասխան:

398. Մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր հանդիսացող արտադրական կազմակերպությունները, որոնք տեխնոլոգիական միջոցառումների վերակառուցումից հետո պահանջում են 500 և ավելի մետր սանիտարական գոտիների սահմանում, չի կարելի տեղադրել մինչև 1 մ/վրկ արագությունը չգերազանցող քամիների գերակայությամբ, երկարատև և հաճախ կրկնվող անհողմությունների, ինվերսիաների, մշուշների առկայությամբ շրջաններում (տարեկան 30-40%, ձմեռային ամիսներին՝ 50-60% օր): Մթնոլորտային օդի աղտոտվածության հաշվարկը պետք է իրականացնել սույն շինարարական նորմերի 12-րդ բաժնի պահանջների համաձայն՝ հաշվի առնելով ավտոմոբիլային տրանսպորտից արտանետվող վնասակար նյութերը:

399. Ջրատարների, ջրամբարների պահպանության միջոցառումները պետք է նախատեսել ՀՀ ջրային օրենսդրությանը և 2-III-Ա2-2 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան՝ պահպանելով աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԽ) տնտեսական-խմելու նպատակներով ջրամատակարարման, բնակչության հանգստի, ձկնաբուծության համար օգտագործվող, այդ թվում բնակավայրերի սահմաններում տեղակայված, ջրային օբյեկտներում:

400. Բնակավայրերի բնակեցման, հասարակական, խառը և ռեկրեացիոն գոտիները հարկավոր է տեղակայել ջրատարերը և ջրավազանները թափվող բոլոր կարգի հեռացվող կեղտաջրերի թողարկման վայրերից վերև, հոսանքն ի վեր: Դրանց տեղադրումը նշված վայրերից ցածր թույլատրվում է 2-III-Ա2-2 սանիտարական կանոնների համաձայն:

401. Բնակավայրերի նախագծման և կառուցապատման ժամանակ ջրային ավազանների համար անհրաժեշտ է նախատեսել ջրապահպան գոտիներ և ավամերձ պահպանիչ շերտեր, որոնց չափերը և ռեժիմները պետք է ընդունել՝ ապահովելով ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները՝ ՀՀ ջրային օրենսգրքի դրույթներին համապատասխան:

402. Ջրամբարների և դրանց ցածր ջրամասերի շահագործումը, օգտագործումը որպես տնտեսական-խմելու և մշակութային-գաղափարային ջրամատակարարման աղբյուրներ, հարկավոր է իրականացնել՝ հաշվի առնելով ջրամբարների նախագծման, շինարարության և շահագործման ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 22-ի N648 որոշման դրույթները:

403. Գոյություն ունեցող, ինչպես նաև նախագծվող հանգստի գոտիներում ջրամբարների և ջրատարների ջրապահպան միջոցառումները պետք է իրականացնել ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 22-ի N648 որոշման պահանջներին համապատասխան:

404. Տնտեսական-խմելու ջրամատակարարման համար նախատեսվող աղբյուրների համար պետք է սահմանել սանիտարական պահպանության տեղամաս՝ II և III գոտիներով, համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի:

405. Ջրային ավազանների առափնյա պաշտպանիչ շերտերում արտադրական կազմակերպությունների տեղաբաշխումը թույլատրվում է միայն տեխնոլոգիական պայմաններով թելադրված անհրաժեշտությամբ՝ ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 22-ի N648 որոշման դրույթներին համապատասխան:

406. Ջրային ավազաններին հարող արտադրական կազմակերպությունների թիվը և չափերը պետք է լինեն նվազագույնը:

407. Ավամերձ տեղամասերում և դրանց հետ անմիջական կապ չունեցող գյուղատնտեսական կազմակերպությունների տեղաբաշխման ժամանակ հարկավոր է նախատեսել չկառուցապատված ավամերձ շերտ՝ 50 մ-ից ոչ պակաս լայնությամբ՝ համաձայն ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 22-ի N648 որոշման դրույթներին:

408. Հանքային պարարտանյութերի և բույսերի պաշտպանության քիմիական միջոցների պահեստները հարկավոր է տեղակայել ձկնատնտեսական ջրավազաններից 24 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

409. Հանքային պարարտանյութերի, բույսերի, անասնապահական և թռչնաբուծական կազմակերպություններին անհրաժեշտ քիմիական միջոցների պահեստների տեղադրման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել միջոցառումներ՝ վերոհիշյալ քիմիական նյութերի, ինչպես նաև գոմաղբային, թռչնաղբային հոսքերի ներթափանցումը ջրավազաններ բացառելու համար:

410. Բնակավայրերի բնակեցման տարածքներում տեղակայված լողի համար նախատեսված

ջրավազաններում (անարտահոս), ամռան ամիսներին հարկավոր է նախատեսել ջրի պարբերաբար թարմացում, փոխում՝ կախված ջրավազանի հայելու մակերեսից (3 հա ջրավազանի հայելու մակերես ունեցող դեկորատիվ ջրավազաններում - 2 անգամ, 3 հա-ից մեծ՝ 1 անգամ, լողի համար նախատեսված ջրավազաններում՝ համապատասխանաբար 4 և 3 անգամ, իսկ 2 հա-ից մեծ մակերեսի դեպքում՝ 2 անգամ) :

411. Բնակավայրերի բնակեցման տարածքներում տեղակայված ջրավազաններում (անարտահոս) ջրի խորությունը գարնանային-ամառային ժամանակահատվածում պետք է լինի 1.5 մ-ից ոչ պակաս, իսկ առափնյա գոտում, ջրային բուսականության պարբերաբար հեռացման պայմանով՝ 1մ-ից ոչ պակաս:

412. Բնահողի պաշտպանության միջոցառումներն անհրաժեշտ է նախատեսել ՀՀ օրենսդրությամբ և N 2.1.7.003-10 սանիտարական նորմերին համապատասխան:

413. Բնակավայրերի տարածքների բնահողի որակին վերաբերող հիգիենիկ պահանջները սահմանվում են առաջին հերթին մեծ ռիսկի գոտիների համար (մանկական և վթարային հիմնարկների, սպորտային, մանկական հրապարակների, հանգստի հրապարակների, ռեկրեացիոն գոտիների, ջրավազանների սանիտարական պահպանության գոտիների, առափնյա գոտիների, սանիտարապաշտպանիչ գոտիների):

414. Մեծ աղտոտվածություն ունեցող բնահողը հարկավոր է տեղափոխել և օգտահանել հատուկ մասնագիտացված պոլիգոններում՝ N 2.1.7.003-10 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

415. Բնահողի ճառագայթային անվտանգության ապահովման նպատակով տարբեր նպատակներով օգտագործվող բոլոր ինժեներական և շինարարական սարքավորումները անհրաժեշտ է ենթարկել վերահսկողության՝ ճառագայթային անվտանգության որոշումով՝ համաձայն ՀՀ գործող իրավական ակտերի պահանջների՝ N 2.1.7.003-10 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

416. Բնահողի որակին ներկայացվող պահանջները պետք է տարբերակել ըստ գործառական նշանակության տարածքների (բնակելի, հասարակական, արտադրական)՝ N 2.1.7.003-10 սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան:

#### **XXIV. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ, ԹՐԹՈՒՄՆԵՐԻՑ, ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՊԱՇՏԻՑ, ՃԱՌԱԳԱՅԹԱՎԱՐՈՒՄԻՑ ԵՎ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

417. Աղմուկի թուլատրելի պայմանները բնակելի, հասարակական շենքերի և դրանց հարող տարածքների համար, արտաքին աղմուկի աղբյուրների բնութագիրը, սպասվող աղմուկի մակարդակի որոշման կարգը պետք է ընդունել ըստ N 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջների:

418. Բնակելի և հասարակական շենքերում թուլատրելի թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի թուլատրելի թրթռումների սանիտարական նորմերին: Վերոհիշյալ պահանջների իրականացման համար անհրաժեշտ է բնակելի, հասարակական շենքերի և թրթռման աղբյուրների միջև նախատեսել անհրաժեշտ հեռավորություն, իսկ թրթռման աղբյուրները մեկուսացնել թրթռումը նվազեցնող նյութերով և կոնստրուկցիաներով:

419. Փոքր խորության վրա նախատեսվող մետրոպոլիտենի գծերի և բնակելի, հասարակական շենքերի միջև պետք է սահմանել թրթռման և աղմուկի հաշվարկային մակարդակ՝ ըստ N 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջների:

420. Ռադիոտեխնիկական օբյեկտների (օդերևութաբանական ռադիոլոկատորներ, հեռուստակենտրոններ, ռադիոկայաններ, ալեհավաքներ, բարձր լարման էլեկտրահաղորդման գծեր, արդյունաբերական գեներատորներ և այլ էլեկտրամագնիսական էներգիա ճառագայթող օբյեկտներ) տեղադրման դեպքում պետք է ղեկավարվել N2.1.8-010 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

421. Ռադիոակտիվ նյութերի արտադրության, վերամշակման, օգտագործման, պահեստավորման, տեղափոխման, վնասազերծման, թաղման ժամանակ ճառագայթահարման անվտանգությունը պետք է ապահովել ըստ 1219-Ն որոշման պահանջների:

422. Ատոմակայանների տեղադրումը և արտաքին ճառագայթումից մարդկանց անհրաժեշտ պաշտպանությունն իրագործվում է ըստ 1219-Ն որոշման պահանջների:

423. Բնակավայրերի նախագծման և կառուցապատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀՇՆII-7.01 շինարարական նորմերով սահմանված կլիմայական հարաչափերը և մշակել

միջոցառումներ՝ բնակավայրի մեզո և միկրոկլիմայական պայմանների բարելավման ուղղությամբ (պաշտպանություն քամուց, օդափոխման ապահովում, կանաչապատման և ջրարբիացման եղանակով ջերմաստիճանային խոնավային ռեժիմների բարելավում, արեգակնային ճառագայթման արդյունավետ օգտագործում և այլն):

424. Բնակելի և հասարակական շենքերի տեղադրումը և կողմնորոշումը պետք է ապահովի շենքերի և տարածքների ինսոլյացիայի տևողությունը՝ համաձայն բնակելի և հասարակական շենքերի, բնակելի կառուցապատման տարածքների անընդմեջ ինսոլյացիայի տևողության ապահովման շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ II-8.03 և համաձայն շինարարական կլիմայաբանության ՀՀՇՆ II-7.01 շինարարական նորմերով սահմանված ՀՀ տարածքի կլիմայական շրջանացման.

- 1) ցուրտ գոտու համար՝ օրական 2.5 Ժ-ից ոչ պակաս, ապրիլի 22-ից մինչև օգոստոսի 22-ը,
- 2) չափավոր գոտու համար՝ օրական 2 Ժ-ից ոչ պակաս, մարտի 22-ից մինչև սեպտեմբերի 22-ը,
- 3) տաք գոտու համար՝ օրական 1.5 Ժ-ից ոչ պակաս, փետրվարի 22-ից մինչև հոկտեմբերի 22-ը:

425. Անընդմեջ ինսոլյացիայի տևողությունը նորմավորվում է տարբերակված՝ բնակելի և հասարակական շենքերի համար, կապված շենքի գործառնական նշանակության, բնակավայրի տարբեր գոտիների, բնակարանների տիպերի, կլիմայական շրջանացման հետ: Կլիմայական շրջանացումը հարկավոր է ընդունել համաձայն ՀՀՇՆ II-7.01 շինարարական նորմերի:

426. Առանձին դեպքերում կառուցապատման պայմաններում թույլատրվում է բնակելի շենքերում ինսոլյացիայի միանգամյա ընդհատում՝ յուրաքանչյուր գոտու համար ինսոլյացիայի գումարային տևողությունը մեծացնելով օրվա ընթացքում 0.5 Ժ-ով:

427. Ամառանոցային կառուցապատման բնակելի շենքերի համար, որտեղ ինսոլացվում են բնակարանի բոլոր սենյակները, ինչպես նաև բարդ քաղաքաշինական պայմաններում (պատմականորեն արժեքավոր քաղաքային միջավայր, թանկարժեք ինժեներական նախապատրաստման միջոցառումների կիրառում) թույլատրվում է յուրաքանչյուր գոտու համար ինսոլյացիայի տևողությունը կրճատել 0.5 Ժ-ով:

428. Տաք գոտիների համար հարկավոր է նախատեսել ինսոլյացիայի ջերմային ազդեցությունը սահմանափակող միջոցառումներ՝ տարվա տաք եղանակների ժամանակ (մանկական խաղահրապարակների, սպորտային կառուցվածքների, բնակչության հանգստի վայրերի, արդյունավետ կանաչապատումով, հատուկ արևապաշտպան կառուցվածքների տեղադրումով):

**XXV. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

429. Բնակավայրերում պահպանված պատմական կառուցապատման գոտիներն ու դրանցում առկա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները պետք է պահպանվեն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրերի պահպանության ու օգտագործման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պահանջները: Պատմության և մշակույթի հուշարձանի տարածքը ենթակա է պահպանման իր իսկ հուշարձանի հետ, որպես մեկ միասնություն:

430. Քաղաքաշինական գործունեությունը պատմամշակութային հուշարձանի պահպանման ու կառուցապատման կարգավորման գոտիներում իրականացվում է յուրաքանչյուր գոտու համար սահմանված քաղաքաշինական սահմանափակումների պահանջների պահպանմամբ և չպետք է հանգեցնի պահպանման ենթակա օբյեկտի տեսողական (վիզուալ) ընկալման խաթարմանը:

431. Հուշարձանների պահպանման ու կառուցապատման գոտիներում քաղաքաշինական գործունեության սահմանափակումներն արտահայտող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթում պետք է արտահայտված լինեն.

1) պատմամշակութային հուշարձանի պահպանման ու կառուցապատման կարգավորման գոտիների սահմանները,

2) պատմական ժամանակաշրջանների կառուցապատման ձևակերպերը, դրանց բնորոշ նորմատիվ և գեղագիտական չափորոշիչների պահպանման պայմանները (կառուցապատման հարկայնություն խտություն, ոճայնություն, ինքնատիպ շինանյութ, գունային ներկապնակ, միջավայրին բնորոշ այլ առանձնահատկություններ),

3) տարածքում պատմամշակութային լրացուցիչ հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունն ու պայմանները,

4) կառուցապատման ծավալատարածական կերպարի ու դրան հարող բնապատկերի ավանդական տեսաընկալումն ապահովող պահանջներն ու միջամտության սահմանափակումները:

432. Պատմամշակութային արգելոցներում քաղաքաշինական գործունեության կարգավարումը չպետք է հակասի այդ արգելոցների համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պայմանակարգերին (ռեժիմներին):

433. Պատմական կառուցապատման գոտիներից պետք է դուրս բերվեն դրանում առկա արտադրական այն կազմակերպությունները, որոնք բացասական ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա:

434. Պատմական կառուցապատման գոտիները պետք է բեռնաթափվեն տրանսպորտային երթևեկությունից, հատկապես՝ բեռնափոխադրումներից ու տարանցիկ հոսքերից:

435. Հեռավորությունը պատմամշակութային հուշարձանների և տրանսպորտային կամ ինժեներական այլ ենթակառուցվածքների միջև հարկավոր է ընդունել սույն շինարարական նորմերի 43-րդ աղյուսակում տրված ցուցանիշներից ոչ պակաս:

Աղյուսակ 43

Հ/Հ	Ենթակառուցվածքների տեսակները	Հեռավորությունը, մ
1.	Մինչև արագընթաց մայրուղիները և ոչ խորը տեղադրված մետրոպոլիտենի գծերը. 1) բարդ ռելիեֆային պայմաններում, 2) հարթ ռելիեֆային պայմաններում	100 50
2.	Մինչև ջրամատակարարման, կոյուղու և ջերմամատակարարման ցանցերը	15
3.	Մինչև այլ ստորգետնյա ինժեներական հաղորդակցուղիները	5

436. Վերակառուցման պայմաններում վերոհիշյալ տարածությունները մինչև ինժեներական հաղորդակցուղիները թույլատրվում է կրճատել, սակայն ընդունել.

- 1) 5 մետրից ոչ պակաս՝ մինչև ջրատար խողովակաշարերը,
- 2) 2 մետրից ոչ պակաս՝ մինչև ոչ ջրատար խողովակաշարերը:

437. Արգելվում է ինժեներական ցանցերի վերգետնյա մոնտաժումը բնակավայրի պատմամշակութային կառուցապատման և/կամ առանձնացված հուշարձանի պահպանման գոտում:

438. Ստորգետնյա ինժեներական հաղորդակցուղիների շինարարական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է կիրառել պաշտպանիչ լրացուցիչ տեխնիկական միջոցառումներ, որոնք կերաշխավորեն հուշարձանի ֆիզիկական անվտանգությունը:

**XXVI. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

439. Բնակելի, հասարակական և արդյունաբերական կազմակերպությունների օժանդակ շենքերի միջև հակահրդեհային հեռավորությունները հարկավոր է ընդունել ըստ սույն շինարարական նորմերի 44-րդ աղյուսակի տվյալների, իսկ արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների արտադրական շենքերի միջև՝ ՀՀՇՆ 21.01, ՀՀՇՆ III-9.02.02, ՄՆԻՊ II-106, ՄՆԻՊ 2.11.06, ՄՆԻՊ II շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

440. Ամենափոքր հեռավորությունը I և II աստիճանի հրակայունությամբ բնակելի, հասարակական և օժանդակ կառույցներից մինչև I և II աստիճանի հրակայունությամբ արտադրական շենքերը և ավտոտնակները հարկավոր է ընդունել 9 մ-ից ոչ պակաս, իսկ մինչև արտադրական շենքերը, որոնց ծածկերում օգտագործված են պոլիմերներից կամ այրվող նյութերից տաքացուցիչներ՝ 15 մ:

Աղյուսակ 44

Հ/Հ	Շենքի հրակայունության աստիճանը	Հեռավորությունը, մ, ըստ շենքերի հրակայունության աստիճանի		
		I, II	III	IV, V
1.	I, II	6	8	10
2.	III	8	8	10

3.	IV, V	10	10	15
----	-------	----	----	----

441. Շենքերի դասակարգումն ըստ հրակայունության աստիճանի հարկավոր է ընդունել ՀՀՇՆ 21-01 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

442. Հեռավորությունը շենքերի և շինությունների միջև համարվում է՝ արտաքին պատերի և այլ կոնստրուկցիաների միջև առույս հեռավորությունը: Շենքերից և շինություններից 1 մ-ից ավելի արտացցված ոչ հրակայուն նյութերից կառուցված մասերի առկայության դեպքում, ընդունվում է այդ կոնստրուկցիաների միջև եղած հեռավորությունը:

443. Առանց պատուհանների բացվածքների շենքերի պատերի միջև հեռավորությունը թույլատրվում է փոքրացնել 20 %-ով, բացառությամբ IV և V աստիճանի հրակայունությամբ շենքերի:

444. I և II աստիճանի հրակայունությամբ շենքերի միջև հեռավորությունը թույլատրվում է նախատեսել 6 մ-ից 20 %-ով պակաս այն պայմանով, եթե ամենաբարձր շենքի պատը, որը տեղադրված է մյուս շենքի դիմաց, համարվում է հրդեհակայուն:

445. Հեռավորությունները մեկ, երկու բնակարանով շենքերից և տնամերձ հողամասում տեղադրված տնտեսական շինություններից (ցախատուն, ավտոտնակ, բաղնիք) մինչև հարևան հողամասում տեղակայված բնակելի շենքերը և տնտեսական շինություններն ընդունվում են ըստ սույն շինարարական նորմերի 44-րդ աղյուսակի, հաշվի առնելով նաև սույն շինարարական նորմերի 442-րդ կետի պահանջները: Հեռավորությունները բնակելի շենքի և տնտեսական շինությունների միջև, ինչպես նաև մեկ հողակտորի սահմաններում տնտեսական շինությունների միջև (անկախ դրանց գումարային մակերեսից) չեն նորմավորվում:

446. Հեռավորությունները բնակելի շենքերի, ինչպես նաև շենքերի և տնտեսական շինությունների (ցախատների, ավտոտնակների, բաղնիքների) միջև չեն նորմավորվում՝ կառուցապատման գումարային մակերեսի (դրանց միջև եղած չկառուցապատված մակերեսը ներառյալ) և միևնույն մակերեսով առանց հրդեհակայուն պատերի նույն աստիճանի հրակայունությամբ մեկ շենքի (հարկի) առավելագույն թույլատրվող կառուցապատման մակերեսին հավասարության դեպքում, ՀՀՇՆ 21-01 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

447. Տնտեսական շինությունների (ցախատների, ավտոտնակների, բաղնիքների) միջև ընկած հեռավորությունները, որոնք տեղադրված են տնամերձ հողամասից դուրս, չեն նորմավորվում այն պայմանով, եթե կցակառույց տնտեսական շինությունների մակերեսը չի գերազանցում 400 մ<sup>2</sup>-ին: Հեռավորությունները կցակառույց տնտեսական շինությունների խմբերի միջև ընդունվում են ըստ սույն շինարարական նորմերի 44-րդ աղյուսակի:

448. Անցումներ և հետիոտն ճանապարհներ նախագծելիս անհրաժեշտ է ապահովել հրշեջ մեքենաների մոտեցման հնարավորությունը դեպի բնակելի և հասարակական շենքերը, այդ թվում կցակառուցված-ներկառուցված սենքերը և ավտոաստիճաններից կամ ավտոամբարձիչներից հրշեջների մոտեցման հնարավորությունը ցանկացած բնակարանին կամ սենքին:

449. Հեռավորությունը անցումի եզրից մինչև շենքի պատը, մինչև 9 հարկանի շենքերի համար հարկավոր է ընդունել 5-8 մ, իսկ 9 և ավելի հարկայնության դեպքում՝ 8-10 մ: Այդ գոտում չեն թույլատրվում պարիսպների տեղադրում, հոսանքի հաղորդման օդային գծերի անցկացում և ծառերի շարքային տնկումների իրականացում:

450. Շենքերի մուտքեր չունեցող ճակատների երկարությամբ թույլատրվում է նախատեսել հրշեջ մեքենաների մոտեցման համար 6 մ լայնությամբ անցումներ՝ հաշվի առնելով դրանց թույլատրելի բեռնվածությունը գրունտի կամ ծածկի վրա:

451. Բնակելի և հասարակական շենքերի հեռավորությունը նավթ և նավթամթերքներ պահելու համար I խմբի պահեստներից հարկավոր է ընդունել համաձայն ՄՆԻՊ II-106 շինարարական նորմերի պահանջների: Իսկ մինչև բնակելի և հասարակական շենքեր սպասարկող կաթսայատների, դիզելային էլեկտրակայանների և այլ էներգաօբյեկտների կազմում նախատեսված II խմբի պահեստները՝ սույն շինարարական նորմերի 45-րդ աղյուսակում տրված ցուցանիշից ոչ պակաս:

Աղյուսակ 45

Հ/Հ	Պահեստների տարողունակությունը, խոր.մ	Բնակելի և հասարակական շենքերի հրակայունության աստիճանը		
		I-ին, II-րդ	III-րդ	IV-րդ
1.	800-ից մինչև 10000	40	45	50
2.	100-ից մինչև 800	30	35	40

3.	մինչև 100	20	25	30
----	-----------	----	----	----

452. Մանկական նախադպրոցական հիմնարկներից, հանրակրթական դպրոցներից, դպրոց-ինտերնատներից, առողջապահական և հանգստի հիմնարկներից, դիտահանդիսային հիմնարկներից և սպորտային կառույցներից մինչև 100 մ<sup>3</sup> տարողությամբ պահեստների հեռավորությունը հարկավոր է մեծացնել երկու անգամ, իսկ 100 մ<sup>3</sup>-ից ավելի տարողությամբ պահեստները՝ ընդունել ՍՆԻՊ II-106 շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

453. Հրշեջ մեքենաները ջրով լցավորելու համար գետերի և ջրավազանների մոտ հարկավոր է նախատեսել կոշտ ծածկույթով մոտեցման ճանապարհներ:

454. Քաղաքային բնակավայրերի կառուցապատման սահմաններից մինչև անտառային զանգվածները հեռավորությունները պետք է լինեն 50 մ-ից ոչ պակաս, իսկ մինչև գյուղական բնակավայրերի և ամառանոցային տարածքների կառուցապատումը՝ 15 մ-ից ոչ պակաս:

**Հավելված 1**

**ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ**

Աղյուսակ 1

Հ/Հ	Շենքի տիպը	Բնակչության խտությունը մարդ/հա, ընտանիքի միջին կազմով, մարդ								
		2,5	3,0	3,5	4,0	4,5	5,0	5,5	6,0	
1.	Առանձնատնային տնամերձ հողամասով, մ <sup>2</sup>									
	1) 2500	8	10	12	14	16	18	20	22	
	2) 2000	10	12	14	16	18	20	22	24	
	3) 1500	13	15	17	20	22	25	27	30	
	4) 1200	17	21	23	25	28	32	33	37	
	5) 1000	20	24	28	30	32	35	38	44	
	6) 800	25	30	33	35	38	42	45	50	
	7) 600	30	33	40	41	44	48	50	60	
8) 400	35	40	44	45	50	54	56	65		
2.	Սեկցիոն (հատվածքային) հարկերի թվով									
	1) 2	-	130	-	-	-	-	-	-	
	2) 3	-	150	-	-	-	-	-	-	
	3) 4	-	170	-	-	-	-	-	-	



**Հավելված 2**

**ՊԱՀԵՍՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐ ԵՎ ՉԱՓԵՐ**

Ընդհանուր ապրանքային պահեստների հողամասերի մակերեսներ և չափեր

Աղյուսակ 1

1000 մարդու հաշվով

Հ/Հ	Ընդհանուր ապրանքային պահեստներ	Պահեստների մակերեսը, մ <sup>2</sup>		Հողամասերի չափը, մ <sup>2</sup>	
		Քաղաքների համար	Գյուղական բնակավայրերի համար	Քաղաքների համար	Գյուղական բնակավայրերի համար
1.	Պարենային ապրանքների	77	19	310* / 210	60
2.	Ոչ պարենային ապրանքների	217	193	740 / 490	580
3.	Մասնագիտացված խմբերի կազմում ընդհանուր ապրանքային պահեստների տեղադրման դեպքում հողամասերի չափերը անհրաժեշտ է կրճատել 30%-ով:				
4.	Վաղաժամկետ ներբերվող ապրանքների գոտիներում պահեստների հողամասերի չափերը անհրաժեշտ է մեծացնել 40%-ով:				
5.	Ընդհանուր ապրանքային պահեստների ապրանքների պաշարների մակարդակը, ըստ մանրածախ վաճառքի օրերի քանակի (ապրանքաշրջանառության), որոշվում է նախագծման առաջադրանքով:				
6.	Ապրանքային պաշարների գլխավորապես գյուղական բնակավայրերում պահպանման դեպքում դրանց պահեստների մակերեսները և հողամասերի չափերը կարող են մեծացվել՝ համապատասխանաբար փոքրացնելով նույն ցուցանիշները քաղաքում:				
7.	* Համարիչում բերված են մեկ հարկանի պահեստների նորմեր, հայտարարում՝ բազմահարկերի (հարկի միջին բարձրությունը՝ 6 մ):				

Աղյուսակ 2

Մասնագիտացված պահեստների հողամասերի չափեր և տարողություններ 1000 մարդու հաշվով

Հ/Հ	Մասնագիտացված պահեստներ	Պահեստների տարողությունը, տ		Հողամասերի չափերը մ <sup>2</sup>	
		Քաղաքների համար	Գյուղական բնակավայրերի համար	Քաղաքների համար	Գյուղական բնակավայրերի համար
1.	Բաշխիչ սառնարաններ (մսի և մսամթերքների, ձկան և ձկնամթերքների, կարագի, կենդանական ճարպի, կաթնամթերքների և ձվի պահպանման համար)	27	10	190 * / 70	25
2.	Մրգի պահեստարան	17			
3.	Բանջարեղենի պահեստարան	54	90	1300 / 610	380
4.	Կարտոֆիլի պահեստարան	57			
5.	Կարտոֆիլի, բանջարեղենի և մրգի աճեցման և մթերման շրջաններում պահեստների տարողությունը և համապատասխանաբար հողամասերի մակերեսի չափերը ընդունվում են 0,6 գործակցով:				
6.	Կարտոֆիլի և մրգերի պահեստների տարողությունը և պահեստների համար հողամասերի չափերը քաղաքներում հարկավոր է փոքրացնել ի հաշիվ արտաքաղաքային պահպանման կազմակերպության, որի չափը որոշում է համապատասխան նախագծման առաջադրանքի:				
7.	* Համարիչում բերված են մեկ հարկանի պահեստների նորմեր, հայտարարում՝ բազմահարկերի:				

Աղյուսակ 3

Շինանյութերի և կոշտ վառելիքի պահեստների հողամասերի չափեր 1000 մարդու հաշվով

Հ/Հ	Պահեստներ	Հողամասերի չափերը, մ <sup>2</sup>
1.	Շինանյութերի պահեստներ (պահանջարկային)	300
2.	Առավել օգտագործվող կոշտ վառելիքի պահեստներ՝ 1) ածուխ 2) փայտ	300 300
3.	Կոշտ վառելիքի պահեստների հողամասերի չափերը IV կլիմայական շրջանի համար հարկավոր է ընդունել 0,6 գործակցով:	

**Հավելված 3**  
**ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՆՈՐՄԵՐ**

Աղյուսակ 1

Հ/Հ	Ռեկրեացիոն տարածքներ, հանգստի օբյեկտներ, շենքեր և կառույցներ	Հաշվարկային միավորը	Հաշվարկային միավորում կայանման տեղերի քանակը
1.	<b>Ռեկրեացիոն տարածքներ և հանգստի գոտիներ</b>		
	1) Հանգստի գոտում լողափեր և զբոսայգիներ	100 միաժամանակյա հաճախորդ	15-20
	2) Անտառայգիներ և արգելոցներ	-"	7-10
	3) Կարճատև հանգստի հանգրվաններ (սպորտային, դահուկային, ձկնորսական, որսորդական և այլն)	-"	10-15
	4) Փոքր նավատորմի ափամերձ հանգրվաններ	-"	10-15
	5) Հանգստյան տներ, առողջարաններ, առողջարաններ-պրոֆիլակտորիումներ, կազմակերպությունների հանգստի և զբոսաշրջության հանգրվաններ	100 հանգստացող և սպասարկող անձնակազմ	3-5
	6) Հյուրանոցներ (զբոսաշրջային և առողջարանային)	-"	5-7
	7) Մոթելներ և կեմպինգներ	-"	հաշվարկային տեղերով
	8) Հանգստի գոտում հասարակական սննդի կազմակերպություններ, առևտրի և կոմունալ-կենցաղային սպասարկման օբյեկտներ	100 տեղ դահլիճներում կամ միաժամանակյա հաճախորդներ և սպասարկողներ	7-10
	9) Ամառանոցային ընկերություններ	10 հողակտոր	7-10
2.	<b>Շենքեր և շինություններ</b>		
	1) Կառավարչական, վարկաֆինանսական և իրավաբանական հիմնարկներ՝ ա. հանրապետական նշանակության, բ. տեղական նշանակության	10 աշխատակից -"	10-20 5-7
	2) Գիտական, նախագծային կազմակերպություններ, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	10 աշխատակից	10-15
	3) Արդյունաբերական կազմակերպություններ	100 աշխատակից երկու հերթափոխով	7-10
	4) Հիվանդանոցներ	100 մահճակալ	7-10
	5) Պոլիկլինիկաներ	100 այցելու	2-3
	6) Սպորտային շենքեր և տրիբունաներով շինություններ 500-ից ավելի հանդիսատեսի համար	100 տեղ	3-5
	7) Թատրոններ, կրկեսներ, կինոթատրոններ, համերգային դահլիճներ, թանգարաններ, ցուցահանդեսներ	100 տեղ կամ միաժամանակյա 100 այցելու	10-15
	8) Հանգստի և մշակույթի զբոսայգիներ	100 միաժամանակյա այցելու	5-7

1-ին աղյուսակի շարունակությունը

	9) Առևտրի կենտրոններ, հանրախանութներ, 200 մ <sup>2</sup> ավելի մակերեսով առևտրական դահլիճներով խանութներ	100 մ <sup>2</sup> առևտրական մակերես	5-7
	10) Շուկաներ	50 առևտրական տեղ	20-25
	11) Ռեստորաններ և համաքաղաքային նշանակության սրճարաններ	100 տեղ	10-15
	12) Բարձրակարգ հյուրանոցներ	-"	10-15
	13) Այլ հյուրանոցներ	100 տեղ	6-8
	14) Բոլոր տեսակի տրանսպորտի կայարաններ	‘Պիկ’ ժամերին ժամանած հեռավոր և տեղական հաղորդակցության 100 ուղևոր	10-15
	15) Արագընթաց մարդատար տրանսպորտի վերջնական (ծայրամասային) և գոտիական կայարաններ	100 ուղևոր ‘պիկ’ ժամին	5-10
	<p>16) Հետիոտն անցման հեռավորությունը մարդատար ավտոմոբիլների ժամանակավոր պահպանման կայաններից մինչև զանգվածային հանգստի գոտիների օբյեկտներ չպետք է գերազանցի 1000 մետրը:</p> <p>17) Խոշորագույն քաղաքներում, քաղաք-կենտրոններում և զբոսաշրջության քաղաք-կենտրոններում զբոսաշրջիկներին պատկանող մարդատար ավտոմոբիլների և ավտոբուսների համար հարկավոր է նախատեսել կայաններ, որոնց քանակը որոշվում է հաշվարկով: Նշված կայանները պետք է տեղադրված լինեն՝ հաշվի առնելով զբոսաշրջիկների այցելության օբյեկտների հարմար մոտեցումների ապահովումը, բայց 500 մ-ից ոչ ավելի հեռավորությամբ, չխախտելով պատմական միջավայրի ամբողջական բնութագիրը:</p> <p>18) Կայանման տեղերի քանակը պետք է որոշել՝ ելնելով հաշվարկային ժամկետում ավտոմոբիլացման մակարդակից:</p>		

**Հավելված 4**

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՈՐՄԵՐ**

Աղյուսակ 1

Հ/Հ	Օբյեկտներ	Հաշվարկային միավորը	Օբյեկտի տարողությունը	Օբյեկտի հողակտորի մակերեսը, հա
1.	Բազմահարկ կայանատեղեր մարդատար տաքսիների համար և մարդատար ավտոմոբիլների վարձույթի բազաներ	տաքսի, վարձույթի ավտոմոբիլ	30	0.2
			60	0.3
			100	0.5
			300	1.2
			500	1.6
2.	Բեռնատար ավտոմոբիլների կայանատեղեր	ավտոմոբիլ	30	0.9
			60	1.2
			100	2.0
			300	4.5
3.	Տրամվայի հավաքակայան՝ 1) առանց վերանորոգման արհեստանոցների 2) վերանորոգման արհեստանոցներով	վագոն	35	2.1
			45	3.0
			35	2.4
			45	3.3
4.	Տրոլեյբուսի հավաքակայան՝ 1) առանց վերանորոգման արհեստանոցների 2) վերանորոգման արհեստանոցներով	տրոլեյբուս	30	1.35
			45	1.8
			30	1.5
			45	2.1
5.	Ավտոբուսի կայանատեղեր	ավտոբուս	30	0.9
			60	1.5
			100	2.3
6.	Վերակառուցման պայմաններում համապատասխան հիմնավորման առկայության դեպքում հողամասերի չափերը թույլատրվում է փոքրացնել, բայց 20 %-ից ոչ ավելի չափով:			

**Հավելված 5**

**ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ**

Աղյուսակ 1

Ստորգետնյա ինժեներական ցանցերից մինչև մոտակա շենքերն ու շինությունները հորիզոնական (առլույս) հեռավորությունները

Հ/Հ	Ինժեներական ցանցեր	Հորիզոնական հեռավորությունները, մ, (առլույս) ստորգետնյա ցանցերից մինչև								
		Շենքերի և շինությունների հիմքերը	Կազմակերպությունների ցանկապատերի հիմքերը, էստակադների (ուղեանցների) հպումային ցանցի, կապի և երկաթգծի հենարանները	Եզրային գծի առանցքը		Փողոցի, ճանապարհի եզրային քարը (երթևեկելի մասի եզրը)	Ճանապարհի լիրքի հատակը կամ առվակի եզրը	Էլեկտրահաղորդման օդային գծերի հենարանների հիմքերը (լարումով)		
				1520 մմ անվամեջով երկաթգիծը, բայց ոչ պակաս խրամատի խորքից մինչև լիրաթմբի հատակը և հանվածքի եզրերը	750 մմ անվամեջով երկաթգիծը և տրամվայի գիծը			մինչև 1 կՎ արտաքին լուսավորման, տրամվայի և տրոլեյբուսի գծերը	1-ից մինչև 35 կՎ	35-ից մինչև 110 կՎ և բարձր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Ջրնուղ և ճնշումային կոյուղի	5	3	4	2,8	2	1	1	2	3
2.	Ինքնահոս կոյուղի (կենցաղային և անձրևային)	3	1,5	4	2,8	1,5	1	1	2	3
3.	Ցամաքուրդ	3	1,5	4	2,8	1,5	1	1	2	3
4.	Ուղեկցող ցամաքուրդ	0,4	0,4	0,4	0,4	0,4	-	-	-	-

1-ին աղյուսակի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
5.	Գազամուղեր ՄՊա ճնշմամբ (կգու/սմ <sup>2</sup> ),  1) ցածր՝ մինչև 0,005 (0,5)	2	1	3,8	2,8	1,5	1	1	5	10
	2) միջին՝ 0,005- ից (0,05) մինչև 0,3 (3)	4	1	4,8	2,8	1,5	1	1	5	10
	3) բարձր՝ 0,3- ից (3) մինչև 0,6 (6)	7	1	7,8	3,8	2,5	1	1	5	10
	4) բարձր՝ 0,6- ից (6) մինչև 1,2 (12)	10	1	10,8	3,8	2,5	2	1	5	10
6.	Ջերմային ցանցեր՝ անցուղու կամ թունելի արտաքին պատից	2	1,5	4	2,8	1,5	1	1	2	3
7.	Բոլոր լարվածության ուժային մալուխներ և կապի մալուխներ	0,6	0,5	3,2	2,8	1,5	1	0,5 *	5 *	10 *
8.	Անցուղիներ, հաղորդակցու- թյան թունելներ	2	1,5	4	2,8	1,5	1	1	2	3 *
9.	Ճնշումային աղբամղիչներ	2	1	3,8	2,8	1,5	1	1	3	5

Աղյուսակ 2

Ինժեներական ստորգետնյա հարևան ցանցերի հեռավորությունը միմյանցից՝ դրանց զուգահեռ տեղադրման դեպքում

Հորիզոնական հեռավորությունը, մ, (առլույս) մինչև

Հ/Հ	Ինժեներական ցանցեր	ջրմուղ	կենցաղային կոյուղի	դրենաժև անձրևային	գազամուղ՝ ճնշումով ՄՊա (կգու/ք.սմ)				Ուժային մալուխ բոլոր լարվածությունների	Կապի մալուխ	Ջերմային ցանցեր		անցուղիներ, թունելներ	արտաքին ճնշումային աղբամուղից
					ցածր	միջին	բարձր				թունել անցուղու արտաքին պատից	խրամատում տեղադրված խողովակի թաղանթից		
							մինչև 0,005 (0,05)	0,005 (0,05) մինչև 0,3(3)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1.	Ջրմուղ	տես 1	տես 2	1,5	1	1	1,5	2	0,5 *	1,5	0,5	1,5	1,5	1
2.	Կենցաղային կոյուղի	տես 2	0,4	0,4	1	1,5	2	5	0,5*	0,5	1	1	1	1
3.	Անձրևային կոյուղի	1,5	0,4	0,4	1	1,5	2	5	0,5 *	0,5	1	1	1	1
4.	Գազամուղ ճնշումով ՄՊա (կգու/ք.սմ)													
	1) ցածր՝ մինչև 0,005 (0,5)	1	1	1	0,5	0,5	0,5	0,5	1	1	2	1	2	1
	2) միջին՝ 0,005 (0,5) մինչև 0,3 (3)	1	1,5	1,5	0,5	0,5	0,5	0,5	1	1	2	1	2	1,5
	3) բարձր՝ 0,3-ից (3) մինչև 0,6 (6)	1,5	2	2	0,5	0,5	0,5	0,5	1	1	2	1,5	2	2
	4) բարձր՝ 0,6-ից (6) մինչև 1,2 (12)	2	5	5	0,5	0,5	0,5	0,5	2	1	4	2	4	2



2-րդ աղյուսակի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
5.	Ուժային մալուխ				1	1	1	2	0,1- 0,5	0,5	2	2	2	1,5
6.	Բոլոր լարվածության ուժային մալուխներ	1,0*	1,0*	1,0*	1	1	1	2	0,1 -0,5*	0,5	2	2	2	1,5
7.	Կապի մալուխ	0,5	0,5	0,5	1	1	1	1	0,5	-	1	1	1	1
8.	Ջերմային ցանցեր՝ թունելի կամ անցուղու արտաքին պատից	1,5	1	1	2	2	2	4	2	1	-	-	2	1
9.	Անցուղիներ, թունելներ	1,5	1	1	2	2	2	4	2	1	2	2	-	1
10.	Արտաքին ճնշումային աղբամուղեր	1	1	1	1	1,5	2	2	1,5	1	1	1	1	-
11.	Մի քանի ջրմուղների զուգահեռ անցկացման դեպքում դրանց միջև հեռավորությունը պետք է ընդունել՝ ելնելով տեխնիկական, ինժեներատեխնիկական պայմաններից և համաձայն ՍՆԻՊ 2.04.02 պահանջների:													
12.	Հեռավորությունը կենցաղային կոյուղուց մինչև տնտեսական-խմելու ջրմուղը պետք է ընդունել. մինչև երկաթբետոնե խողովակները՝ 5 մ, մինչև ջրմուղի պլաստմասե խողովակները՝ 1.5 մ, մինչև 200 մմ տրամագծով թուջե խողովակները՝ 1.5 մ, 200 մմ-ից ավելի՝ 3 մ:													
13.	Կոյուղու ցանցերի և արտադրական ջրմուղի միջև հեռավորությունը, կախված նյութից և խողովակների տրամագծից, ինչպես նաև գրունտի բնութագրից, պետք է լինի 1,5 մ:													
14.	Միևնույն խրամատում համատեղ երկու և ավելի գազամուղների տեղադրման դեպքում հեռավորությունը դրանց միջև պետք է ընդունել՝ մինչև 300 մմ տրամագծով խողովակների դեպքում - 0,4 մ, 300 մմ և ավելի՝ 0,5 մ:													
15.	*-համաձայն ՍՆԻՊ 3.05.06 շինարարական նորմերի պահանջների:													

Հավելված 6

ԷԼԵԿՏՐՈՑՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հ/Հ	Բնակավայրերի բարեկարգման աստիճանը	Էլեկտրաօգտագործումը 1 մարդու համար տարեկան, կվտ/ժ	Էլեկտրական բեռնվածության առավելագույն օգտագործումը, ժ/տարի
1.	Ստացիոնար էլեկտրասալիկներով չկահավորված քաղաքներ՝ 1) առանց օդորակիչների 2) օդորակիչներներով	1700 2000	5200 5700
2.	Ստացիոնար էլեկտրասալիկներով կահավորված քաղաքներ՝ (100 % ընդգրկված) 1) առանց օդորակիչների 2) օդորակիչներներով	2100 2400	5300 5800
3.	Գյուղական բնակավայրեր (առանց օդորակիչներների)՝ 1) չկահավորված հաստատուն էլեկտրասալիկներով 2) հաստատուն էլեկտրասալիկներով կահավորված (100 % ընդգրկված)	950 1350	4100 4400
4.	<p>Էլեկտրաօգտագործման խոշորացված ցուցանիշները բերված են մեծ քաղաքների համար: Դրանք պետք է ընդունել գործակիցների կիրառումով, քաղաքների խմբերի համար՝</p> <p>1)խոշորագույն.....1,2 2)խոշոր.....1,1 3)միջին.....0,9 4)փոքր.....0,8</p> <p>Բերված խոշորացված ցուցանիշները նախատեսում են բնակելի և հասարակական շենքերի, կոմունալ-կենցաղային սպասարկման կազմակերպությունների, արտաքին լուսավորման, քաղաքային էլեկտրատրանսպորտի (առանց մետրոպոլիտենի), ջրամատակարարման, ջրահեռացման և ջերմամատակարարման համակարգերի էլեկտրաօգտագործումը:</p> <p>Բնակելի կառուցապատման մեջ ստացիոնար էլեկտրասալիկների օգտագործման պայմանները, ինչպես նաև բնակչության կողմից կենցաղային օդորակիչներների օգտագործման շրջանները ընդունել ՍՆԻՊ 2.08.01 շինարարական նորմերին համապատասխան:</p>		

**Հավելված 7**

**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՈՐՄԵՐ**

1. Սպասարկման հիմնարկների ու կազմակերպությունների թիվը և դրանց հողամասերի չափերի կողմնորոշիչ հաշվարկների համար թույլատրվում է ընդունել ստորև բերվող համապատասխան ցուցանիշները: Այս հավելվածում չնշված սպասարկման հիմնարկների հողամասերի չափերը, տարողությունը և տեղաբաշխումը անհրաժեշտ է ընդունել ըստ նախագծային առաջադրանքի:

2. Սպասարկման հիմնարկների հաշվարկի նորմերը չեն տարածվում արդյունաբերական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի և աշխատանքի ներդրման այլ վայրերի սպասարկման հիմնարկությունների նախագծման վրա: Նշված հանձնարարականները հանդիսանում են նպատակային՝ հաշվարկային ժամկետում նախնական հաշվարկների համար, և պետք է ճշգրտվեն սահմանված կարգով: Միջբնակավայրային նշանակության սպասարկման հիմնարկների կազմն ու կառուցվածքը և տեսակարար տարողությունը սահմանվում է ըստ նախագծման առաջադրանքի, հաշվի առնելով նախագծվող բնակավայրի դերը տարաբնակեցման համակարգում:

Աղյուսակ 1

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
<b>1.</b>	<b>Կրթական հիմնարկներ</b>			
	1) Մանկական նախադպրոցական հիմնարկներ, տեղ	Որոշվում է կախված բնակավայրի ժողովրդագրական կառուցվածքից, նախադպրոցական հիմնարկություններով երեխաների ապահովվածության մակարդակն ընդունելով 85%-ի սահմաններում, այդ թվում ընդհանուր տիպի - 70%, մասնագիտացված - 3%, կազդուրչական - 12: Նորակառույց բնակավայրերում, ժողովրդագրական տվյալների բացակայության ժամանակ անհրաժեշտ է ընդունել յուրաքանչյուր 1000 մարդու համար մինչև 180 տեղ, ընդ որում բնակելի կառուցապատման տարածքում տեղադրել յուրաքանչյուր 1000 մարդու համար ոչ ավել 100 տեղ հաշվարկից:	Ըստ մուր-մանկապարտեզների տարողության, 1 տեղին մ <sup>2</sup> , մինչև 100 տեղ - 40, 100-ից բարձր 35; մուր-մանկապարտեզների համալիրում 500 տեղից բարձր 30: Հողամասերի չափերը կարող են փոքրացվել, վերակառուցման պայմաններում - 25%, 20%-ից ավելի թեքությամբ ռելիեֆի վրա տեղադրման պայմաններում - 15%, նորակառույց բնակավայրերում - 10% (կանաչապատման մակերեսի կրճատման հաշվին)	Մտուրային տարիքի երեխաների խմբային հարթակի մակերեսը 1 տեղի համար պետք է ընդունել 7,5 մ <sup>2</sup> , նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղահարթակները թույլատրվում է տեղադրել ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկությունների տարածքից դուրս
	2) Նախադպրոցականների համար ծածկած լողավազաններ, օբյեկտ	Ըստ նախագծման առաջադրանքի		
	3) Հանրակրթական դպրոցներ, սովորողներ	Հարկավոր է ընդունել ոչ րիվ միջնակարգ կրթությամբ (I-VIII դասարաններ) երեխաների 100% ընդգրկման հաշվառումով և երեխաների մինչև 75% - միջնակարգ կրթությամբ (IX-X դասարաններ) մեկ հերթով սովորելու ժամանակ: Նորակառույց բնակավայրերում անհրաժեշտ է յուրաքանչյուր 1 հազ. մարդու համար ընդունել 180 տեղից ոչ պակաս:	Հանրակրթական դպրոցների ժամանակ, տարողության սովորողներ <sup>2</sup> 40-ից բարձր մինչև 400 - 50 մ <sup>2</sup> (սովորողին) 400 -"- 500 - 60 -" 500 -"- 600 - 50 -" 600 -"- 800 - 40 -" 800 -"- 1100 - 33 -" 1100 -"- 1500 - 21 -" 1500 -"- 2000 - 17 -" 2000 -"- 16 -"	Դպրոցների հողամասերի չափերը կարող են փոքրացվել՝ 20% - վերակառուցման պայմաններում, մեծացվել՝ 30% - գյուղական բնակավայրերում, եթե ուսումնաարտադրական աշխատանքների կազմակերպման համար այլ տարածքներ չեն նախատեսված: Դպրոցի սպորտային գոտին կարող է միացվել բնակելի շրջանի մարմնակրթական-կազդուրչական համալիրի հետ:
	ա. 40 աշակերտներով (սովորողներով) դասարանների հագեցվածության ժամանակ հողամասի չափերն ընդունվում են՝ հաշվի առնելով սպորտային գոտու և դպրոցի շենքի մակերեսները:			

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	4) Գիշերօթիկ դպրոցներ սովորողներ	Ըստ նախագծման առաջադրանքի	Հանրակրթական գիշերօթիկ դպրոցների տարողության ժամանակ, սովորողներ 200-ից բարձր մինչև 300 – 70 մ <sup>2</sup> (սովորողին) 300 -"- 500 - 65 -"- 500 և ավելի - 45 -"-	Դպրոցի հողամասի վրա գիշերօթիկ շենքի (ննջարանային մասնաշենք) տեղադրման ժամանակ հողամասի մակերեսը անհրաժեշտ է մեծացնել 0,2 հա-ով:
	5) Միջնակարգ մասնագիտական և մասնագիտատեխնիկական ուսումնական հաստատություններ, սովորողներ	Ըստ նախագծման առաջադրանքի, հաշվի առնելով քաղաք-կենտրոնի և դրա ազդեցության գոտու այլ բնակավայրերի բնակչությունը	Մասնագիտա-տեխնիկական ուսումնարանների և միջնակարգ-մասնագիտական ուսումնարանների և միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների տարողության ժամանակ, սովորողներ՝ մինչև 300 – 75մ <sup>2</sup> 1 սովորողին 300 բարձր մինչև 900- 50-65 -"- 900 -"- 1600-30-40 -"-	Հողամասերի չափերը կարող են փոքրացվել վերակառուցման ժամանակ՝ 30% - հումանիտար պրոֆիլի ուսումնական հաստատությունների համար, մեծացվեն՝ 50% - գյուղական բնակավայրերում տեղադրված գյուղատնտեսական պրոֆիլի ուսումնական հաստատությունների համար: Ուսումնական հաստատությունների կոոպերացման և ուսումնական կենտրոնների ստեղծման հողամասերի չափերը հանձնարարվում է փոքրացնել կախված ուսումնական կենտրոնի տարողությունից, սովորողներ՝ 1500 մինչև 2000 - 10%; 2000 մինչև 3000 - 20%; 3000-ից բարձր - 30%: Բնակելի գոտու, ուսումնական և օժանդակ տնտեսությունների, ավտոտրակտորադրոմների չափերը նշված չափերի մեջ չեն մտնում:

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	6) Բարձրագույն ուսումնական հաստատություններ, ուսանողներ	Ըստ նախագծման առաջադրանքի	Բարձրագույն ուսումնական հաստատությունների (ուսումնական գոտի) գոտիները, 1 հազ. ուսանողին հա. համալսարաններ, տեխնիկական ԲՈՒՀ-եր - 4-7, գյուղատնտեսականներ - 3-5, տնտեսագիտական, մանկավարժական, մշակույթի, արվեստի, ճարտարապետության - 2-4, որակավորման բարձրացման ինստիտուտներ, հեռակա ԲՈՒՀ-եր - իրենց պրոֆիլին համապատասխան - 0,5 գործակցով, մասնագիտացված գոտի՝ ըստ նախագծման առաջադրանքի, սպորտային գոտի - 1-2, ուսանողական հանրակացարանների գոտի - 1,5-3, մարմնակրթական ԲՈՒՀ-երը՝ նախագծվում են ըստ նախագծման առաջադրանքի:	Վերակառուցման պայմաններում ԲՈՒՀ-երի հողամասերի չափերը կարող են փոքրացվել 40%-ով: Մեկ հողամասի վրա մի քանի կոոպերացիայով տեղադրման ժամանակ հողամասերի զումարային տարածքը հանձնարարվում է կրճատել 20%-ով:
<b>2.</b>	<b>Առողջապահական, սոցիալական ապահովության հիմնարկներ, սպորտային մարմնամարզական-առողջարար շինություններ</b>			
	1) Գիշերօթիկ տներ	28	Ըստ նախագծման առաջադրանքի	Սոցիալական ապահովության հիմնարկների հաշվարկի նորմերն անհրաժեշտ է ճշտել տարածքի սոցիալ-ժողովրդական առանձնահատկություններից կախված:

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	2) Ծերերի, աշխատանքի վետերանների համար գիշերօթիկ տներ, վճարովի պանսիոնատներ, 1 հազ. մարդուն տեղ (60 տարեկանից):	28	Նույնը	
	3) Մանկական գիշերօթիկ տներ, 1 հազ. մարդուն տեղ (4-ից մինչև 17 տարեկան)	3	Նույնը	
	4) Հոգեոնյարդաբանական գիշերօթիկներ, 1 հազ. մարդուն տեղ (18 տարեկանից)	3	Գիշերօթիկի տարողության ժամանակ, տեղ մինչև 200 - 125 մ <sup>2</sup> 1 տեղին 200-ից բար.մինչև 400-100 -"- 200-ից բար.մինչև 600-80 -"-	
	5) Պատերազմի ու աշխատանքի վետերանների և միայնակ ծերերի համար հատուկ տիպի տներ և բնակարանների խմբեր, 1 հազ. մարդուն տեղ, (60 տարեկանից)	60		

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	6) Թիկնաթոռ-սայլակներով հաշմանդամների և նրանց ընտանիքների համար հատուկ տիպի տներ և բնակարանների խմբեր, 1 հազ. մարդուն տեղ, (ամբողջ բնակչության)	0,5		
	7) Առողջապահական հիմնարկներ՝ ա. մեծահասակների համար օժանդակ շենքերով և շինություններով բոլոր տիպի ստացիոնարներ, մահճակալ	Բուժ-կանխարգելիչ հիմնարկների անհրաժեշտ տարողությունը և կառուցվածքը որոշվում է առողջապահական մարմինների կողմից և նշվում է նախագծման առաջադրանքում:	Ստացիոնարի հզորության ժամանակ, մահճակալ. մինչև 50 - 300 մ <sup>2</sup> 1 մահճ. 50-ից մինչև 100 - 300-200 -" 100 -"- 200 - 200-140 -" 200 -"- 400 - 140-100 -" 400 -"- 800 - 100- 80 -" 800 -"- 1000 - 80- 60 -" 1000 բարձր - 60 -"	Երեխաների համար մեկ մահճակալի նորմն անհրաժեշտ է ընդունել ամբողջ ստացիոնարի համար 1,5 գործակցով: Մեկ հողամասի վրա երկու և ավելի ստացիոնարների տեղադրման ժամանակ դրա ընդհանուր մակերեսը պետք է ընդունել ստացիոնարի գումարային տարողության նորմով: Վերակառուցման ժամանակ և խոշոր և խոշորագույն քաղաքներում հիվանդանոցների հողամասերը թույլատրվում է փոքրացնել 25%-ով: Մերձքաղաքային գոտում տեղադրված հիվանդանոցների հողամասերի չափերն անհրաժեշտ է մեծացնել՝ վարակիչ և ուռուցքաբանականինը - 15%, տուբերկուլյոզայինը և հոգեբուժականինը-25%, մեծահասակների համար վերականգնողական բուժմանը - 20%՝ երեխաների համար - 40%: Ծննդատների հողամասերի մակերեսն անհրաժեշտ է ընդունել ըստ ստացիոնարների նորմի՝ 0,7 գործակցով:



1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	<p>բ. առանց ստացիոնարի պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, դիսպանսերներ, հերթում հաճախում</p> <p>գ. շտապ բուժական օգնության կայաններ (ենթակայաններ), մեքենա</p> <p>դ. շտապ բուժական օգնության շարժական կետեր, ավտոմեքենա</p> <p>ե. բուժական և բուժական-մանկաբարձական կետեր, օբյեկտ</p> <p>զ. դեղատներ՝ I-II խմբի III-V -"- VI-VIII -"-</p>	<p>10 հազ. մարդուն 1 կայան, 15 բուժական մատչելիության գոտու սահմաններում՝ հատուկ տիպի մեքենաներ</p> <p>Գյուղական բնակչության 5 հազ. մարդուն 1 կետ, 30 բուժական մատչելիության գոտու սահմաններում, հատուկ տիպի մեքենա</p> <p>Ըստ նախագծման առաջադրանքի</p>	<p>Հերթում 100 հաճախումին 0,1 հա, բայց 0,3 հա-ից ոչ պակաս</p> <p>1 ավտոմեքենային 0,05 հա, բայց 0,1 հա-ից ոչ պակաս</p> <p>Նույնը</p> <p>0,2 հա</p> <p>0,3 հա կամ ներկառուցված 0,25 -"- 0,2 -"-</p>	<p>Մեկ բուժ-կանխարգելիչ հիմնարկում համատեղված ստացիոնարի և պոլիկլինիկայի (դիսպանսերի) հողամասի չափերը որոշվում են առանձին, ըստ համապատասխան նորմերի, որից հետո գումարվում են:</p>
	<p>8) Կաթնային խոհանոցներ, 1 երեխային 1 օրում բաժինը(մինչև 1 տարեկան)</p>	<p>4</p>	<p>1 Օրում 1 հազար բաժինին 0,015 հա, բայց 0,15 հա-ից ոչ պակաս</p>	
	<p>9) Կաթնային խոհանոցի բաշխման կետեր, 1 երեխային մ<sup>2</sup> ընդհանուր մակերես (մինչև 1 տարեկան)</p>	<p>0,3</p>	<p>ներկառուցված</p>	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	10) Առողջարանա-առողջավայրային և կազդուրչական, հանգստի և զբոսաշրջության հիմնարկներ			Նշված սահմաններում հողամասերի նորմերի կոնկրետ նշանակությունն ընդունվում է ըստ տեղական պայմանների: Հողամասերի չափերը տրված են առանց հաշվի առնելու տնտեսական գոտու մակերեսները:
	11) Առողջարաններ (առանց տուբերկուլյոզայինի), տեղ	Ըստ նախագծման առաջադրանքի	1 տեղին 125-150 մ <sup>2</sup>	
	12) Երեխաներով ծնողների համար առողջարաններ և մանկական առողջարաններ (առանց տուբերկուլյոզայինի), տեղ	Նույնը	"- 145-170 մ <sup>2</sup>	
	13) Առողջարաններ-պրոֆիլակտորիումներ, տեղ	"-	"- 70-100 մ <sup>2</sup>	Քաղաքի սահմաններում տեղադրվող առողջարան-պրոֆիլակտորիումներում թույլատրվում է հողամասի չափերը փոքրացնել, բայց 10%-ից ոչ ավելի:
	14) Առողջարանային-դպրոցական ճամբարներ, տեղ	"-	"- 200 մ <sup>2</sup>	
	15) Հանգստյան տներ (պանսիոնատներ), տեղ	"-	"- 120-130 մ <sup>2</sup>	
	16) Երեխաներով ընտանիքների համար հանգստյան տներ (պանսիոնատներ), տեղ	"-	"- 140-150 մ <sup>2</sup>	
	17) Կազմակերպությունների հանգստի բազաներ, երիտասարդական ճամբարներ, տեղ	"-	"- 140-160 մ <sup>2</sup>	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	18) Առողջավայրային (կուրորտային) հյուրանոցներ, տեղ	-"	-"- 65-75 մ <sup>2</sup>	
	19) Դպրոցական ճամբարներ, տեղ	-"	-"- 150-200 մ <sup>2</sup>	
	20) Բարձր դասարանցիների կազմակերպչական ճամբարներ, տեղ	-"	-"- 175-200 մ <sup>2</sup>	
	21) Դպրոցական հիմնարկների ամառանոցներ, տեղ	-"	-"-120-140 մ <sup>2</sup>	
	22) Զբոսաշրջային հյուրանոցներ, տեղ	Ըստ նախագծման առաջադրանքի	1 տեղին 50-75 մ <sup>2</sup>	
	23) Զբոսաշրջային բազաներ, տեղ	-"	-"- 65-80 մ <sup>2</sup>	
	24) Երեխաներով ընտանիքների համար զբոսաշրջային բազաներ, տեղ	-"	-"- 95-120 մ <sup>2</sup>	
	25) Մոթելներ, տեղ	-"	-"- 75-100 մ <sup>2</sup>	
	26) Քեմփինգներ (վրանային ճամբարներ), տեղ	-"	-"-135-150 մ <sup>2</sup>	
	27) Մանկատներ, տեղ	-"	-"- 35-50 մ <sup>2</sup>	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Ծանոթություն
	28) Մարմնակրթական-սպորտային կառույցներ			Ընդհանուր օգտագործման մարմնակրթական-սպորտային կառույցների ցանցն անհրաժեշտ է, միավորել հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների, հանգստի և մշակույթի հիմնարկների հետ, տարածքի հնարավոր կրճատումով:
	29) Տարածքը	-	1000 մարդու համար 0,7-0,9 հա	Փոքր բնակավայրերի համար դահլիճների և լողավազանների հաշվարկի նորմերը անհրաժեշտ է ընդունել օբյեկտի նվազագույն տարողության հաշվառումից, ըստ տեխնոլոգիական պահանջների:
	30) Միկրոշրջանում մարմնակրթական-կազդուրչական պարամունքների համար՝ 1 հազ. մարդու համար մ <sup>2</sup> . ընդհանուր մակերես	70-80		Մարմնակրթական-կազդուրչական հարթակների համալիրները նախատեսվում են յուրաքանչյուր բնակավայրում: Քաղաքային նշանակության մարմնակրթական-սպորտային կառույցների մատչելիությունը չպետք է գերազանցի 30 րոպե: Բնակելի շրջանում տեղակայված մարմնակրթական-սպորտային կառույցների մասնաբաժինը անհրաժեշտ է ընդունել ընդհանուր նորմից, %-ով. տարածքները - 35, սպորտային դահլիճները - 50, լողավազանները - 45:
	31) Ընդհանուր օգտագործման սպորտային դահլիճներ, 1 հազար մարդու համար մ <sup>2</sup> հատակի մակերես	60-80		
	32) Ընդհանուր օգտագործման բաց և ծածկած լողավազաններ, 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> ջրային մակերես	20-25		

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չհամարված միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
<b>3.</b>	<b>Մշակույթի և արվեստի հիմնարկներ</b>			
	1) Մշակութային հանգստի և սիրողական գործունեության համար՝ 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> հատակի մակերես	50-60		Հանձնարարվում է սովորողների և բնակչության օգտագործման համար մշակութային-զանգվածային, մարմանկրթական կազմակերպական և քաղաքատիրարակցական աշխատանքների կազմակերպման համար ձևավորել միասնական համալիրներ (համապատասխան նորմերի միագումարով) 500 մ-ից ոչ ավելի հետիոտնային մատչելիության սահմաններում: Շրջանային նշանակության պարային դահլիճների, կինոթատրոնների և ակումբների տեսակարար կշիռը հանձնարարվում է ընդունել 40-50%-ի չափով: Խոշորագույն և խոշոր քաղաքների համար ընդունել մշակույթի և արվեստի հիմնարկների տեղերի նվազագույն քանակ: Աստղացուցարանների /պլանետարիումների/, ցուցադրման դահլիճների և թանգարանների տեղադրումը, տարողությունը և հողամասերի չափերը որոշում են ըստ նախագծման առաջադրանքի:
	2) Պարային դահլիճներ, 1 հազ. մարդուն տեղ	6	Ըստ նախագծման առաջադրանքի	
	3) Ակումբներ, 1 հազ. մարդուն հաճախումների տեղ	80	Նույնը	
	4) Կինոթատրոններ, 1 հազ. մարդուն տեղ	25-35	“-	
	5) Թատրոններ, 1 հազ. մարդուն տեղ	5-8	“-	
	6) Համերգային դահլիճներ, 1 հազ. մարդուն տեղ	3,5-5	“-	
	7) Կրկեսներ, 1 հազ. մարդուն տեղ	3,5-5	Ըստ նախագծման առաջադրանքի	
	8) Լսարան, 1 հազ. մարդուն տեղ	2	Նույնը	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	9) Ատրակցիոնների և ավտոմատ խաղերի դահլիճներ, 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> հատակի մակերես	3	-“-	Կրկեսներ, համերգային դահլիճներ, թատրոններ և պլանետարիումներ, արհեստական սառույցով ունիվերսալ սպորտային-դիտահանդիսային
	10) Ունիվերսալ սպորտային-դիտահանդիսային դահլիճներ, այդ թվում արհեստական սառույցով, 1 հազ. մարդուն տեղ	6-9	-“-	դահլիճները պետք է նախատեսել տարաբնակեցման համակարգի առավել մեծ բնակչություն ունեցող քաղաք-կենտրոններում: Կինոթատրոններ պետք է նախատեսել 10 հազար մարդուց ոչ պակաս բնակչությամբ բնակավայրերում:
	11) Քաղաքային գրադարաններ սպասարկման գոտու 1 հազ. մարդուն ըստ քաղաքի բնակչության, հազ. մարդ ա. 50-ից բարձր  բ. 10-ից մինչև 50	4 հազ. պահման միավոր ----- 2 ընթերցատեղ 4-45 -“- ----- 2-3 -“-	-“-      -“-	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	<p>12) Կենտրոնական քաղաքային գրադարանին լրացուցիչ 1 հազ. մարդուն, ըստ քաղաքի բնակչության, հազ. մարդ.                      ա. 500 և ավել</p> <p>բ. 250</p> <p>գ. 100</p> <p>դ. 50 և պակաս</p>	<p>0,1 -“-</p> <p>-----</p> <p>0,1 -“- 0,2 -“-</p> <p>-----</p> <p>0,2 -“- 0,3 -“-</p> <p>-----</p> <p>0,3 -“- 0,5 -“-</p> <p>-----</p> <p>0,3 -“-</p>	<p>-“-</p> <p>-“-</p> <p>-“-</p> <p>-“-</p> <p>-“-</p>	
	<p>13) Գյուղական բնակավայրերի ակումբներ և գրադարաններ                      ա. ակումբներ, 1 հազ. մարդուն հաճախումների տեղ, գյուղական բնակավայրերի կամ դրանց խմբերի համար, հազ. մարդ`                      0,2-ից մինչև 1                      1 -"- 2                      2 -"- 5                      5 -"- 10</p>	<p>500-300                      300-230                      230-190                      190-140</p>		<p>Մեծ բնակավայրերի համար անհրաժեշտ է ընդունել ակումբների և գրադարանների փոքր տարողություն:</p>
	<p>14) Քաղաքային գրադարանների հաշվարկման նորմերը չեն տարածվում գիտական, ունիվերսալ և մասնագիտացված գրադարանների վրա, որոնց տարողությունը որոշվում է ըստ նախագծման առաջադրանքի:</p>			

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	<p>բ. գյուղական զանգ- վաճային գրադարաններ՝ սպասարկման գոտու 1 հազ. մարդուն (30 բուսե մատչելիության հաշվարկով), գյուղական բնակավայրերի կամ դրանց խմբերի համար, հազ. մարդ.</p> <p>1 բարձր մինչև 2</p> <p>2-"-5</p> <p>5 -"-10</p>	<p>6-7,5 հազ. պահման միավոր</p> <p>-----</p> <p>5-6 ընթերցատեղ 5-6    "-</p> <p>-----</p> <p>4-5    "-</p> <p>4,5-5    "-</p> <p>-----</p> <p>3-4    "-</p>		
	<p>15) Տարաբնակեցման տեղական համակարգի կենտրոնական գրադարանին լրացուցիչ, համակարգի 1 հազ. մարդուն</p>	<p>4,5-5    "-</p> <p>-----</p> <p>3-4    "-</p>		



1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը		Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
<b>4.</b>	<b>Առևտրի, հասարակական սննդի և կենցաղային սպասարկման հիմնարկներ</b>				
	1) Խանութներ, 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> առևտրական մակերես Այդ թվում՝  ա. մթերային ապրանքների, օբյեկտ  բ. ոչ մթերային ապրանքներ, օբյեկտ	Քաղաքային բնակավայրեր 280 (100)  100 (70)  180 (30)	Գյուղական բնակավայրեր 300  100  200	Տեղական առևտրական սպասարկվող բնակչության թվով, 1 հազ. մարդ. 4 մինչև 6 օբյեկտին 0,4-0,6 հա 6 -"- 10 -"- 0,6-0,8 հա 10 -"- 15 -"- 0,8-1,1 հա 15 -"- 20 -"- 1,1-1,3 հա Քաղաքների և գյուղական բնակավայրերի առևտրական կենտրոններ, սպասարկվող բնակչության թվով, 1 հազ. մարդ. մինչև 1 - 0,1-0,2 հա 1 -ից մինչև 3 - 0,2-0,4 հա 3 -"- 4 - 0,4-0,6 հա 5 -"- 6 - 0,6-1,0 հա 7 -"- 10 - 1,0-1,2 հա Առևտրի կազմակերպություն, մ <sup>2</sup> առևտրական մակերես. մինչև 250 - 0,08 հա 100 մ <sup>2</sup> առևտրական մակերեսին 250 մինչև 650 - 0,08 - 0,06 -"- 650 -"- 1500 - 0,06 - 0,04 -"- 1500 -"- 3500- 0,04 - 0,02 -"- 3500 -ից բարձր - 0,02 -"-	Հաշվարկի նորմերն ընդգրկում են առևտրակենցաղային սպասարկման կազմակերպությունների ամբողջ ցանցը, անկախ դրանց պատկանելիությունից, և սահմանված կարգով ենթակա են ճշտման: Ինժեներական համակարգերով և հաղորդակցություններով կազմակերպությունների ինքնավար ապահովման դեպքում, ինչպես նաև դրանց տարածքում օժանդակ շենքերի և կառույցների տեղամասի մակերեսը կարող է մեծացվել մինչև 50%:

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը		Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	2) Շուկայական համալիրներ, 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> առևտրական մակերես	24-40(*)		Շուկայական համալիրի 7 -ից մինչև 14 մ <sup>2</sup> առևտրական մակերես, կախված տարողությունից՝ 14 մ <sup>2</sup> , մինչև 600 մ <sup>2</sup> առևտրական մակերեսի ժամանակ՝ 7 մ <sup>2</sup> -3000 մ <sup>2</sup> – ուց բարձր	
	3) Հասարակական սննդի կազմակերպություններ, 1 հազար մարդուն տեղ	40 (8)	40	Տեղերի թվի ժամանակ, 100 տեղին հա. մինչև 50 - 0,2-0,25 50 բարձր մինչև 150 - 0,2-0,15 150 -ից բարձր - 0,1	Զբոսաշրջության քաղաք-առողջավայրերում և քաղաք-կենտրոններում հասարակական սննդի ցանցի հաշվարկն անհրաժեշտ է կատարել՝ հաշվի առնելով ժամանակավոր բնակչությունը. 1 հազ. մարդուն բուժական առողջավայրերում՝ մինչև 90 տեղ, կլիմայական առողջավայրերում մինչև 120 տեղ:
	4) Խոհարարական խանութներ, 1 հազ. մարդուն մ <sup>2</sup> առևտրական մակերես	6 (3)	-		
	5) Կենցաղային սպասարկման կազմակերպություն, 1 հազ. մարդուն աշխատանքային տեղ  ա. այդ թվում՝ բնակչության անմիջական սպասարկում	9 (2,0)  5 (2)	7  4	10 աշխատանքային տեղին կազմակերպության հզորության համար, աշխատանքային տեղ՝ 0,1-0,2 հա - 10-50, 0,05-0,08 հա - 50-150, 0,03-0,04 հա - 150 -ից բարձր:	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը		Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	6) Պատվերների կենտրոնացված կատարման արտադրական կազմակերպություններ, օբյեկտ	4	3	0,5 - 12 հա	
	7) Կոմունալ սպասարկման կազմակերպություններ, ա. Լվացքատներ, 1 հազ. մարդուն հերթում կգ սպիտակեղեն, այդ թվում՝ բ. ինքնասպասարկման լվացքատներ, օբյեկտ գ. գործարանային տիպի լվացքատներ, օբյեկտ	120 (10)	60		
	բ. ինքնասպասարկման լվացքատներ, օբյեկտ	10 (10)	20	օբյեկտին 0,1-0,2 հա	
	գ. գործարանային տիպի լվացքատներ, օբյեկտ	110	40	օբյեկտին 0,5-1.0 հա	
	8) Քիմնաքրում, 1 հազ. մարդուն հերթում կգ իրեր, այդ թվում՝ ա. քիմիական ինքնասպասարկում, օբյեկտ բ. ֆաբրիկա-քիմնաքրում, օբյեկտ	11,4 (4,0)	3,5		
	ա. քիմիական ինքնասպասարկում, օբյեկտ	4,0 (4,0)	1,2	"- 0,1-0,2 հա	
	բ. ֆաբրիկա-քիմնաքրում, օբյեկտ	7,4	2,3	"- 0,5-1,հա	
	9) Բաղնիքներ, 1 հազար մարդուն տեղ	5	7	"- 0,2-0,4 հա	
	10) Փակագծերում բերված են տեղական նշանակության հաստատությունների հաշվարկի նորմերը, որոնք համապատասխանում են միկրոշրջաններում և բնակելի շրջաններում սպասարկման համակարգի կազմակերպմանը				
	11) * Ընդունել կլիմայական պայմաններից և տարածաշրջանային առանձնահատկություններից ելնելով: Առավելագույն ցուցանիշն ընդունել IV կլիմայական շրջանի համար: Շուրջտարյա և սեզոնային գործող առևտրի մակերեսների հարաբերակցությունը սահմանվում է նախագծային առաջադրանքով:				

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
5.	<b>Կառավարման կազմակերպություններ և հիմնարկներ, նախագծային կազմակերպություններ, վարկաֆինանսական հիմնարկներ և կապի կազմակերպություններ</b>			
	12) Կապի բաժանմունք, օբյեկտ	Կապի բաժանմունքների, խոշորացված առաքող կապի բաժանմունքների (ԽԱԿԲ), կապի հանգույցների, փոստատների, մամուլի գործակալությունների, հեռագրերի, միջքաղաքային, քաղաքային և գյուղական հեռախոսակայանների, ռադիոհաղորդման և հեռուստատեսության օբյեկտների լարային հաղորդման կայանների, դրանց խմբերի հզորությունը (տարողությունը) և դրանց համար անհրաժեշտ հողամասերի չափերն անհրաժեշտ է ընդունել ըստ Տրանսպորտի և կապի նախարարության սահմանած նորմերի և կանոնների:	Միկրոշրջանի, բնակելի շրջանի կապի բաժանմունք, հա, սպասարկվող բնակչության խմբի համար, IV-V (մինչև 9 հազ.մարդ) – 0,07- 0,08 III-IV ( 9 - 18 -"- ) - 0,09-1,0 II-III (20 - 25 -"- ) - 0,11-0,12 Ավանի գյուղական բնակավայրի սպասարկման համար խմբի կապի բաժանմունք, V-VII (0,5-2 հազ.մարդ) – 0,3-0,35 III-IV (2 - 6 -"- ) - 0,4-0,45	
	13) Բանկի բաժանմունք, գործառույթների դրամարկը	10-30 հազ. մարդուն 1 գործառույթյան դրամարկը	Օբյեկտին հա. 0,2 - գործառույթյան երկու դրամարկի ժամանակ, 0,5 - գործառույթյան 7 դրամարկի ժամանակ:	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	14) ՀՀ բանկի բաժանմունքներ և մասնաճյուղեր, գործառնությունների տեղ՝  ա. քաղաքներում  բ. գյուղական բնակավայրերում	2-3 հազ. մարդուն 1 գործառության տեղ (պատուհան)  1-2 հազ. մարդուն 1 գործառության տեղ (պատուհան)	0,05 - երեք գործառության տեղերի ժամանակ  0,4 - 20 -"-	
	15) Կառավարման կազմակերպություններ և հիմնարկներ, օբյեկտ	Ըստ նախագծման առաջադրանքի	Շենքի հարկայնությունից կախված, 1 աշխատակցին՝ 44-18,5 մ <sup>2</sup> 3-5 հարկայնության դեպքում, 13,5-11 -"- 9-12 -"- 10,5 -"- 16 և ավելի հարկայնության դեպքում,  Մարզային քաղաքային տեղական կառավարման մարմիններ, 1 աշխատակցին՝ 54-30 մ <sup>2</sup> 3-5 հարկայնության դեպքում, 13-12 -"- 9-12 -"- 11 -"- 16 և ավելի հարկայնության դեպքում,  Գյուղական տեղական ինքնակառավարման մարմիններ, 1 աշխատակցին 60-40 մ <sup>2</sup> 2-3 հարկայնության դեպքում,	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	16) Նախագծային կազմակերպություններ, կոնստրուկտորական բյուրոներ, օբյեկտ	Ըստ նախագծման առաջադրանքի	Շենքի հարկայնությունից կախված, 1 աշխատակցին 30-15 մ <sup>2</sup> 2-5 հարկայնության դեպքում, 95-85' -"- 9-12 -"- 7' -"- 16 և ավելի հարկայնության դեպքում,	
	17) Շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, աշխատանքային տեղ	30 հազ. մարդուն 1 դատավոր	օբյեկտին 0,15 հա - մեկ դատավորի դեպքում, -"- 0,4 -"- 5 -"- -"- 0,3 -"- 10 -"- -"- 0,5 -"- 25 -"-	
	18) Մարզային դատարան, աշխատանքային տեղ	Մարզի 60 հազար բնակչին դատարանի 1 անդամ		
	19) Իրավաբանական կոնսուլտացիաներ, աշխատանքային տեղ	10 հազ. բնակչին 1 իրավաբան-փաստաբան		
	20) Նոտարական գրասենյակ, աշխատանքային տեղ	30 հազ. բնակչին 1 նոտար		
<b>6. Բնակելի-կոմունալ տնտեսության հիմնարկներ</b>				
	1) Բնակելի շահագործման կազմակերպություններ, օբյեկտ			
	ա. միկրոշրջանի	Մինչև 20 հազ. բնակչություն ունեցող միկրոշրջանին 1 օբյեկտ	Օբյեկտին 0,3 հա	
	բ.բնակելի շրջանի	Մինչև 80 հազ. բնակչություն ունեցող բնակելի շրջանին 1 օբյեկտ	-"- 1 հա	

1-ին աղյուսակի շարունակությունը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	2)Երկրորդական հումքի ընդունման կետ	Մինչև 20 հազ. բնակչություն ունեցող միկրոշրջանին 1 օբյեկտ	-"- 0,01 հա	
	3)Հրշեջ կայան, քաղաքի կամ այլ բնակավայրի բնակչության թվի ժամանակ, հրշեջ ավտոմեքենա մինչև 1 հազ.մարդ  1-ից մինչև 7 հազ. մարդ 8 -"-20-" 21 -"-50-" 51 -"- 100 -" 101 -"- 200 -" 201 -"-500 -" 501 -"- 1000 -" 1001 -"- 2000 -" 2001 և ավելի հազ. մարդ	1  2 4 հազ. մարդուն 1 5 -"- 1 6,5 -"- 1 7 -"- 1 8 -"-1 10 -"- 1 16 -"- 1 20 -"- 1	Օբյեկտին 0,3-0,6 հա  -"- 0,3-0,6 -" -"- 0,6-1,0 -" -"- 0,8-1,2 -" -"- 0,9-1,75 -" -"- 0,9-1,75 -" -"- 0,9-2,2 -" -"- 0,9-2,2 -"	
4)Նկատի են առնված ավտոցիստեռները և ավտոպոմպերը (պահեստայինները ներառյալ): Հատուկ ավտոմեքենաները (ավտոաստիճանները) նորմավորվում են գերատեսչական ակտերով: Հրշեջ կայանի սպասարկման շառավիղը անհրաժեշտ է ընդունել 3 կմ:				
	5)Հյուրանոցներ, 1 հազ. մարդուն տեղ	6	Հյուրանոցում տեղերի թվի ժամանակ, 1 տեղին մ <sup>2</sup> ՝ 25-ից բարձր մինչև 100-55 100 -"- 500- 30 500 -"- 1000-20 1000 -"- 2000-15	
	6)Հասարակական սանհանգույցներ	1 հազ. մարդուն 1 սարք		

1-ին աղյուսակի ավարտը

Հ/Հ	Հիմնարկներ, շինություններ, չափման միավորը	Թիվը	Հողամասերի չափերը	Լրացուցիչ պայմաններ
	7)Թաղման ծառայության բյուրո	0,5-1 մլն մարդուն 1 օբյեկտ		
	8)Ազո տուն	-"		
	9)Ավանդական թաղման գերեզմանատուն		1 հազ. մարդուն 0,24 հա	Թաղման համար հատկացվող հողամասերի չափերը թույլատրվում է ճշտել՝ կախված ավանդական թաղման գերեզմանատների և դիակիզումից հետո թաղման գերեզմանոցների հարաբերությունից, ելնելով տեղական պայմաններից
	10)Դիակիզումից հետո թաղման գերեզմանատուն		1 հազ. մարդուն 0,02 հա	